խիցէ նա, վն այն իբրև եկն ՚ի դրունս
քաղաքին, և եգիտ զայնս փակեալ, ըս-
կսաւ գաղտագողի ընթանալ ընդ փողոցս,
և խնդրէր զտեղի թագաւորին ։ Եւ ահա
ետես բաց զդուռն եկեղեցւոյ միոյ. և
այն էր եկեղեցի նր ածածկին, և եմուտ
իակոյն ՚ի նեղութ. զի գիտէր, թէ որ փախ-
չէ յեկեղեցիս, ոչ լինի կալեալ. և դնաց-
եալ կայր առաջի խորանի սիրամօրն ։
Ընդ իբրև ՚ի վեր էառ զաչսն, և ետես
զՔրիստոս անդ աշարժ պատկեր սիրամօր նր
կուսին, լուսաւորեալ ՚ի նմանէ ևին ՚ի զըղ-
ջումն անօրէնութէն իւրոյ. և սկսաւ լալ
դառնապէս. և ցանկայր մկրտիլ և լի-
նիլ քրիստոնեայ ։ Եւ ՚ի այն յոյժամ եկին
անդր սպասաւորք դատաւորացն կալնուլ
զնա, և տանիլ առ դատաւորսն, ասե-
ցին. տուք ինձ սալամ եղբարք փոքր մի
ժամանակ, մինչև մկրտեալ եղիցի քրիս-
տոնեայ. և ապա Հանէք զիս առտի և տա-
րէք ՚ի սպանանել. քայց ծանիք, զի զայս
ոչ եթէ խնդրեմ ՚ի պարելոյ ՚ի մահուա-
նէ, քանզի լիոյն, քանզի արժանի եմ ես այնմ
վն անօրէնութէն իմոյ, այլ խնդրեմ, զի
մի՛ հոգեայցէ ընդ անհատատ հրեայս ։ Եւ նոքա
լուեալ աղաչանաց նր, եառուն նմա ժամա-
նակ մինչև մկրտեցաւ անդ ՚ի քահանայէ
միոջէ.

միոջէ . և սպա կալեալ տարան արկին ՚ի
բանտ առ ՚ի տպատանել ՚ի յետագայ ա-
ւուրն ըստ վճռոյ դատաւորացն : Որդ՝ յայսմ
միջոցի մայր մեռեալ երեխային լայր ՚ի
տանն անդադար , և ասէր առ ամենեսեան
կոյս այսպէս . գիտեմ ով՝ եթէ կոյս ես ծա-
ծին , որ զառակս իմ՝ այս՝ կայ մնհու տա-
րածեալ միայն վն այսորիկ , զի էր մկրտ-
եալ . սպա քեզ անկ է ողորմիլ նմա և
կեանս տալ : Ո այս ասէր և լայր դառ-
նապէս , և խնդր Թէ բանադատեալ կաւէր
զնեզ կոյսն : Իսկ ամենասեր կոյսն պատաս-
խանեալ յարտասուս նմ , և խնդր Թէ յաղթ-
եալ ՚ի բանից նր , հնարհեաց նմա զայն՝ ո-
րով ցանկայրն . վնդն սհա յարեաւ է-
րեխայն ՚ի մեռելոց , և սկսաւ հայել յի-
րեսս մօրն , և ողջագակել ընդ սովորութնէ
երեխայից : Ուրախացեալ մայրն հսա զոր-
դին ՚ի գիրկան , և ոչ դադարեր ՚ի համ-
բուրելոյ զնա . և հայէր ՚ի պարանոց նր .
ուր հսես մնացեալ միայն փոքրիկ սպի խմն
վիրայ ՚ի նշան հրաշիցն : Իսկ մինչ այս-
պէս ուրախանայր , լուր հսաւ , Թէ այր
իւր մկրտեալ՝ լեալ է քրիստոնեայ , և է
՚ի բանտին . ուսաի փութ այեալ՝ հսաւ զոր-
դին ՚ի գիրկան , և գնաց անդր առ՚ի տե-
սանել զնա , և ուրախանալ՚ի միասին վն
յարուԹնէ որդւոյն իւրեանց ՚ի մեռելոց .
և վն լինելոյն նր քրիստոնեայ : Հսաւ
լուր յարուԹնէ երեխային և դարձի Հրէին
՚ի քրիստոնէական հաւատ , յսկանջս դա-

տաւորաց. և նոյ օրինակ անչիշտարու-
թիւ առեալ յամենայնէ կենդանեաց, արարին
խորհուրդ, և հանեալ ի բանտէն զնորա-
հաւատ հրէայն, թողին ազատ: Իսկ նոր
զերծեալ ի մահուանէ, դարձաւ ընդ կը-
նոջն ի տուն, և կային երկոքինն և ա-
ծաւ սրբուհի առաքինի վայելուց յօրինակ
ամենեցուն մինչև յօր մահուն իւրեանց:

Պատմ:

Որպէս այս հրէայ կին ի մահաբեր եր-
կունս իւր լսելով խրատու քրիստոնեայ
կնոջ, դիմեաց առ ամենանոր կոյսն, և
ընկալաւ զայնսպիսի հիանալի շնորհս ի
նմանէ, այսպէս և մեք եթէ հնազանդեա-
ցուք ձայնի բարի խրատատուաց մերոց,
ժամանեմք առ բարութեան. և լինիմք և-
եղբարք քի. մինչ հնազանդութենէն առ-
նէ զմարդն եղբայր քի, ոչ ինքն վկայէ
ասելով. Որ արասցէ կամս հօր իմոյ որ յերկինս է,
նա է իմ եղբայր, և քոյր, և մայր: Այս առնու և
այնպիսին յոյժ, զոր ինչ և խնդրէ. զի ա-
նէ մեծն գրիգոր. Եթէ հնազանդեցի ա-
նաչառութեան տուր, հնազանդեսցի ած աղաչիդ տուր:

Լինն ամն ՚ի ՚ի ելս , յառաջ ՚ի ՚ի ելելոյ ՚ի ՚ի ջնոր-
դումն ամենայն Հուսին , և խոստովան-
եալ զնեղն՝ դարձեալ ՚ի ՚ի ուանի ։

ՅՐԱՀՈՎ ԽՈՐ։

Ջոր այսոցիկ կարգադնեայ ՚ի վերջին գիրս հրաշից ՚ի ՚ի ծնանելն ։ յօդ ։ 22 ։ Եւ հայրն աղէքսանդրոս գիտուակեան ։ հատոր ։ գ ։ հատ ։ 13 ։ Եւ հայրն սիղվանոս կամարգուկեցին ՚ի ՚ի ։ գիրս հրաշից ՚ի ՚ի հուսին ։ հրաշք ։ 34 ։

Յաշխարհին գաղղիոյ ՚ի սահմանս քաղաքին լինդոնայ էր արուեստի կին ոմն , որ կայր միշտ յաղօթս և ՚ի պահս , և առնէր ողորմութիւն , և զայլ բարի կրթութիւնս քրիստոնէի՝ մինչև յամուսնանալոյն կարգի գոլով յանձին քերերը զվարս կրօհատորի ։ Այլ ոմանք զայս մեծ պակասութիւն , զի գործեալ էր ՚ի մանկութենէ իւրմէ զվերջ լինն ծանր ։ և սկսան խոստովանիլ զայն , որով յամ բարւոյն իւր եղծեալ կայրին ։ որպէս սովինու հիւթք ապականեալք ՚ի կայլակի խմբոյ թուհոյ ։ Այսյամ խոստովանութիւնս իւր բազմեալ ՚ի խղճի մտացն , ՚ի վերջին խոստովանուեն սակս այսպէս ։ զղջամ Հայր ՚ոք յամ մեղացս՝ զորս սասցի , և զորս ոչ սասցի ։ և ինդրեմ յայ և ՚ի քէն զթողութիւն վս այսոցիկ ։ Ա՛յսպէս սակս միշտ , և հստաչէրը և լայր ։ և

ոչ համարձակեր խոստովանիլ զայն մեղքն. և հաւատայր Թէ սովիմբ արդարանայ ի մեղացն. Այլ՝ խոստովանահայրն՝ որ եր այր ծեր և լոյժ հմուտ պաշտամանն իրում, տեսանելով զկինն քաղցր անգամ այսու կերպիւ վերջացուցանել զխոստովանութիւնն, գնայ ի կասկածանս Թէ գուցէ ունկիցի զմեղք ինչ ծածուկ, զոր ոչ համարձակի յայտնել. Այլ այն յաւուր միում եբայց նմա զկասկածանս իւր, և յորդորեցոյց զնա չամաչել ի խոստովանիլ՝ եԹէ ունկիցի զմեղք ինն ծածուկ. բայց նա ուրացաւ Թէ չիք այդպիսի ինչ Հայր. Այլ՝ ահաբեկոյց զնա առ այլ ամն խոստովանահայր կոհէմ, և նոր. որ և էր առաջնորդ կոչնեցոյ վանացն. զի գուցէ բայցէ նմա զծածուկս իւր. սակայն և ոչ նմա համարձակեցաւ խոստովանիլ զայն մեղք. Այլ զի հանապազ խիղճմըտայն տանջէր զնա, ուստի քանիցս Թէ ի տանն և Թէ յեկեղեցիս տեսանէր զպատկեր ամենանոք կուսին, անկանէր առաջի նր ի վէր երեսաց, և լալով խոստովանէր նմա զայն իւր մեղքն. և աղաչէր՝ զի ընկալցի զԹողուԹիւն վն այսորիկ յածծորդեանն իւրմէ. Այսպէս հաւատալով գտանել զԹողուԹիւն եկայ միայ մինչև ցայսմ ի խոստովանեանէ իւրում. Այս զկինի քաղցր ամայ հիւանդացաւ, և մեռաւ՝ ընդունելով զվերջին խորհուրդն եկեղեցւոյ. և համարեալ լինէր յամենայնումն

ցուցոյ կին նը և արդար : Այլ եղեալ ըզմարմինն ի գագաւն՝ տարան յեկեղեցին առ ի թաղել . բայց ոչ իակոյն թաղեցին , այլ սպասէին ժամանել միոյ ի գտեալսն նը , որ բնակեր հեռի ուրեք : Որդ՝ ընդ բաժանիլ հոգւոյն ի մարմնոյն՝ յարձակեցան գևք ի վը նը , և կապել հզօր շղթայիւք , կացուցին յատեանն քի , և սկսան ամբաստանն լինել վն այնչափ սրբապիղծ խոստովանութեանց և հաղորդեալ նը արարելոյ պատճառաւ թագուցանելոյն զայն մի մեղքն . և ասէին , իբրեւ թէպէտ գաղտ բարիս և գործեալ ի կեանս իւր , սակայն առնելով զայնս ի մեղս , և մեռանելով ի նմին , մեր է ըստ իրաւանց : Այլ հրեշտակ նը պահապան չկարծոյ տալ պատասխանի ինչ դիւոյ . և քն պատրաստութիւր տալ զվճիռ դատապարտութեն նը : Այլ զի կայր անդ բազմեալ ըստ սիմէ գաւտարին առնաձեռ մայր նը , գարձաւ ողորմելի հոգին այն առնս , և ասէ . ա՛լ կոյս ամենագթած ողորմեա՛ ինձ տառապելոյս , զի ոչ ունիմ՝ զայլ յոյս բայ ի քէն . արդարև ոչ եմ արժանի թողութեն , բայց յիշեա՛ թէ քանիցս անգամ առաջի պատկերի քոյ խոստովանեցայ ըզմեղս իմ արտասուօք հանդերձ . ուրեմն զայն ողորմութի , զոր բազում անգամ խնդրեցի ի քէն , մի՛ զանար յինէն յայսմ վայրկենի , յորում կախեալ կայ յաւիտենական փրկուէն : Կթացեալ ամենաձեր

կուսին յաղագանս նը , զայրագին աչօք Հայեցեալ ՚ի դևսն , սատեաց նմ՚ վն յան- դգնութեն իւրեանց . և ապա հրաման ետ լուծանել զնա ՚ի կապանացն . և Թողուլ աղատ . մինչև հատցի զնմանե վհրեն . և նը՛ արարին վաղվաղակի , զոր հրամայեացն . Իսկ նը՛ ածածինն դարձեալ առ քն , ասե , խնդրեմ ՚ի քէն որպեսզի իմ, զի Թողցես վն իմ զմեղս ջերմեռանդիս իմոյ այսորիկ . և մի դատապարտեացես զսա ՚ի դժոխս . որովհետև ելաց վն այնր գաղտ- նի մեղաց իւրոյ առաջի իմ բազում ան- գամ : Իսկ քն ասե . գիտես մայր իմ սի- րելի , զի ըստ որում հաստատեալ սահ- մանեցի յերկեղեացդ իմոմ , ոչ զը՛ որ մե- ղաս կարէ հասանիլ փրկութեն առանց խոստովանութեն . . Իսկ սա այնպիսի ոմն է , ապա ըստ արդարութեն իմոյ ոչ կա- րեմ ոչընչորիլ զմա . բայց զի ոչ կարեմ Եաև չանսալ աղաչանաց քոց , ապա ու- րեմն այսպես վճռեմ այժմ , զի զարձ- սի հոգի զորա ՚ի մարմին իւր , և կենդա- նացեալ խոստովանեսցի քահանային զմեղս իւր ղղջմամբ հանդերձ , և սովիմբ գոյէ զողորմութե իմ : Յայսպես վճռեաց քն . և հրամայեաց պահապան հրեշտակին նորա առանիլ վերստին զհոգին ՚ի մարմինն , զի անպրէն դարձցի ՚ի կեանս : Յորժ՛ ժամանեալ հեռաքնակ դատերն , և մտեալ յե- կեղեցին , մինչ դառն արտասուէօք լայր ՚ի վերայ դիոյ մօր իւրոյ , ահա յանկար-

ծա-

ծակի իբրև ի խոր քնոյ յարեաւ մեռ-
եալն . եբաց զաչսն , հառաչեաց ի խորոց
սրտէ , և նստեալ ի դագաղանն ասէ , մի
լար զիս տէր իմ , զիհաց յարեայ ի կեանս ։
Օ որ իբրև եռես դուստրն և որք շուրջն
կային՝ զարհուրեցան , և սկսան փախչել ։
քայց նա կոչեաց զնա և ասէ . դարձիք և
մի երկնչիք . և փութով ածէք այսր ա-
զաչեմ զբահանայ մի ։ Եւ նոքա նոյնժա-
մայն բերին . և սկսաւ խոստովանիլ նմա
Թէ զայն մեղքն՝ զորմէ ամենեքին խոստո-
վանիլ , և Թէ զայլ մեղս անվաւերխոս-
տովանութեան , և զաստապարտելի հաղոր-
դեցոյն . մինչև ցժամանակն վերջին Թո-
շակին եւս ։ Եւ մինչ նա զխոստովանու-
Թինն առնէր , տարածեցաւ ընդ քաղաքն
համբաւն յառնելոյ նմ ի մեռելոց . և
կուտեցաւ անդ քաղաքն ամ՛ առ ի տեսա-
նել զնա ։ Եւ իբրև վճարեաց զխոստո-
վանուԹիւն և ընկալաւ զարձակումն , սկսաւ
ի ձայն բարձր ի գագաղայ անտի իբր ի
յամպիսանէ պատմել ամ՛ ժողովրդեանն ըզ-
հնարսն՝ զոր ընկալաւ ի նմանէ միջնորդու-
Թէ ամենանոր կուսին՝ զառնալոյ անդրէն
ի կեանս առ ի խոստովանիլ լիապէս ։ Եւ
ապա ասէ , այժմ ժամանակ է ինձ դառ-
նալ անդրէն՝ ուստի եկի , առ ի ընդու-
նիլ զվերջին վճիռն ի քենէ . և միշտ փա-
ռաւորել ի յերկինս զբ սբնոյն զմեծ ողոր-
մուԹիւն , և զամենեսեան մեր նոր , որք հա-
նիմն գնա ի դրանց դժոխոց ։ Օ այս ասաց-
եալ՝

եալ՝ կնքեաց զինքն նշանաւ սքի խաչին. և եդ զդէւսին ի մէջ դաշտացոյն, և աւանդեաց զհոգին երջանկաբար։

Պատուէր

Յայսմիկ պատմուէ յայտնապէս տեսանեմք, թէ որչափ մեծ է իշխանութիւնն ամենայնի կուսին յարքայութիւնն քի տուեալ նմի յոյ. մինչդեռ կարող եղև տնօրինել զայն անտնօրինելի վճիռն այ, զորմէ ասէ առաքեալն. Ով ոյք գիտիցէ զմտս տեառն, և կամ ով եղև խորհրդական նորա։ Վասն ի վեր այնր բանի արուարձէս Թագաւորին, զոր աւսայ ցեսցեր. խնդրեաւ չինեն, և տայ քեզ մինչև ցկէս Թագաւորութե իմոյ, ասէ սքէն Թովմաս. Թագաւորութիւնն չէ որոշի չերկուս, այլ ինչն ի նագիաւորութիւնէ արդարութիւնէ, և ի նագիաւորութիւնէ ողորմութիւնէ. արդ՝ գաղաջինն ունի չա. և աչերկրորդն եա մօր երուսա. և որպէս չա կոչի նագիաւոր արդարութիւնէ, այսպէս և մայր երկի՝ մայր և նագիաւորի ողորմութիւնէ։

Ընբեհայ ոմն ծնաւ Ներեալ. և ապա պինի ձե
առուրդ յարեաւ ոտանէլէօտ ամենաձե հոս-
պին, և մղոխալ՝ անդրբին Ներաւս:

ՅՈՒՐ. ԽԱ.

Զոր պատմէ յուստոս լևպտեանն ի գիրս իւր՝ որ զոր
ծածանենհալայոս: Եւ հայրն աղէքսանդրոս պես-
տալեան. հատոր. Ֆ. Ճաս. 24:

Յամի փրկչին. 1428. յաշխարհին գազ-
ղիոյ՝ յաւանի սէյն հիլաբիսի մօտ
կամերակոն քաղաքին, կին ոմն անուն
փերմինե ծնաւ յոյժ տաժանելի երկամբք
զորդի մի մեռեալ. զոր և Թաղեցին յան-
կեան միւսմ ի պարտիզի տանն: Իր կինն
այս յոյժ ջերմեռանդ ամենաձե կուսին.
և յամառօտ պատմեցին զնայր ի հալէպ քա-
ղաք՝ յոսիա հրաշագործ պատկերի տիրա-
մօր նոր կուսին՝ որ անդ կայր: Ուրդ՝ յոր-
ժամ ծնաւ զորդին մեռեալ, կայր յոյժ
տրտում. մանաւանդ վն այսօրիկ, զի չե-
ղև երեխայն արժանի նոր մկրտութեե. և
գլուխ զօրն ոչ կայր. և առ՝ի մխի-
թարիլ փոքր մի՝ գիմէր աղօթիւք առ նոր
կոյսն մարիամ. որ և ոչ միայն ի հներ-
քուստ լուսաւորչէր վնա, այլև տայր նմա
տեսանել յամառօտ գիշերի իբր ի տեսլեան
զոլ կենդանի զծնեալ և զթաղեալ զոր-
դին իւր. և այս տեսեալ աւուրս հնգե-
տա-

տասան : Ասաի ի տեսլեանց աստի զօրացեալ կինն Թախանձէր զայր իւր՝ և զայրն , որք գային ի տեառնէնի՛ բանալ զգերեզմանն , ուր Թաղեցին զերեխայն . զի ասէ , յուսամ Թէ շնորհօք աճեսնաքզ կուսին կենդանի իցէ որդեակն իմ. որովհետև այսպես սխեԹաբէ զնա ըզ կոյսն : Ահա նք ծաղը առնէին զնա , և ոչ անասային բանիցն . սակայն ի վախճանի սահիպեալք ի Թախանձանացն նի՛ գնացին ի պարտէզն , և հանդարտաբար բրեին զՀողն , ուր Թաղեալ կայր երեխայն : Այս իբրև կանգնաեաւ չափ բրեցին զՀողն , երևեցան նախ ոտք երեխային , և ապա բոլոր մարմինն , որ ոչ միայն մնացեալ էր անփուտ և առանց նեխուԹե՛ , այլև կայր կենդանի և կարմրափայլ գիմօք ընչեր քաղցրաբար , և շարժէր զշրԹունան , և տարուբերէր զոտս և զձեռան : Որ իբրև տեսին , ընդարմացեալք ապուշ մնացին , և զուէին , հրաշք է , հրաշք է : Այս այս իրաւացի . քանզի եԹէ աքանչելիքն յարուցե՛ զաղաղու յետ չորից աւուրց հիացցեալ զբոլոր հրէաստան , ապա ևրչափ հիանալի հրաշք էր տեսանել յարուցեալ ի կեանս զերեխայ մի , որ ծնաւ մեռե՛ ի մրջին , և աւուրս հնգետասան ընկղմեալ Հողով Թաղեալ : Այսպա առե՛ զերեխայն ի գիրկ՝ տարան առ մայրն՝ որ դեռ ի զգուշանե՛ ծննդեանն էր . և աներևոյթ ի մի բանի օրհնեին զնա , և զհրաշագործ մայրն

նր վն այնպիսի մեծ սքանչելեաց։ Եւ ապա
խորհուրդ արարին ոչ սկրտել զերեխայն՝ ի
նմին աւանի. այլ տանիլ զնա յեկեղեցին
եր ձեծաձնին՝ որ՝ ի բերտենկվեր. Հեռի յա-
ւանէ անտի մլհնս երկու. և անդ սկր-
տել զնա՝ ի յիշատակ սքանչելեացն եր
ձեծաձնին։ Եւայց քանզի փոքր մի յամ
ջարժեցան ելանել՝ ի Հանապարհ, և եր
նաև քաղմունի յոյժ կանանց՝ որք և հան-
գարտ ընթանային, վն այն երբև ժամա-
նեցին յեկեղեցին, ոչ գտին անդ զքա-
հանայն. զի գնացեալ էր՝ ի մերձակայ
գղեակ մինչ հրաւիրեալ՝ ի Հաշ, ի վերակա-
ցոմէ գղեկին։ Եւստի ստիպեցան երթալ
անդր առ՝ ի կոչել զքահանայն. քայց նաև
անդ գտին փակեալ զդուռն պարսպի գղե-
կին. ուստի բաղմեցին զդուռն, և ոչ
ոք էր որ քանայր, զի ամենեքեան գնա-
եալ էին՝ ի Հաշ։ Եւայց ահա երևեցաւ
երկրորդ սքանչելիքն ամենանձ կուսին,
զի ինքնին բացաւ գուռն, և եմուտ ամ
քաղմութիւնն այն՝ ի ներքս։ Գնացին ան-
տի՝ ի յերկրորդ դուռն երկրորդ պարսպի
գղեկին, և զայն ևս գտին փակեալ. քայց
նաև անդ ինքնին բացաւ դուռն, և մտ-
ան՝ ի ներքս։ Գնացին և յերրորդ դուռն
երրորդ պարսպին, և այն ևս որ փակեալ
էր՝ ինքնին բացաւ. և մտին՝ ի ներքս՝ ի
գղեակն. և դրունքն ոչ ինքնին բացան,
նոյնպէս և ինքնին փակեցան մինչդեռ նո-
քա՝ ի ներքս էին։ Եւ ապա գնացին՝ ի
պա-

պալատն վերակացուին. և մտեալ ի ներքս,
ելին ըստ սահմանացն ի վեր ի սրահն մեծ,
ուր քահանայն և վերակացուն ձայնէին։
Օ՛որպս իբրև ետես վերակացուն, զար-
կացաւ յոյժ ի վեր դռնապանի դղեկին՝ որ
անդ սպասաւորէր նմ, թէ ընդէր ի բաց
բացեալ զդրունսն առանց հրամանի, և
ընկալեալ ի ներքս ի դղեակն զայնպիսի
բազմութիւն. և սուր հանեալ խնդրէր առ-
նուլ ի նմանէ զվրէժ։ Դռնապանն
երդմամբ հաստատեր, թէ նախ քան զգ-
ձայն փակեցի զնա դրունս. և վկայ բե-
րեր զդռնապետ վերակացուին, որ անդ
ներկայ էր ի փակել նորա զդրունսն։
Ապա հիացեալ վերակացուին էհարց ցե-
կեալսն, թէ որպէս մտիք ի ներքս դր-
բօքն փակելովք, և թէ զինչ խնդրէք։
Սակ նոքա ասեն, աքանչելեօք ամենա-
սուրբ կուսին ինքնին բացան դրունք դղե-
կիս, և մտաք ի ներքս. և սկսան կար-
գաւ պատմել զնմ՝ աքանչելիս նր, և թէ
որպէս յարոյց զերեխայն ի կեանս, զի մի
ծնողացն առանց միրուելոյ։ Օ՛այս աքան-
չելիս իբրև լուաւ քահանայն, հիացաւ
յոյժ. և յարեաւ նոյնժամայն ի սեղա-
նոյն Թողլով անկատար զձայնն. և ըստ նմա
յարեաւ նաև վերակացուն հանդերձ ընդ-
սանեօքն, և ընկերակցեալ ըստ եկեալսն
ելին ի պալատին երթալ յեկեղեցին նր
ածածնին արտաքոյ դղեկին. և մկրտել
անդ զերեխայն։ Այլ ահաւասիկ եր-

թորդ աքանչելիքն ամենայնք կուսին, զի մինչ ասպակին դռնապանին զալ և բանալ զդրունսն զվեհկին, տեսին զի ինքնին բացան դրունքն. ըստ որ հիասթէ վերակացուին, կնքեր զինքն նշանաւ խաչին. և հաւատացեալ ամենքին աքանչելեացն։ Ապա եղեալ ի գվեհկէն գնացին յեկեղեցին ձոր ուխտաւորն. և մկրտեաց քահանայն անդ զերեխայն փութանակի՝ զի տեսանէին հոսել ըստ ռնգուսն նր արեան. և յաչսին բազում արտասուս. և իբր հոգեվար, կղակ արկանել. այնինն չէնչ նեաել. Ապա զկնի մկրտելն ածին ժամք իբր հինգ, և սկսաւ երեխայն փոքր փոքր քրանիլ և նուաղիլ. և որպես թե էհաս վախճանին, մն որոյ յարեաւ ի կեանս՝ ի լրանալ հինգ ժամուցն՝ մեռաւ. և թաղեցին զնա ի նմին եկեղեցւոջ։ Այլ ի պատկ այսպիսի զարմանահրաշ աքանչելեացս պատահեցաւ և այս, զի ի ժամուն՝ յորում մեռաւ երեխայն, դադարեաց և կաթն ի սաեանց մօրն։

Պատմ։

Թէ նախանձայրն մեր Եւա՝ որ եղև պատճառ մահուան կենաց մարդկայինս ազգի՝ կորեցաւ կեանք, վնեղն բառս՝ Եւա, կեանք թարգմանի, ապա որչափ իրաւամբք արժան է կոչել կեանք զամենածնք կոյս, որ եղև մայր կենսատուին մերոյ Յի քի. վն այն սահ աքն եալիսան. Ես-

կա-

ֆոպէս ինոս մարիամ էնանդ ալնաբնի , պի եղիցի մայր էնդրանեայ : Այս պի Հիմարիսս կեանք շնարհքն այ է , յորմէ եղեւ զօրուկ խոչ հոգին՝ կօչի մեռեալ , և պի մայր շնոր հայ նք կոյսն է , պ՚ն այն տղայութիւք գնա , պի տայի մեղ գշնորհիւր . որով կարօղ լինօք մնալ կենդանեի Հանդերձեալ կենդանու թիւն անվախճան կենայ . ոմ եռ զայն զա ւակի մեծահատատ տիկնոջս փերմինեայ . որում՝ առնելովն գայնպիսի մեծամեծ հիա նալի հրաշս գրեցեք առայ , ով էին դոս , մեծ են հատոր ս , եղիցի չեղ որպէս և կոխ . զոր օրինակ առայ քս քանանեայն կնոջն :

Վասս չերէքսփորճե հոլէ՛ ի պողնիայ , այսինքն՝ ի լերնապան , ի տէրէի պարէրը ի ամենայն հոգ՝ այն , որ այսր կբազում ապանչ էս :

ՀՐԱՇՔ· ԽՕ·

Զոր պատմէ հայրն կամիւմպերկ՝ ի գերս իւր՝ որ գնր ձեծածնէն : Եւ հայրն գառլոս բովնեան . հատոր · բ · օրինակ · 25 :

Յամի փրկչին · 1615· յերկրի մեռմիկո չեցելոյ՝ գիւղա , ի պողանիայ , որ կ՚ի մէջ քաղաքացն կեսարիկովիայ և կրա կովայ , գիւղական ոմն անուն յովհաննէս՝ մինչ յառաւօտս միռմ հերկեր զանդ իւր , ահա գինի երկուց և երից դարճիցն՝ կա

յին ՚ի նային եղինքն արձանացեալք ՚ի տեղ-
ւոջն , ուր հերկէին , և այլ ոչ կամէին
գնալ յառաջ : Հիացաւ յոյժ երկրագործն ,
և խթէր զնոսին , գոչէր և աղաղակէր
զի ընթացցին՝ մինչև ՚ի ձայնէ աղաղակի
նր կուտեցան անդր նաև այլ գիւղա-
կանք . բայց եղինքն ոչ միայն ոչ շարժէին
՚ի տեղւոջէն իւրեանց , այլև առաջին եր-
կոքումբք ոտիւք իւրեանց ՚ի ծունկս իջին
անդ ՚ի գետնի : Ւ Ասաց երկրագործն յով-
հաննէս առաջի եղանցն տեսանել թէ զինչ
իցէ այն . և ահա տեսս , զի կայր ՚ի գետ-
նի առաջի եզանցն փոքրիկ քարեայ մատ-
նաչափ պատկեր մի ՚ի ձեռամբ նր կուսին
Ածորգւոյն ՚ի գրկին՝ գեղեցիկ յոյժ . յոր-
մէ հստանէին ճառագայթք լուսոյ . և
նոյնժամայն ծանեաւ զպատճառն ոչ շար-
ժելոյ եզանցն ՚ի տեղւոջէն իւրեանց .
Յայնժամ և ինքն ՚ի ծունկս իջեալ առա-
ջի պատկերին՝ երկիւղածացեալ՝ մնաց-
ցանելով աղօթս առ Նր և առ ամենանր
մայր նր : Ւ ապա ահիւ և գողութ ՚ի
վեր էառ ՚ի գետնոյն զպատկերն . և զայնր
աւուր զարօրադրութիւն ՚ի բաց թողեալ՝
դարձաւ ամենանր պատկերաւն փութով
՚ի տուն . և եղոյց զայն կնոջ իւրում , և
պատմեաց նմա՝ որ ինչ պատահեցաւն ինք-
եան յայնմ աւուր . և ետ նմա . և հրա-
մայեաց ունել ՚ի զգուշութիւն և ՚ի պատ-
ուի զայն պատկեր : Ւ կինն առեալ զպ-
պատկերն եդ աւուրս ինչ ՚ի պատուական

ինչ տեղւոջ տանն. առաջի որդի ինքն և այր իւր հանդերձ զաւակօք իւրեանց առնէին աղօթս. և ապա քարշեալ անտի եղ յարկեզ իւրում. և այսպէս դրեթէ վերստին Թագեայ զպատակէրն, և մոռացան զայն բոլորովին. Եւ սակայն այս գործ մոռացութեն նոյ յոյժ անհաճոյ եղև. ամենաւբ կուսին. ուստի և պատժեաց զնա կուրութեբ. վնդէ նախ այրն, և ապա կինն, և ապա զաւակբ նոյ կորուսին զտեսուեն աչաց իւրեանց. և Թէպէտ մատեան բժիշկք, և արարին բազում և զանազան դարմանս դեղոց, բայց ոչինչ օգտեցան յայնցանէ. այլ կացին մնացին 'ի կուրութեն ժամանակս ոչ սակաւս. Եւ գԹագեայ 'ի վէր նոյ կին ամն բառեսնասան 'ի դրացեացն, ծառայեր նոյ յամի, և հոգայր զպիտոյս նոցին. Եւ ըստ յետ քանի մի աւուրց՝ մինչ այս կին ծառայող նոյ եւթաց զարկն ջուր՝ յորում կայր պատակերն ամենաւբ կուսին, առնուլ ինչ անտի, եւ տես զայն մեծ ցոլացեալ երկնել յարկեզն իբրև վհուր. և զարհուրեալ՝ աղաղակեաց և ասէ, վաշ. ահա հրդեհեալ բոյակիզն արկն. Յայնժամ յիշեաց կին երկրագործին զպատակերիկն ամենաւբ կուսին, և ասէ, մի երկնչիր քոյր, զի ոչ է այդ հրդեհ հրոյ, այլ լոյս պատկերի աստուածային, զոր ես անմիտս այդր Թագուցի. և վն այսորիկ է՝ որ ամենեքեանս հարաւբ կուրութբ. արդ՝ կոչեցէք ազաչեմ փութով

զերկս

զերեց գեղջս , զի առեալ այտի տարցի յեկեղեցին , և դիպե 'ի պատուաւոր ինչ առեղծ . որալհետև ես ոչ գիտայի պատուել և փառաւորել զպատկեր մօրն այ . ոչպէս այսու Թերևս գացուք զաղօրմանէն 'ի նմանէ : Կոչեցաւ երէցն 'ի տուն . և յորժամ եհես զպատկերն և զլոյսն՝ որ գողանալոյ յայնմանէ , հիացեալ զարհուրեցաւ . և կուտեցաւ անդր նաև բազմութիւն ժողովրդոց : Իսկ ապա առեալ զպատկերն ելին 'ի Թափօր . և տարեալ յեկեղեցին , եդին 'ի փառաւոր տապանակի միւռոն : Իսկ զիւյայնմանէ լինելիցն պատճառն , վն որոյ կուրացաւ երկրպագօծն ընտանեօքն հանդերձ , նոյնժամայն իբրև հանին 'ի տանէ նոր զպատկերն , բացան աչք նոր և հնացն և զաւակայն : Եղեւ այսորիկ եղև և այլ ինն օգանելիք . զի յերկրորդումն աւուր մինչ եթայ երէցն զտապանակն առ 'ի ցուցանել և այլոց ժողովրդոց անդր գիմելոց՝ զպատկեր նոր տիրամօրն , ոչ եդիտ անդ զայն . և հիացեալ ապուշ ինաց : Նայց օրնեալ այսր և անդր 'ի մօտաւոր և 'ի հեռաւոր տեղիս , գտին զայն Թռռուցեալ և դադարեալ վերուստին 'ի նախկին տեղւօնն՝ ուր գտաւ 'ի յերկրագործէն , յորմէ և Հատանէին Ճառագայթք լուսոյ : Իսկ այնու ծանեան ամենեքեան , Թէ անդէն կամէր մայրն այ ունել զյաւուկ տեղի . և անդ փառաւորիլ 'ի հաւատացելոց : Եւսաի փութով շինեցին անդ

զեկեղեցին մի փոքրիկ ՚ի փայտից . և ե-
դեն ՚ի նմին զպատկերն զայն հրաշալի .
ուր առ յապայն արար ամենաւքբ կոյսն
զբազում սքանչելիս և զշնորհս ջերմեռան-
դից իւրոց : Որոց մինն ՚ի բազմաց եղև այս .
զի ՚ի սկզբանէ աշնոճականն ամն սնուն մար-
տինոս ագամեան՝ ամբաստանեալ անի-
րաւաբար վճռ ծանր ինչ յանցանաց՝ ար-
կաւ ՚ի բանտ , և դատապարտեցաւ՝ առ
վաղիւն մեռանիլ : Այս իբրև ոչ կարաց
ցուցանել զանմեղութիւն իւր , դիմեաց առ
ամենաւքբ կոյսն , և խոստացաւ նմա , զի
եթէ ազատեսցէ զնա ՚ի մահուանէն , շի-
նեսցէ ՚ի պատիւ այնր հրաշագործ փոքրիկ
պատկերին նր զգեղեցիկ եկեղեցի մի : Եւ
ահա ՚ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա ա-
մենաւքբ կոյսն ՚ի բանտին , և ելոյծ զշղ-
թայսն , որով կապեալ կայր . և եբայց ըզ-
դրունս բանտին , և ասէ ցնա . կատար-
եա՛ արդեաւք՝ զոր խոստացարդ ինձ , յի և
շինել ՚ի պատիւ իմ զեկեղեցին . և երթ
՚ի խաղաղութի : և զայս ասացեալ եղև
աներևոյթ : Եւ աշնոճականն իբրև զնք
առաքեաւն պետրոս անցեալ ընդ դրունս
բանտին , և քաղաքին , եկ արտաքս , և ղեր-
ծաւ ՚ի մահուանէն . և զոր խոստացաւն ,
կատարեաց . վճռէ քակեալ զառաջին փոքր
եկեղեցին այնր հրաշագործ պատկերի ,
շինեաց ընդ կարօղսնէ իւրում ՚ի փայտից
զայլ մի մեծագոյն և գեղեցիկ եկեղեցի :
Եւ յայ ժամանակաց սատնխալաւոս առ-
քինս-

քիչ սակի ՚ուր գաւառին այնորիկ չինեաց ՚ի քարանց զայն եկեղեցին, և ետ կարգել Հարցն սըջն դամինիկոսի. և այն է՝ որ մինչև ցայսօր տեսանի. ուր արար և առնէ մինչև ցայսօր ամենանըք կոյսն զքաղզամ և զմեծամեծ սքանչելիս, մինչև տալ քաղմաց յառնել ՚ի մեռելոց, ոմն ընթերցեալ լինի ՚ի ժամանակագիրս այնր եկեղեցւոյ։

Պատմ։

Որպէս տալով ՚ած զմարմնաւոր կուրսն երկրագործիս այսմիկ և ընտանեաց նր, լուսաւորեաց զնա ՚ի ներքուստ, որով ծանեան պատուել և փառաւորել զամենասուրբ կոյսն, այսպէս տալով քաղմաց զխաւարն վշտաց և ձախորդութեց, տայ նմ զլոյս Հանապհոյ զկամն իւր։ Վասն զի սակ երանելին գրիգոր. զպէս՝ զոր խնամ մեղն, բանայ նեղուկն. և մարգարէն սակ վն մեղուցեալ ժողովրդեանն իջէի. յորքամ ապանաքեր գնաց, խնդրեին գնա։ Այ զի վիշտք և նեղուկք տան մեզ զզոհիլ յերկրայնոյս, և փութացուցանեն երթալ առ ած. ոմ վկայէ նոյն սաղմոսերգուն ասելով. յաճախեցին սիրանդուկ նոցա. չեր այսորիկ ապա վաղվաղնոյին։

Ա՛հա՛ոնորդուե՛ հրաշալի՛ ցլա՛ գիւղ գոյա՛ ՚ի լերինն պաճա՛ռուկ ՚ի հղեալո՛ն ինորիկայ հրաշագործ պապիկեր մ՛ ամենայն հոռմին։

ՆՐԸ ՀԱՐ ԽՍԻ

Զոր պատմէ հայրն կոմիկեմպերկ՚ի գիրս իւր՝ որ զնբ ածածնին։ Եւ հայրն գառնայ բովիեան. հատոր՝ բ. օրինակ. 26։

Օկնի որոյ մեծն ալիմնասս Թագաւորն արագունայ Հալածեաց զմուղբիան ՚ի մինորկա կղզւոյն՝ որ կայ յանգիման ասպանիոյ, չինեցին անդ առ ոտս լերինն կոչեցեալոյ տաճրոս, (որ Թարգմանի՝ ցօղ.) գերեզման հանգըն կարգին կոչեցեալոյ վարձուց նբ ածածնին, զվանք մի. և քնակեին ՚ի նմին ոճ՛ պահպանուբ կրօնաւորական վարուց։ Ո՛րդ՝ պատուհեցաւ, զի կրօնաւոր լուսաորարն եկեղեցւոյ այնը վանայ՝ այր առաքինի և յոյժ ջերմեռանդ ամենայն կուսին, տեսանէր ՚ի պատուհանէ սենեկին իւրոյ ըզ երեկս շաբաթ աւուրց՝ ամսօրեայ ժամանակաւ վառիլ ՚ի կատար լերինն այնորիկ քաղցր մեղեդինաց յոյժ. և լսելի լինիլ ձայնի երգոյ և տաղաց և քնարից քաղցրաբարբառ հնչելոյ։ Ո՛չ կարելով իմանալ՝ Թէ զինչ էցէ այն, պատմեաց զայն մեծաւորին իւրոյ և այլոց կրօնաւորաց։ Ոլբ և ամենեքեան գընացին ընդ երեկս շաբաթ աւուրն ՚ի սենեակ

եակ ՆՐ . և տեսին և լուան զայն ամ , զոր նա տեառանէր և լսեր : Ա,ւ յետոյ խորհեցան երթալ ելանել ի կատար լերինն , և տեսա նել թէ զի՞նչ էցե այն , յորոյ պատիւ վառէլ լինէին այնչափ մոմեղէնք , և լինէին այն չափ երաժշտուխք յերկինից : Ա,պա ելեալ ա մենեքին ՚ի Թափօր՝ սաղմոսելով և երգելով երթային և ելանէին ՚ի լեառն . և ահա էլ յանկարծակի ըստ առաջ Նշ ցոլ մի մեծ և ա հագին , որ նախ ՚ի ծոմնկս իջեալ երկնէպագ արձ խուչին՝ զոր տանէին յառաջոյ Թափօրին . և ապա կանգնեալ յոտս՝ առաջնորդեր Նշ , և ցոլցանէր գլխովն զհետ երթալ նո ՚ի Լրումն հետևեալ կրօնաւորացն , գնալով գնային , և ելանէին ՚ի լեառն ըստ Ճանապարհ անկոխ և ապառաժուտ : Ա,ւ ահա ժամանեցին առ ոտս քարաժայռի կամ վի մի միոյ մեծի , ըստ որ անհնար էր անցանել : Ա,նդ ցոլն նախ զկայ էառ , և ապա էհար եղջերըքն ղվէմն ահագին , և քաժանեցաւ քարաժայռն յերկուս . և ետ Նշ Ճանապարհ ելանել ՚ի վեր : Ա,ոկ կրօնաւորքն հիացեալք և զարհուրեալք ըստ խորատուրքն հիւթեալք քարաժայռին , գնային զհետ ցլոյն , մինչև ժամանեցեալ ելին ՚ի կատար լերինն . ուր իսկոյն անհետացեալ եղև ցոլն հրաշալի : Ա,ոկ Նշ հայեցեալ այսր և անդր՝ տեսին , զի կայր անդ ՚ի քարայրի միում շինեալ ՚ի վայրի արձանեայ գեղեցիկ և ջերմեռանդ շարժ պատկեր մի տիրամօր Նշ կուսին մեր ՅիսմՈւ՝ քարձրութ Նշ երից Թ զայ . և ծանր

եան յայնժամ զպատճառն, վասն լինելին ի շաբաթ աւուրն՝ այն հրաշալի երևմունք ի յերկնից։ Այս ի ծունկս իջեալ առաջի պատկերի ամենաներ կուսին՝ մատուցին աղաչեաց և պաղատանս բազումս առնա. և յետոյ քարձեալ անտի զպատկերն, իջին ի լեռնէն. և բերեալ ի դղեակն կղզւոյն՝ եդին յեկեղեցւոջ սրբուհւոյն ագաթայ՝ ուր կամէին շինել զնոր մենաստան, և անդ քնակիլ։ Այլ զի ամենաներ կոյսն կամէր թէ անդ ի կատար լերինն շինեացի նոր եկեղեցի մի յանուն իւր, և անդ կացցէ այն պատկեր իւր, և լինի այն ուխտատեղի հաւատացելոց, թէև տաժանելի իցէ ճանապարհն ելանել անդր, վասն այսորիկ յերկրորդումն աւուր դարձաւ պատկերն այն անեղեւոյթ ձեռամբ հրեշտակաց վերստին ի տեղի առաջին ի կատար լերինն տաւրոսի։ Որ տեսեալ կրօնաւորացն և այլոց հաւատացելոց, յօժարեցան և շինեցին անդ ի կատար լերինն զդեղեցիկ եկեղեցի մի. և եդին ի նմին զայն պատկերը տիրամօրն. և ապա շինեցին առ եկեղեցեաւն նոսա զտունս ինչ քնակիլ ումանց անդ, և ծառայել ամենաներ կուսին. և եղև այն մինչև յայսօր ուխտատեղի հաւատացելոց. ուր և ընկալան զբաղում ձիրս ի մօրէն ընդ որհնեալ յամենաներ կուսէն. զորոց դրեցաք զումանս ի բազմայ։ Ստաւ երբեմն ի ծովուն մտացեր կղզւոյ ի մեծի ալեկոծութեն մերձ

ի յերկն-

'ի յընկղմիլ՝ նաւ մի սպանիացւոյ լի ա-
րամբք և կանամբք . յորում կայր նաև
կին մի հագարացի : Եւ դիմեցին ամե-
նեքին յօգնութիւն ամենանոքա կուսին՝ խոս-
տանալով առաքել զմին 'ի յինքեանց անդր
'ի դլուխ լերինն առ ոտս պատկերի նո՛ր
կառուցել 'ի գիմաց ամենեցուն զուխտ
իւրեանց , եթէ պահեսցէ զնոս 'ի յընկղ-
մանէն . և արկին վիճակ՝ թէ ո՞վ ելցէ 'ի
լեառն . և ել վիճակն 'ի վե՛ր հագարացի
կնոջն . և նա ընկալաւ զայն յօժարութ-
սրտի : Եւ ահա նոյնժամայն եռաց կինն ,
ալի կայր 'ի յօդն 'ի վե՛ր նաւուն գեղեցիկ
վիհափառ Թագուհի ոմն , որ սաստեալ
հրամայէր հողմոյն և ծովուն դադարիլ . որք
և իսկոյն հնազանդէին դադարեցան . և եղև
խաղաղութիւն մեծ : Այսպէս ելեալ կինն ի ոմանց
'ի կղզին , գնաց յեկեղեցին յայն 'ի դլուխ
լերինն՝ կառուցել զուխտ ամենեցուն . և
իբրև եռես զպատկեր տիրամօրն , ա-
դաչակեաց՝ երդուաւ և ասէ , Թէ սա էր
Թագուհին այն , որ հրամայեաց հողմոյն
և ծովուն , և դադարեցոյց զեռանդութիւն նոցա :
Եւ ապա լուսաւորեալ առ յոյ , ընկա-
լաւ զնոքա հաւատն քրիստոնէական , և
մկրտեցաւ . և ոչ եւս յաւել դառնալ յաշ-
խարհ իւր , այլ գնաց բնակեցաւ 'ի սար-
դինիայ կղզին մինչև յօր մահուն իւրոյ :
Յետ այսորիկ եղև երաշտութիւն մեծ 'ի
կղզւոջն յայնմիկ , և ոչ գտանէին մեր-
դիկ ջուր ըմպելոյ . և կային 'ի մեծի նե-
ղու-

ղութէ։ Եւ ասաի եղեալ ՚ի կատար լերինն տաճարոսի՝ առնուն զպատկեր տիրամօր եր կուսին, և բերեն ՚ի քաղաքն, և եդին ՚ի քաղմունդի ՚ի գլխաւոր եկեղեցւոջ նորին. և գնային ամենեքեան առաջի ինն անդր. և աղաչէին զնա կոյն գթալ ՚ի վերայ նոցա և տալ զանձրև։ Եւ իբրև յայն ինն առաքն ոչ ընկալան զանձրև, երկեան թէ գուցէ բարկացաւ ՚ի վերայ նոցա ՚ի կոյն։ Եւ ասի մինչ թաւիսրիւ մեծաւ տանկին զպատկերն անդրէն ՚ի տեղին իւր, ահա յանկարծակի եղ ՚ի առաջ նոցա հրաշալի կապուտակ մարմոյ ցուլ մի մեծ՝ առաքեալ յամենաձաք կուսէն. որ և ընկերակցեալ գնայր ընդ նմա մինչև հասին ամենեքեան ՚ի հեղեղատ մի փոքրիկ։ Եւ անդ խոնարհեցուցեալ ցուլն զգլուխն, հաւ բերաննովն անտի սակաւ մի ջուր, և փրչեաց ՚ի երկինս. և եղև աբանելիք մեծ. զի նոյնժամայն մթացան երկինք անպով. և տեղեաց անձրև յորդ և սաստիկ յոյժ. մինչև թացեալ լինիլ ամենեցուն, որք էին ՚ի թաւիսրին, և փախչիլ և ցրուիլ այսր և անդր, առ ՚ի դառանալ զտեղի թաւստանան յերեսաց անձրևին, և ցուլն հրաշալի եղև իսկոյն անհետացեալ։ Եւ կղզին ամ գոհանայր զնոնէ. և փառաւորեր զհրաշագործ մայրն այն։ Ասաց ՚ի գլուխս արար և առնէ անդ մինչև յայսօր ամենաձաք կոյտ նահ զայլ անթիւ քանդելիս և չնորհս ՚ի Քրիստոսէ իւրոց։

Պատմ։

Պաուղ։

Եթէ հագարայի կինն՝ զորմէ գրեցաք ՚ի պատմուԹիւնս՝ միանգամ միայն տեսանելով զաբանչելիսն այդ, եկն ՚ի զղջումն, և ընկալաւ զնք հաւատն քրիստոնէական, ապա մր պատժոց ոչ եմք արժանի մեք, որք լսեմք զայսչափ աբանչելիսն այդ և մեր նը. և ոչ դադարիմք ՚ի մեղայ. ուստի իրաւամբք կատարելոյ է ՚ի վր մեր բանն այն քի, որ ասէ. գլխոյն հարաւոյ չարէնջ ՚ե զպատասխանի քնդ աղջիկ քնդ այսիկ, և պատասխանի տուր զնա։ Բայց սակայն պատձառ ևս չարեայ մերոյ այս է, զի ոչ հաւատամք կատարեալ հաւատով այսպիսի աբանչելեայ սնն։ Այլ որ չարագոյնն է, զի եմք ունակք, որք ծաղր և առնեմք զայսպիսի պատմուԹիւս. որք և աբանչելեացն աւետարանին գժոխարար հաւատան. և մք բոլորովին հեռի եմք յարքայուԹենն այդ։

Յաղագս սրանչելեաց ինչ եղելոց յամենաւբ կոսեն
՚ի հիմնարկութենէ մինասրանի հարցն կարգեղ-
եանց ՚ի Ծոլովասյ գաղտին :

ՀՐԵՐ ԽՐ

Ջոր պատմէ հայրն դանիէլ յայերարեան ՚ի գիրս իւր :
Եւ հայրն գաւրս բովիեան . հատոր . Է .
օրինակ . 35 :

Շուրջ զամաւ փրկչին , 1260. հարք կարմելեան կարգին ունէին մեծ մեծի քաղաքին Թոլոսայ յաշխար-հին գաղղիոյ՝ զփոքրիկ և զանձուկ մե-նաստան մի անյարմար այնպիսի հուչակա-ւոր կարգի նուիրելոյ Աստուծոյ նոր կու-սին . և փափաքէին ունել անդ ՚ի ներքս քաղաքին զայլ վանս ինչ մեծ և ընդար-ձակ . բայց վն աղքատութե իւրեանց չէին ձեռնհաս : Արդ՝ եր ՚ի քաղաքին յայնմիկ հրէայ ոմն անուն սամուէլ գրոսեան՝ այր վաճառական և յոյժ փարթամ . որ յաւուր միում մինչ զգնայր ՚ի մեծի պարտիզն տան իւրոյ , եաես ՚ի հեռաստանէ , զի կայր ՚ի վէր ծառոյ միոյ գեղեցիկ պատկեր մի Աստ-ծոր նոր կուսին . և իբրև մերձեցաւ առ՚ի լաւագոյն և ս տեսանել զայն , իսկոյն աներ-և յոյթ եղև պատկերն յաչաց նր : Օ արմայ-եալ է այն հրէայն , դարձեալ հեռացաւ՚ի ծա-ռոյն , և դարձեալ եաես զպատկերն ՚ի վէրնր . և

և իբրև վերատին մերձեցաւ ՚ի ծառն՝ տեսանել զայն, անյայտ եղև պատկերն վերատին. և այսպէս քանիցս մերձենայր ՚ի ծառն, ոչ տեսանէր զայն. և քանիցս հեռանայր՝ տեսանէր. և այս պատահեցաւ նմա Հնգիցս։ Ապա ապուշ ինայեալ՝ ցանկայր և խնդրեր իմանալ, Թէ զի՛նչ ունի ցուցանել տեսիլն այն. Եւ այնուրիկ յերկրորդումն աւուր գնաց առ ծառատեր քահանայ մի քաղաքին Թոլոսայ՝ առ բարեկամիւր, և պատմեաց նմա զոր եառեալ, և խնդրեր ՚ի նմանէ զմեկնութիւն խորհրդոյն։ Ասէ քահանայն՝ քանզի եր այր առաքինի՝ լուսաւորեալ առ Յիսուս ասէ ցնա. այս է խորհուրդն երբեմն երևելոյ և երբեմն ծածկելոյ յաւուրս քոյ՝ պատկերի նոր տիրամօրն մերոյ պատուոյ. զի դու քաջ գիտես, Թէ զծրջափ անարգանս ընդունի մայրն այ ՚ի ձէնջ ՚ի հրեից. վ՚ն այն օր՝ քանիցս մերձենայիր առ նա՝ Թագչէր ՚ի քէն, ոչղվի մի անարգեսցի ՚ի քէն. և օրքանիցս հեռանայիր՝ երևեր քեզ, որով ցուցաներ Թէ խնդրե ինչ ՚ի քէն, և կայ մի բարի ինչ առնել քեզ։ Ասէ հրեայն, զի՛նչ արգելօք խնդրե նա յինէն։ Ասէ քահանայն, գիտես պարոն, զի հարք կարմելեան կարգին՝ արք բարիք և նուիրեալք մօրն այ, և ՚ի նմանէ հովանաւորեալք, ՚ի խնդիր էն ունել զտեղի ինն ասո ՚ի ներբս ՚ի քաղաքիս, առ ՚ի չինել անդ զեկեղեցի մի մօրն այ հանդերձ վանաստանաւ, և ոչ կա-

կարեն գտանել, և չեն իսկ ձեռնհաս. ա-
պա ընդարձակեաւ պիտիս քո պարսն, և
առւր նոյ զայս քո պարտէզ վն շինուածոյ
նոյ. քանզի երեւելոյն քեզ ոչ կոյսն ի
նմին պարտիզի, զայն խնդրէ ի քէն:
Ը արժեալ հրեշտն նախ յոյ, և ապա ի
քանիցն քարի քահանայիցն, շնորհեալ յո-
ժար կամօք զայն իւր պարտէզ Տարսն կար-
մրեղեայս առ ի շինել անդ զեկեղեցին և
զմենաստան իւրեանց: Իսկ ամենօրհնեալ
ոչ կոյսն՝ իսկոյն հատոյց նմա զվարձն
այնորիկ, որ եղև այս. զի լուսաւորեալ
հրեշտն առ յոյ, հաւատալ ի քրիստոս
ետքն հանդերձ, զոր և ուղղափառք եղեն
քրիստոնեայք: Այս ոչ շատացեալ այսու,
ինքն և կինն հրաժարեալք յաշխարհէ՝
մտին ի նոյն կարգ կարմրեղեան կրօնաւ-
որացն՝ մինն ի մենաստան արանց, և միւսն
ի մենաստան կուսանաց: Օ այս սքանչա-
եալ՝ լսէիցուք զայլ միւս սքանչելիս: Ի դէմ
իչխանին քաղաքին Թարսոնայ տեսեալ զը-
հրեշտն լեալ քրիստոնեայ և կրօնաւոր,
Տարաւ սիրով պարտիզին նմին, և խնդրեալ
զայն ի Տարցն կարմրեղենից. իսկ նոքա ոչ
կամեցան տալ զայն նմա: Ասեալ քար-
կացեալ իշխանն առաքեալ զպատաւորս,
և փակեալ երկաթակապ փականօք զը-
դրօնս փաթրիկ մենաստանին նոցա, ոմանք ի
կարասցեն ելանել արտաքս ի մուրալ զը-
կերսկս. այլ անդ թող՝ երանելոյն առաքելոյ
մեայեալք՝ լուռ ադատեսցին տալ նմա զը-
պար-

պարտէզն։ Այլին այսպէս բանտարկեալք և տառապեալք ի տօնս կրծատութեան այնոքիկ աւուրս քանի մի. և Թեպետ ամանք ի գիշերի բերէին ծածկաբար ղկերակս ինչ, և տային նոցա ի պատուհանից, սակայն ոչ բաւեր այն նոցա։ Պատմիչ յաւուր միում մաղաչէին զամենանսեր կոյսն գԹեալ ի նոսա, և երդէին զայն մեսեդի ժամերգութեանն նորա, թէ, Ո՞ր ղնիզ մխիթարէ յոյժ բանիւ, նոյնժամայն լուծան ամ փականք և աղիք, ո՛րով փակեալ կային դրունք մենաստանին, և ինքնին բացան։ Յայ ամենանսեր կոյսն ոչ ևԹող անպատիժ զնիւանն զայն անօրէն. քանզի ինոյնաւսկ բակէի, յորում բացան ինքնին դրունք մենաստանին, և հաս պատիժ պատուհասի ի վերայ իշխանին այսու կերպիւ. զի արտաքս առեալն երկոքին աչք նորա ի տեղւոջէ իւրեանց. և կախեցան գՋգայն իբրև գինաս գերեսաց նորա ի տակուսն տեսողայ։ Յոյնժամ ինչ իշխանն մոտաբերեալ ղղջայաւ ի չարեաց իւրոց. և լուեալ Թէ ինքնին բացեալ են դրունք մենաստանին, եւս տանիլ զինքն անդր առ ի գտանել զաժշկուն աչաց իւրոց. և ժամանեալ ի մենաստանն, անկաւ յատս Հարցն այնոցիկ. և խնդրէր ի նոցանէ զԹողութիւն. և ապա պաղատեցեր զինն Հայցել յամենանսեր կուսէն զաժշկութիւն աչաց իւրոց։ Յոկ բարի և անչիշաչար կրծնաւորքն այնոքիկ նոյնժամայնոյն ժողովեցան յեկեղեցին. և կացուցեալ զիշխանն

խանն առաջի խորանի ՝ծածամոր ՝որ կու-
սին , սկսան աղաչել զնա մեծաւ ջեր-
մեռանդութե՛ տալ զբժշկուն ասացեալ նո՛ր ,
Յո՛ մինչ միաբան երգէին զերգն ՝ղՂեր
ընտրեա՛ւ . և ժամանեցին յայն բան . պա-
տ՛ն առ մեզ պաՀպանող կոյսեցուածոս տոյոց ասաց .
տեսանէ՛ին յայնժամ ամենեքին , զի ատ-
բակախեաղ աչք իշխանին փոքր փոքր վե-
րաժողովեալք , մանին զետեղեցան ՝ի տե-
ղիս իւրեանց , ՝ի զարմացումն ամենե-
ցուն . և անկեալ ամենեքին ՝ի վե՛ր երե-
սաց իւրեանց՝ մատուցանէին գոհութի՛ւն
նմա և ամենաՀզօր մօր նորա : Յայն իշխանն
առ՝ի շնորհակալուի՛ այսպիսի մեծի բա-
րերարութե՛ եղելոյ առ ինքն յամենայնէ
կուսէն , ոչ միայն ընծայեաց զառաջինն
զբաժակ ինչ ՝ի նպաստ շինուածոյ եկե-
ղեցւոյ և մենաստանի Հարցն այնոցիկ ,
զոր չինեցին անդ՝ի ներքս՝ի քաղաքն՝ի պար-
սից Հրեից , այլև յետոյ Հրաժարեալ յաշ-
խարՀէ եմուտ ՝ի նոյն կարգ . և զամ , զոր
ունէր , ետ ՝ի նպաստ այնր շինուածոյ :

Պատառ :

Յայնմ իշխանէս այսմիկ բազում ինչ յանցա-
նէմ և մեծ ամենեցեան . ոմ՛ն ասէ առաքեալն
յակոբոս . և խնամատունն ասէ վե՛ր արդա-
րոց՝ արդարն եՀան անգամ անկցի յառաջն : Այ-
սակայն այս է տարբերուի ՝ի մէջ անկ-
մանն արդարոյն և ամբարշտին , զի ար-
դարն յորժամ անկանի , խնամարհի՝ զղջայ՝

և զղջմամբն յոտն կանգնի, ոչ ասէ նոյն իմաստուհին անդադար. Բօթն անփոյթ անկցի արտքն, և կանգնեսցի: Ուրախ սիրաբիշտն յորժամ անկանի, մնայ ի նմին յօժարութեբ, և ոչ կամի յառնել. ոչ և զայս ասէ անդադար նոյն իմաստուհին. յորժամ ի խորս չարեաց ժամանէ ամբարիշտն, արհամարհէ: Ապա որ յապաղէ զղջալ ի մեղացն, ամբարիշտ է, և ըստ իւր շուրջ ածէ յայտնապէս զնշանն դատապարտութեան իւրոյ. յորմէ խնդրն ամենագութն ոչ փրկեսցէ զնա ընդ երեսոյ գրոյս:

Յաղագս սպանչելեաց ինչ եղելոց յամենաբէ կուսէն սուրբ աղբերըն հռոմերէն կորդուբայոյ գաղտնին, յորմէ հոլչեցաւ ածածին աբ աղբերն:

ՀԱՐՑ. ԽԱ:

Ջոր պատմէ հայրն կոմիտեմպերկ ի գիրս իւր: Եւ հայրն գաւրաս բովկեան. հասար. Ե. օրինակ. Տ:

Ի կորդուբա քաղաք սպանիոյ կայր այր մի ռամիկ անուն դոնդիսալուս, այր բարեպաշտ և յոյժ ջերմեռանդ առ աստուածն: Կոյսն, և էր արհեստիւ ասրագործ: Ունէր աս կին, և ի նմանէ ըղդուստր մի, որք փոխանակ լինելոյ նմա օգնական, էին նմա անտանելի վիշտք ծանրութեբ. վասն կինն զկնի ծնանելոյ ըղդուստրն,

դուստրն, Հիւանդացաւ Հիւանդութիւն անդամալուծութեան, և իբր անշարժ կոչիլ լինի անկեալ կայր ի մահիճս՝ սաստիկ ցաւս քաշումն։ Լսեալ դուստրն ի հասանիլն յաման ընտրութեան բարւոյ և չարի, տեսաւ զինել յիմար։ Լսեալ բարեպաշտ այրն կրեր զայս վիշտ ծանրութեան կնոջն և դստերն՝ մեծաւ համբերութիւն. և ոչ երբէք տրտունջս, այլ դարմաներ զնա սիրով։ Լուդ պատահեցաւ, զի մինչ յաւուր միում ողջմիզեն այրս այս եղեալ արտաքս ի քաղաքէն մերոնս իբր երկաւս՝ կայր ի դաշտի հանդէպ վաղեմի ինչ ծառոյ թզենւոյ, և խնդրեր արտասուօք և չառաչանօք զողորմութիւն կարեաց իւրոց յայր և յամենայնէ մօրէն նոր, ահա երևեցաւ նմա անդ ամենայնէ կոյսն՝ օգնական վայելչութիւն, և ասէ ցնա քաղցրութիւն. ահա լուեալ ապաչանաց քոց, և եկի օգնել քեզ. արի երթ առ թզենիդ՝ որ կայ ի հանդիպոյդ, և գտցես առ արմատով նր գաղթիւր մի. և առցես անտի ջուր անօթով իմն, և ասրսիս ի տուն, և տացես ըմպել կնոջդ և դստերդ, և նոյնժամայն բժշկեսցին ի ցաւոցդ եց իւրեանց։ Լու ջուրն այն վն այսորիկ ունի զայն զօրուն, զի անդ ընդ հողով արմատոյ թզենւոյն ի վաղ ժամանակաց թաղեալ կայ պատկերն իմ։ Լու ահա պատուիրեմ քեզ, զի երթեալ ի քաղաքն, ասասցես եպիս կոպոսին քառնալ անտի զիմ պատկեր, և տանիլ ի քաղաքն, և կառուցանել յա-

նուն

նուէն իմ զեկեղեցի, և դնել յաւազ խորա-
նին նոր զայն պատկեր. և ես յօրէ յայն-
մանէ առյապայ՝ արարից քաղցումն ընդհա-
ջերմեռանդիցն իմոյ։ Օ այս ասացեալ՝
օրհնեալ զնա, և եղև աներևոյթ։ Իսկ
այրն ողորմելի յոյժ հիացեալ և սիրիթա-
եալ՝ գնաց առ ոտս թզենւոյն, և եգիտ
զջուրն. և էառ անօթիով ինն՝ի ջրոյ ան-
տի, և տարաւ փութանակի՝ի տունն իւր,
և ետ լմնզել կնոջն և զաւերն՝ պատմե-
լով զոր ինչ ետեսն, և զոր լուաւ։ Իսկ նո-
քա իբրև արբին զայն հաւատով, առաջ-
մնոյն բժշկեցան, ըստ կինն՝ի յանդամնոլու-
ծուէն, և աղջիկն՝ի բախտածուէն։ Օ այս
կրկին հրաշս տեսեալ առն, գնաց վաղ-
վաղակի առ եպիսկոպոսն քաղաքին, և
պատմեաց նմա կարգաւ զամ սքանչելիսն՝
որ եղեն. և ապա զբանս ամենայնք կու-
սին վն շինելոյ զեկեղեցի յանուն նորա։
Իսկ հիացեալ եպիսկոպոսն ընդ այն ամ,
և ուրախացեալ յոյժ, ժողովեաց զամ
ուխտն եկեղեցւոյն, և վճռամեծս քա-
զաքին, և եղեալ՝ի թափօր, գնացին առ
այն թզենի. և պեղեալ զհողն առ ար-
մատով նորին, գտին անդ զարձանեայ գե-
ղեցիկ պատկեր մի սիրամօր Քրիստոսի՝
չափաւոր մեծուքի, շինեալ՝ի փայտէ՝ քո-
վանդակն ոսկեզօծ, որ ունէր՝ի գրկին
զՅծորդին իւր կանգնեալ յոտս առ ձա-
խու բազկին՝ի վր ծնգաց մօրն. և էր
ամբողջ և անարատ, և իբր նորոգ քան-

դակեալ ։ Եւ բարձեալ անտի մծաւյար-
գուէք զայն պատկեր , տարան ՚ի քաղաքն.
և շինեցին զՅոյակապ եկեղեցի յանուն ա-
մենանքե կուսին . և եդին յաւագ խորա-
նին նոր զայն պատկեր . և կոչեցին զա-
նուն եկեղեցւոյն , ածածին սէ աղբեր ։ Իսկ
զանուն ջրոյն՝ ուր գտաւ պատկերն՝ կո-
չեցին աղբեր սէ ածածնին ։ Եւ յօրէ յայն-
մանէ առեալ սկսաւ առնել ամենասքե
կոյսն զբազում ձիրս շնորհաց ջերմեռան-
դից իւրոց , Թէ անդ յաղբերն , և Թէ
յեկեղեցւոջ իւրում. զորոց գրեսցուք զեր-
կուս միայն ։ Առաջինն է , զի ՚ի ժամա-
նակին յայնմիկ՝ Թագաւորն արագռնայ չա-
րայար հիւանդութեբ տենդի անկեալ կայր
՚ի մահիճն՝ ամս բազումս , և ոչ կարէր
գտանել զդեղ և զդարման ։ Այս իբրև
էարբ հաւատով և ջերմեռանդութեբ ՚ի
ջրոյ անտի աղբեր սէ ածածնին , զոր տա-
րան նմա , առժամայն բժշկեցաւ ՚ի տեն-
դէն , և յարեաւ յանկողնոյն ։ Երկրորդն
է , զի աղնուական ոմն ՚ի նոյն քաղաքէ ,
անուն՝ Թովմաս անբժշկ , ցանկայր մտա-
նել ՚ի կրօն յիւեան կարգին . և վն այր
անդադար աղաչէր զմեծաւորն վանայ նո՛.
բայց ոչ լինէր ընկալեալ ՚ի կրօնն , զի
յոյժ Թլուճատ էր լեզուաւն ։ Այս գնաց
՚ի վերոյասացեալ եկեղեցին ածածնին , և
անկեալ առաջի պատկերի սէ տիրամօրն ,
խնդրէր դառն արտասուօք զբժշկումն Թլու-
ճատութեն լեզուին ։ Եւ զօրացեալ հա-

ատով ասէր և ս, ոչ մեկնեցայց աստ ոչ կոյս ածածկին, մինչև ոչ բացցես զչեզու իմ: Ոչ ևս արտասուալից աղաչանաց նր ամենանք կոյսն. և եւարձ զթլուատուԹի լեզուի նր: Այն նա նոյնժամայն գընաց առ մեծաւորն վանացն յնեան կարգին, որ զնա քաջ ձանաչէր, և խնդրեաց ի նմանէ ընդունել զնա ի կրօնն: Այն մեծաւորն իբրև ետես զնա բժշկեալ ի թլուատուԹէ լեզուին սքանչելեօք ամենանք կուսին, հիացաւ յոյժ. և ընկալաւ զնա սիրով մեծաւ ի կրօն իւրեանց. յորում եղև նա յետոյ այր նշանաւոր, և մեծ գիտնական:

Պատգ:

Ասցուք և մեք ի բարի առնէս յայսմանէ տանիլ հոգս ընտանեաց մերոց՝ Թէ և երբեմն կրեսցուք վիշտս և տառապանս վն նց. քանզի ըստ առաքելոյն, Որ նոանց ոչ պահէ ընտանեաց իւրոց, ի հաւատոյն ուրացեալ է, և չար նա քան զանհաւատսն է: Օ որ և ուսցց ձրն մեր, որ ի գառնուԹէ չարչարանացն իւրոց Թողեալ ի մի կողմն զվիշտս իւր, հոգայր զմայրն, և յանձն առնէր զնա աշակերտին իւրում աւետարանչին յովհաննու ասելով. ահա մայր քո:

* * * *
* * *

Յաղագս հրաշից ինչ եղելոց յամենասքն էուսէն ՚ի ընտան երէց եկեղեցւոյ Խոբոյ։

ՀԱՐՑ Ա.

Զոր պատմէ Հայոն կոմիտասերկ ՚ի ձ. հատոր գրոց իւրոց ։ Եւ Հայոն գառնա բովիեան. հատոր. է. օրինակ. 8։

Յամի փրկչին, 1450, ՚ի գեղջ միում կոչեցեալ՝ վիլլանովա, որ Թարգմանի նոր գիւղ, ՚ի գառաւին անգալուսեայ, ՚ի մեծն ապանիայ, էր կինն մի գիւղական, կին բարեպաշտ և յոյժ ջերմեռանդ առ ամենաքն Ճշմարիտն կոյսն. որ և ՚ի գործել իւրում զանգս և զպգիս իւր, ոչ դադարէր ՚ի յօրհնելոյ և ՚ի գովելոյ զնոր կոյսն. այլ գրեթէ զօրն ողջոյն կայր յաղօթս առ նա. որոյ և յոյժ հաճոյ եղև աստենաքն կուսին. և բնակաւ քեզմ ՚ի նմանէ, որպէս երևի ՚ի գրելոցս ։ Քրդ՝ մինչ յաւուր միում գործէր այս կին զանգիւր, երևեցաւ նմա անդ ամենաքն կոյսն աքանչելի փառաւք և գեղեցկութիւք, և ասէ ցնա. Երկն ասա զքեզաղաքանա տո, զի շինեսցեն ասա՚ի սկսն անդր ղեկեղեցի զ ծախուց իւրեանոց յանուն իմ. և կոչեսցեն զանուն նր, Ճշմարիտն զօրութիւն. վասն բարկացեալ է որ խորտանել ժանդագոյնիւ զմեզ բնակիչս անդաստանեաց. և արդեն սկսաւ ժանդագոյն խորել զայլ գիւղս և գաղաւս.

և

և ես եղէ բարեխօս, զի մի՛ և ՚ի պատահեսցէ այն.
և զայս ասացեալ եղև անհրեշտելի. և կինն
հիացեալ սատանեայսն. և ասէ գնաց ՚ի
դիւղն, և պատմեաց ուրախութիւն գիւ-
ղականաց, և երիցու գեղջն՝ զտեսիլ և
զպատգամն ամենայնի կուսին: Այլ նոքա
ոչ հաւատային նմա, Թէպէտ և լսէին,
Թէ ժամուսխան ահա՛ ի մօտաւոր դիւղս և
քաղաքս անկեալ կատորէ զնոսին, այլ ծաղր
առնէին զկինն, և համարէին ցնորեալ: Ա-
ւուրս յետ քանի մի աւուրց՝ մինչ կայր կինն
տրտում մնալ ոչ հաւատալոցն նմա դիւղակա-
նացն, զարձեալ երևեցաւ նմա նոր կոյս ՚ի
նմին անդր, և ասէ ցնա. Ո՛րդիդ, ես այժմ
պայծառ եղէ զայնպէսի նշան, որով անեղծեայ հաւա-
պացեն բանիդ քոյ. և զայս ասացեալ՝ մեր-
ձեցաւ առ նա, և ամենայնքն մնատամբ ի-
րով տպաւորեաց ՚ի կուրծս նորա զպարա-
նոցաւն գլխոյ իմն լուսատիպանիչ յոյժ. և
ասէ. աղէ երթ առ նա, և տուր նմա զայ
ռաջին պատգամս իմ, և գոյց նորա զայս
նշան աչաց խաչին. որով հաւատասցեն քա-
նից քոց. այլև ՚ի սմին իսկ աւուր պատա-
հեսցի նմա և այլ իմն աքանչելիք, որով լարձ-
ցին ամենեքին և այլ իմն աքանչելիք, որով լարձ-
ցին ամենեքին ՚ի գիւղն
այնու պայծառատիպ նշանաւ կրծոցն. և
եցոյց գիւղականացն զայն. և ասաց նոքա
զարձեալ զպատգամն նոր կուսին: Ա-
յս ընթացան ամենեքեան տեսանել զայն
հրաշալի նշան աչաց խաչին. զոր և տեսեալ,
ապուշ կային ՚ի հիացմանէ: Այս յայտ

վայրի պատանեակ ոմն ՚ի գիւղականաց առ ՚ի հրաւիրել նաև զայլ հեռաւորս յայն տեսիլ, եւ ՚ի զանգակատունն եկեղեցւոյ գեղջըն, և ուժգինս հնչեցուցանէր զզանգակն առ ՚ի ժողովիլ ամենեցուն անդր։ Իսկ կղերիկոս ոմն եկեղեցւոյն, անուն՝ յակոբ հերերեան, ոչ գիտեալով յայնժամ զբանչելիսն հրաշալի խաչին, եւ բարկութիւ ՚ի զանգակատունն գաւազան ՚ի ձեռին, առ ՚ի գանել զհնչեցուիչն զանգակայ։ Իւր պատանեակն տեսեալ զնա գալ բարկութիւ ՚ի վր իւր, երկեաւ յոյժ. և ՚ի խուսափելն այսր և անդր առ ՚ի ոչ լինիլ գանահար, անկաւ ՚ի զանգակատանէն ՚ի վայր. և ըստ անկանիլն նոյնժամայն մեռաւ։ Իսկ ժողովուրդն և մանաւանդ երանելի կինն տեսեալ զայս դիպուած պատանւոյն, խռովեցան յոյժ. և դարձեալ խնդութիւ ՚ի նմ յողբս արտասուս։ Այլ երանելի կինն զօրացեալ հաւատով, էջ ՚ի ծունկս անդ առ մեռեալ պատանեաւն, և ասէ այսպէս. Ո՞վ տիրամայր ՚ոբ կոյս ՚ածածին. մի՛ թողուր խառնիլ տրտմութիւ ըստ մերումն ուրախութիւ, որով ցընծայաք և ցնծամք ՚ի վր նշանի ՚ոբ խաչի ՚ածորդւոյդ՝ զոր ՚ի կուրծս իմ տապաւորեցեր. որոյ ՚ի զննին տեսուէ մինչ այս պատանեակ հնչեցուցանէր զզանգակն եկեղեցւոյս, գիպաւ նմա այս դիպուածս մեհու. աղէ գթած աղաչեմք ՚ի վր մեր. և տուր սմա կեանս, և փարատեա զսուգ տրտմու-

արտմաւթե մերոյ : Լե լուսաւ աղաչանաց
նր ամենաներ կոյսն . և ահա յարեաւ մեռ-
եալ պատանին ողջ և անարատ . զոր տես-
եալ ամենեցունն անդ եղելոյ՝ հիացան
յոյժ . և անկեալ յերկիր մատուցանէին
զանբաւ գոհութիւս ՚այ և ամենաներ մեր նր :
Լե այսոքիւք հիանալի հրաշիւք հաւա-
տացեալ բանիւ կնոջն , գնացին ամենեքին
ընդ նմա յանդ նր տեսանել զտեղին , ուր կա-
մէր նա երթ կոյսն , թէ շինեսցի անդ եկեղեցի
մի . և գտին անդ զարձնեալ գեղեցիկ պատ-
կեր մի ամենաներ կուսին Մարիամայ չափ բարձ-
րութեր . զոր կինն իսկ ոչ տեսեալ էր եր-
բէք . և ծանեան ամենեքին , թէ այն էր
պատճառն , վասն որոյ կամէր ամենաներ
կոյսն , թէ շինեսցի անդ եկեղեցի մի յա-
նուն իւր , ՚ի է , առ ՚ի գնել ՚ի նմին զայն
իւր պատկեր , և ունել ՚ի յարգուն : Ուստ
թէ այն պատկեր յորպիսի փայտէ կամ
նիւթոյ իցէ , ոչ ոք մինչև ցայժմ կարաց ո-
րոշել զայն : Լպա խորհուրդ ՚ի մէջ առեալ
ամ գիւղականաց՝ ժողովեցին զծախս շին-
ման եկեղեցւոյն . և սկսան ուրախութեր
մեծաւ շինել ՚ի նմին անդի զեկեղեցին :
Ուայց ՚ի շինման նր , տառապէին յոյժ յա-
ղագս ջրոյ , զի ոչ գոյր ջուր կամ աղբիւր
մերձ անդին այնորիկ : Ուստ երանելի
կինն վերոգրեալ գարձեր հաւատով դի-
մեաց յոգնութեր ամենաներ կուսին . և ա-
ղօթիւք եւրով արար բղխել անդ աղբեր
՚ի պետս շինման եկեղեցւոյն : Որ իբ-

րև

րև չինեալ կատարելին, կոչեցին զանուն նորին. աճապնին ղօրոնել. և եդին յաւագ խորանի նը զայն նորոգ գտեալ պատկերիկ նորին: Իսկ զերանելի կինն կարգեցին լսաարար եկեղեցւոյն այնորիկ. ուր եկաց սուն իբր քսան ամ սրբաւթ 'ի ծառայու-Թե ամենայնբ կուսին. և ապա հանգեաւ 'ի քն. և Թաղեցին 'ի նմին եկեղեցւոջ առաւագ խորանաւն: Իսկ յորմէ կատարումն եկեղեցւոյն սկսեալ՝ մինչև ցայժմ արար և առնէ ամենայնբ կոյսն զբազում շնորհս աքանչելեաց իւրոյն ջերմեռանդից: Իսկ յետ ժամանակաց չինեցին անդ առ եկեղեցեաւն այնմիկ զմենաստան մի. և ետուն զայն հարց կարգի սրբոյ երրորդուԹե՝ որք ազատիչք են գերեաց. ոմանք 'ի ծառայից այ առաւել ևս փառաւորեցի և պատուհեցի մայրն այ. որք և ասպնջականս լինին ուխտաւորացն, որք խուռնեբամ գնան անդր 'ի պատիճ նը:

Պոռոշ:

Ընդ՝ խնդրեացն զբ յամենասբ կուսէն, զի ոմն ինքն վն այսպիսի զարմանալի սքանչելեաց իւրոց կոչեցաւ աճապնին ղօրոնե, տալ ցեկ և մեզ լինիլ զօրաւոր և յաղԹօղս ընդդեմ կրեց և ախտից մերոց. որով ձնշմարտապես կոչիլ կարասցուք յաղԹօղք: Այլ զի ըստ սնոյն սգ ստանինսն. յայնժամ կոչիլ կՔեմ իսկապես յաղԹօղ, յորժամ ընդ ոտիւ սրկՀատ ղանուա մեր, այսինքն խոնարհութե՝ չկպաբատին,

Եղ-

եղբայրսիրութիւն՝ ընակասիչն . հեզութիւն՝ չբարկութիւն . և ողջախոհութիւն՝ չիղջախոհութիւնն : Այս ասաց առ . հոխելով զձախս մեր , առնելմ մեզ աջոս առնդուստ եւանել յերկինս ի մեր :

Ընդհանուր հոյակ երկեաց ի հաւատս , և բժշկեաց ի խեղութիւն զհնդիկ ոմն բերս և բնակիս :

ՀԱՐՑ· ՕՒ:

Ջոր պատմեն հայոն ալխոնաոս հաւատեան . և յոհան հայոն ալլոզայ ի գիրս իւրեանց : Յաս հայոն գաւառս բովկեան . հատոր . Գ : օրինակ . 2 :

Ի հնդկաստան , ի թագաւորութեն պե- րուվայ , որ է փերթա՝ առ ամին լշին կոկիտոյ՝ է աղգ մի հնդկաց կռապաշտիս , որք բայ ի յայլանդակ կերպարանացն՝ զոր ունին , են և յոյժ բիրտք և թմամիտք . և են գրեթէ իբր անասունք . և քնա- կին ի փապարս ծառոց , և կամ՝ ի խուզս՝ յոտոց նոյ չինեալս , և կերակուր ուտեն զարմատս և զտերևս այնց ծառոց : Այսր ի մէջ սոյն այր ոմն հաւատով քրիստոնեայ . որ ոչ միայն քան զայլսն էր առաւել բիրտ և թմամիտ , այլև խեղ էր յանդամացն , և ոչ կարէր ամենևին ուղիղ յոտն կալ : Ար- աւ սա թէ ի նմին թագաւորութէ ի քաղաքին կապոկաւանայ՝ որ աւուրք միով հեռի էր ի կոկիտոյ , առնէ ամենայնք կոյսն յեկեղեցւոջ իւրում՝ զաւազան բժշկութեան հիւանդ-

հիւանդաց. և բորբոքեալ սիրով առողջութեանն անձինն, զնայ գետնաքարշ անդր. և մոեալ յեկեղեցին ծանոյց անդ եղելոյն զպատճառ գալստեան իւրոյ. և խըրատեալ ի նոցանէ՝ առնել վն այնր զինչ նօրեայ ջերմեռանդութիւն, յանձն էառ զնոյն. և խնդրեաց ի նոցանէ թոյլ տալ ինքեան՝ ցայսչափ աւուրս կալ մնալ ի նըմին եկեղեցւոջ. և չնորհեցաւ նմա ի քահանայիցն խնդիր իւր։ Ի.դդ՝ յառաջնում գիշերին՝ յորում մնայ յեկեղեցւոջն, երևեցաւ նմա Թագուհին երկնից լուսափայլ և վեհափառ կերպարանօք. և սկսաւ սիրալիր քանիւք խօսիլ ընդ նմա և ասէ. գիտիցես արդեօք կնքել զքեզ նշանաւ սքի խաչին. և կամ գիտիցես ասել զհայր մեր, և զաղջոյն քեզ մարիամ, և զհաւատամքն։ Ն.ը նա պատասխանի տուեալ ասէ, ո՛չ գիտեմ ամենևին զայդպիսիս տիրուհի։ Յայն ժամ ամենասքբ կոյս ուսոյց նմա նախ կնքել զինքն նշանաւ սքի խաչին. և ապա սկսաւ ինքնին ամենասքբ բերանովն իւրով ուսուցանել նմա զկորհուրդս քրիստոնէական նոր հաւատոյս մերոյ, և զտէրունական աղօթքն, և զայլ բազում բանս աղօթից։ Ն.ը զի՝ ոմն ասացաք, էր յոյժ բժամիտ, և ոչ կարէր մի և երկու անգամ լսելովն ուսանիլ, մի այն հաձեցաւ օգոստափառ տիրուհին երևիլ նմա բազում անգամ, և այնպէս կրթել զնա յուսումն հաւատոյ, ևս մեծի և սքանչելի խոնարհութեան, սի-

րոյ

րոյ, և գԹուէ ամենաՀեզ կուսին, որ անձամբ իւրով կամեցաւ կրԹել զնա յուսումն Հաւատալեաց։ Ալսոսիկ աւուրս ինն երևեր նմա յամուր գիշերի, և ոմն վարդապետ՝ որ մանկունս ուսուցանէր, ուսուցաներ նմ զամ Հարկաւոր գիտելիս։ Այլ ոչ միայն ուսոյց նմ զիրս նոր Հաւատոյ, և զբնմ բանս աղօԹիս, այլև ուսոյց նմա տաղ ինն ի վերջ յարչարանաց տեառն իւրոյ՝ շարադրեալ յինքենէ ի բարբառս նոցին՝ գեղեց կահնչիւն և ընտիր բառիւք։ և այս է առաջին տունն տաղին։

Ազն գեղեցիկ գեսայն բարի։
Ես անմահն չեմ զ ջի։
գոլով անմեղ յամենայ նի։
չարչարեցաւ յեւրոց անօրէն։
ի ալէքսիոս արքասաՀաբեր։
եհեղ զարիւն իւր ի սեր մեր։

Այս այս երևմունք նոր կուսին՝ ոմն ասացաք, տևեաց աւուրս ինն։ և իբրև լցան ինն աւուրք, և ուսաւ լիով քերթ և բերԹամիտ հնդիկն ընտրհօք նոր կուսին՝ զամ քանս Հաւատոյ, յայնժամ բժշկեաց զնա ամենաՀեզ կոյսն նաև ի մարմնաւոր խեղուԹէն։ և գտաւ բոլորովին ողջ և առողջ։ ԹՀ ը Հոգւոյն, և ԹՀ ը մարմնոյն։ Օ որ տեսեալ քահանային և այլոց քրիստոնէից անդ եղելոց, Հիացեալ ապուշ մնային՝ ոչ միայն ի վերջ մարմնաւոր առողջուԹ նր, այլ մանաւանդ ի վերայ սքանչելի և քաղցրալուր տաղին՝ զոր երգեր զու-

զուսեալն յամենայնէ կուսէն։ Հանապազ
և ա՛ի լսել խօսիլ նմա կատարելապէս զմա
բանսն եղ Հաւատոյս մերոյ. և այն պի քաջ ձա
նապէին, որ ոչինչ գիտեր, և ոչ իսկ ուսանիլ
գրեթէ կարեր։ Աւ յորժամ հարցին ցնա,
Թէ ուստի՞ ուսար զայսոսիկ, ասէ ցնսա, յա
մենայնէ կուսէն. վասն լայս լինեակ ա
ւուրս երեսիս լինձ յայտնի գիշերի, և ու
սուցանէր լինձ զայսոսիկ։ Աւ ա՛ի հրատա
րակիլ այսր աքանչելեաց, գունդապետք
մերձաւորք և հեռաւորք դիմէին և գային
անդր տեսանել զայն երջանիկ հնդիկ,
և լսել ձերգն քաղցրալուր. զոր իբրև լը
սէին, լային յաղեսուալի բանից նր, և հիա
նային ա՛ի վր սքանչելեաց ամենայնէ կուսին։
Այսպէս երջանիկ հնդիկն ոչ ևս յաւել դաս
նալ յերկիր իւր, և բնակիլ ա՛ի մէջ քրիս
և անսասնաբարոյ գաւառակցաց իւրոց.
այլ՝ գնաց բնակեցաւ ա՛ի յուլիան. և անդ
մեռաւ սրբաբար։

Պատուղ։

Ա՛յլաբեցո՛ւք և մեք զամենայնք կոյսն, զի
ոմն կրթեաց զայս ռամիկ հնդիկ ա՛ի նր հա
ւատան քրիստոնեական, այսպէս կրթեսցէ և
զմեզ Հոգի ևորապէս ա՛ի նեղբուստ՝ ձանձրել
զունայնութեն աշխարհիս, և զօրանալ Հոգ
ւոյ մերոյ՝ ասելով ընդ մարգարէին. ուսո՛
ցից զարքայութիւնս քո. և Թէ առաջնորդեա՛ ինձ
ա՛ի շաւիղս պատուիրանաց քոց։ Արդարեւ բա
զումք են, որք կուրացեալ միտս ախտից
և

և չար յօժարութէ իւրեանց, ոչ գիտեն զբաղ-
րին. և առաւել անմիտ են յայսմ մասին
քան զառիւծ գիւղական։

Լուսապաշտ էախտրդ ոմն ասանչելեօք ամենաքե կոտորին
եղև հրեշտակեայ, և եթէ ղիմեցուսիչ
ցասող Մարմնոյն։

ՀՐԵՇՏԱԿ·ՆՈՐ·

Զոր պատմէ հայրն անտանիոս կայսրեքեան ի գիրս
պատմութեանն իւրոյ· հատ· ա· գլ· 9։ Եւ հայրն
գաւազս բովիեան· հատոր· դ· օրինակ· 9։

Ի պերուվնայ, յն է՝ փերու, յաշխատիրին
հնդկաց, ի քաղաքին կախապոյիայ,
էր հնդիկ ոմն կռապաշտ, և կախարդ՝ ա-
նուն ալոնսոս, որ ի պատիժ մեղաց իւ-
րոց կայր խեղացեալ յոտից մինչև ցգլուխ.
և ոչ կարէր ամենևին յոտն կալ, այլ միշտ
գնայր յափսիթերս։ Լոյնպէս և կին նը
կախարդ էր. և առաւել չար և ապիրատ
քան զայր իւր։ Արդ՝ պատահեցաւ, զի
յովհաննէս ամենքէնն այր Քերմեռանդ ա-
մենաբը կուսին՝ շրջէր այսր և անդր առ
ի ժողովել զդրամն, և զայլ նուէրս՝ վն
նորոգելոյ զեկեղեցին տիրամօրն, որ կայր
կառուցեալ ի կուստասլուփէ ասացեալ
տեղւոջն, ուր և առնէր ամենաբը կոյս
զբաղում սքանչելիս. և ժողովեաց զբա-
զում

զուամ դրամն և ականս պատուհասանս . և
'ի մէջ այլոց զվարդապան մի կազմեալ յոսկ-
ւոյ և 'ի մեծագին քարանց . և ապա եկն
'ի կաթողիկայ , և իջեւանեցաւ 'ի տան
աւագ երիցու եկեղեցւոյն նը : Այլ ահա'ի
նմին գիշերի եղև հրդեհ 'ի տանն յայն-
միկ . և այրեցաւ բովանդակ տունն , և որ
ինչ կայր 'ի նմին . և ընդ նոսին ամ ժո-
ղովեալքն յովհաննու սանքեղին : Այլ յե-
տոյ գտին 'ի մէջ աւերակացն , զի վար-
դապանն այն պատուհասական՝ հանդերձ թաշ-
կինակաւն , յորում կայր ծրարեալ՝ մնայ-
եալ էր անկեզ և անարատ . զոր տեսեալ
ամենեցուն , աղաղակէին , հրաշք է , հրաշք
է : Այլ՝ 'ի մէջ այլոց օրք տեսին զայս
աքանչելիքս , մինն էր վերոգրեալ կախարդն
ալոնսոս , որ հիացեալ յոյժ ընդ այն հրաշք ,
և լուսաւորեալ առ յոյս , հրաժարեցաւ 'ի
դիւթական արուեստից իւրոց . և արար
ուխտ գնալ 'ի կուստալուփէ առ հրաշա-
գործ պատկեր տիրամօր նոր կուսին , և
հայցել 'ի նմանէ զբժշկուի խեղուճ իւրոյ :
Այ առեալ զորդին իւր միածին մեռեալ
նամեայ՝ եկ 'ի Ճանապարհ գնալ 'ի կուստա-
լուփէ , որ հեռի էր անտի մղոնս իբր հար-
իւր և յիսուն : Այլ չարաբարոյ կինն ներ
բաղումս աղխատեցաւ արդելուլ զնա եր-
թալ անդր , ոնզի մի' թողցէ այնու լըր-
պաշտօն դիպն . սակայն իբրև ոչ կարաց
յաղթել զնա բանիւք , եւ ինքն երթալ
ընդ նմա , ոնզ զի 'ի Ճանապարհին թախան-

ծանօք իւրով՛ք դարձուացէ զմիտս նո՛ր յայ-
ցելուԹի՛ տեղւոյն , ուր դէմ եդեալ գը-
նայր : Եւ զորօրինակ կինն այս անկգամ՛
առնէր զգործ հաձոյ դիւին , այսպէս և
դևն փիլիսն երախտեաց նորա , ջանայաւ
ամ՛ենայրիւք խափանել զձանապարհորդու-
Թի՛ առն նո՛ր , ՛ի կատարումն կամաց նո-
րուն : Աստի զձանապարհայն սկսաւ զա-
ռաջինն բորբոքել հուր ՛ի մարմին առն
նո՛ր . որով՛ երևեր նմա կիզիլ կենդանւոյն :
Հայց նա կալդալով զանուն ամենասո՛ր
կուսին , ՚ձեաց անկեզ ՛ի դիւական հրոյ
անտի : Եւ յետ այսորիկ ելբև հասին յա-
ռու ինչ ջրոյ , յանցանելն ընդ այն ոտիւք ,
մղեալ զնա ուժգին , ընկէց ՛ի ջուր անդր .
և զգլուխ նո՛ր ունէր պինա ՛ի խորս ջրոյն ,
առ՛ի ջրահեղձ առնել զնա : Հայց նա կար-
գայեալ զանուն նո՛ր ՚ձեաձնին , ազատե-
ցաւ անվնաս : Հուսկ յետոյ ետ նմա մի-
լորիլ ՛ի ձանապարհէն , և հանդիպիլ դը-
ժուարաժայռ տեղւոյ խիճք , ուստի յոր
կողմն և շարժէր , ունէր գահավէժ ան-
կանիլ : Հայց նա և անդ կարգաց զա-
նունն նո՛ր ՚ձեաձնին , և զերծեալ ՛ի վը-
տանգէ անտի , գտաւ ՛ի դաշտավայր տեղ-
ւոյ ՛ի ձանապարհի , ընդ որ ունէր գնալ :
Եւ ապա դևն դադարեաց ՛ի փորձելոյ զը-
նա : Այլ և նա ազատաբար գնացեալ ,
եհաս ՛ի կուսատալուփէ . և գնաց յեկեղե-
ցին հրաշագործ սիրամօր նո՛ր կուսին , և
պատմեաց անդ քահանայից նո՛ր հարց կար-

պէս սքանչելագործեալ զդիտաւորութիւն գաղտնի իւրոյ անդր, և զիմաստնութիւնս դիւրին, որք ընդ նմա անցին ի Հանապարհին։ Այլ նոքա հաւանեցան սենեակ մի յիջևանին ուխտաւորաց, ուր եկայք ժամանակս ինչ. և յամենայնիւ առաւ գնայր յափսիթերս յեկեղեցին, և խնդրեր ի տիրամօր նոր կուսին զաժշկութիւն ցաւոց իւրոց։ Այլ յայսմ միջոցի կրթեալ յուսումն քրիստոնէական հաւատոյ ընդ որդւոյն իւրոյ, մկրտեցաւ ինքն և որդին. որով թէպէտ եդիտ զաժշկութիւն հոգւոյն, քայց դեռ ոչ զմարմնոյն։ Ընդ՝ մինչ յաւուր միում կայր յեկեղեցին ի ժամն պատարագին, և եր անդ բազմութեն ժողովրդեան աշխարհականաց և եկեղեցականաց, տպանիացւոց և հնդկաց, հարաւ անդ յարտասուս, և սկսաւ առաւել բորբոքմամբ սրտին քան զայլ աւուրս՝ խնդրել ի տիրամօր նոր կուսին զաժշկութիւն խեղճուն իւրոյ։ Այլ լուաւ աղաչանաց նոր աստուածընկալին. և իսկոյն գտաւ զաժշկեցեալ ցաւոց և ի խեղճուեց իւրոց. և յոտն եկաց, և սկսաւ քայլել։ Որ տեսեալ բազմութիւն ժողովրդեանն՝ սկսան աղաղակել և ասել. Հրաշք է, հրաշք է. և փառաւորէին զնա, և զաստուածընկալ մայր նորին։ Այսմանէ մեծ սքանչելեաց յորդորեալ չարաբարոյ կին նորա, հրաժարեցաւ և ինքն ի պաշտամունէ դիւց, և ի դիւթական արուեստից իւրոց, և եղև քրիստոնեայ. և կայր ի ձեռնադունս սպասաւորութեան մինչև յօր վախ-

ճա-

Ձանին իւրոյ : Եթե այսորիկ մեռանն զկնի քանի մի ամաց՝ կինն և որդին . և ինքն այնասա ևս ըմբռնեալ՝ ի մահաբեր հիւանդութիւն , անկաւ՝ ի մահիճս : Եւ մինչ զգեցեալ էր ջերմեռանդութիւն զհանդերձ կարգի սքջին օգուտինոսի , և ընկալեալ զվերջին խորհուրդս ձեռ եկեղեցւոյն , մերձ եր՝ ի յաւանդել զհոգին , ահա յանկարծակի յարեաւ՝ ի յանկողնոյն ողջ և առողջ բոլորովին , և ասէ՝ ի ձայն բարձր . երևեցաւ ինձ այժմ եղբարք ամենանձք կոյսն , և բժշկեաց զիս՝ ի մահաբեր հիւանդութենէս , և ասէ ցիս . ոչ կամիմ ընդ այժմ ձեռնից այսոսիկ հիմանդանալ , այլ կամիմ , զի պահասին ծառայեցից ինէ : Օ որ տեսեալ և լուեալ ամենեցունն՝ որք կային ներկայք յաւանդման հոգւոյ նորա , հիացան յոյժ , և փառաւորէին զԱծ և զամենանձք մայրն նր : Յոկ այնասա ոչ ևս էհան յանձնէն զսքն զգեստ կարգի սքջին օգուտինոսի , այլ եմուռ յայն կարգ , և կայր՝ ի ծառայուե պարտիզի վանացն . և յամում աւուր ժողովեալ ծաղկունս , զարդարէր զեղան ամենանձք կուսին՝ իւրոյ քարերարին : Եւ եկաց յայս ծառայութիւն ամն քառասմն՝ ամ պահպանութիւն կրօնաւորական վարուց . և ապա հանգեաւ խաղաղութիւն՝ ի քն :

Պատուէր։

Ի պատմուճէս յայսմանէ ուսանիմք զայս, թէ ձօ տայ զպարգեւս իւր խոնարհաց, և ոչ հպարտաց. և բազում անգամ ևս նոցա, որք մեզ անարժան երևին, ոմն են անհաւատք. որպէս յայտ է ի հեթանոս նինուէէացիս, որք յորժամ խոնարհեալ ծանեան զմեղս իւրեանց, և զգեցան քուրձ, գոհն զողորմութիւն ՚ին ՚ի նմանէ առնէին զընդդիմամարտ կենդանիս պատառէ, և զխոնարհեալն անէծս թողու, այսպէս առիւծն յաղգէն յուդայ քո ըզհպարտս հալածէ, և ՚ի խոնարհն խնայէ. որպէս և ՚ի սաղմոսն ասէ. զերծ էնէնալ զհոգի խոնարհ ձօ ոչ արհամարհէ։ Ալ ընդ խոնարհն ըստ օրինակի հմուտ լինիջամարտի յորժամ ընկենուլ զինքն ՚ի ներքոյ ոյ, իբր թէ յաղթէ նմա. ոմն ասէ ՚ի գիրս առաքինութեց։

Լշդ ինչ ոմն հրէայ խեղ և համբ , որ և չարչարեալէ-
նէր ի դիւռայ , բժշկեցաւ յաչինաւբ կուսին ։

ՀՐԱՇ. ՆՈՓ.

Ջոր պատմէ հայրն աղոնղոս . ի ՃԼ . գիրս հրաշից ՃԸ
ածածնին ։ Եւ հայրն գառնայս բովնեան . հատոր . Ճ .
օրինակ . 8 ։

Յամի փրկչին . 1544 . ի կղզւոջն ապ-
րէս , որ է Հանդիպակ լուսիտանիոյ ի
բացեայ , հրէայ ոմն սուտ քրիստոնեայ՝ ա-
մուսնացաւ ընքրիստոնեայ կնոջ միում . յո-
րոյ ծնաւ դուստր մի գեղեցիկ , որում է-
դին անուն՝ աղեքսանդրէ ։ Այր աղջկանն
կամէր փուճով տալ մկրտել զերեխայն . իսկ
հայրն յատպաղեր տալ մկրտել . վնգի գո-
լով հրէայ , և հակառակ քրիստոնէութեանն
ոչ կամէր զմկրտիլ դուտերն . և էր կռիւ
ոչ սակաւ վն այսր բանի ի մէջ նոցա ։ Ապա
անօրէն հրէայն գողացեալ ի մօրէն զդուստ-
րըն , որ դեռ չէր միոյ ամսոյ , եմուտ ի
նաւ հանդերձ անուշչաւ , և տարաւ վնա
ի կղզին նիւարիա , որ է Թենեռիփէ , որ
է յամկիանոսն առ երի ափերիկեայ ի գըչ-
խաւոր քաղաք նորա ի լագունայ . և ետ
քրիստոնեայ կնոջ միոյ ի անուշանել ։ Այլ
Թէ կինն անուշիչ , և Թէ այլ քրիստո-
նեայք բնակեալք յայնմ կղզւոջ՝ ոչ գի-
տելով զեղեալն , համարէին զերեխայն

մկրտել, և զոլ քրիստոնեայ. վասն հրեայն
խաբեայ զնա, թէ մեռաւ մայր սը. Եւ տես
եալ մեր աղջկանն զսիրէ զինքն ի դատերէն
և յառնէն, զարկացաւ յոյժ, և անէծ ըզ-
դատորն, և ասէ յիմարաբար. որովհետև ոչ
հաձեցաւ քո, թէ դատորն իմ քրիստոնեայ
իսկ, ապա տիրեսցենամա զնք, որոց և ըն-
ծայեմ զնա յամ սրտե. Եւ Թոյլտուաւ զնն
այ կատարեցան անէծք նը. զիյօրէն յայն-
մանէ՝ յորում աղջիկն դեռ ամօրեայ էր,
սկսան զնք իշխել նմա. և լեալ ի կեր-
պարանս զաղջամղի մկանց, զոր և տեսա-
նէին ամենեքեան՝ դիմէին բազում անգամ
ի վր նորա, և կրծէին զմարմին նը. և
զայս առնէին մանաւանդ ի գիշերի. և
Թէպէտ վիրաւորեալ ողորմելի աղջիկն յամ
անգամն մարմնոյն, և մանաւանդ ի կող-
սըն, և ի բազուկան, եղև խեղ և անդա-
մալոյծ, և ոչ կարէր շարժել. և այս տան-
ջանք նը որ ի դիւոց, տեւեաց ի նմա ամ
իբր վեցտասան. Եւ զայլ բաց ի տանջանաց
աստի՝ էր և նա համր, և ոչ կարէր խօսիլ.
Եւ դարձեալ մնուցիչք նը զայս վիշտ տա-
ռապանաց նը, տարան զնա առ հրաշա-
գործ սրատեր ածամոր նը կուսին, որ
կայր յեկեղեցւոջ միում հեռի ի քաղաքէն
գնացս աւուր միոյ Ճանապարհի, և հայ-
ցէին յամենանը կուսէն զաղաւթս ի աղջ-
կանն ի յահարկու մկանց անտի, և զբաշ-
կու-

կութէ խեղութէ և համրութէ նը։ Եւ
յաւուրս՝ յորս մնային նը՛ի նը տեղին
յայն, գաղարեցին գևք՛ի չարչարելոյ
զաղջկին. բայց յորժամ զարձան՛ի քա-
զաքն, սկսան գևք վերստին խաստգոյն
քան զառաջինն տանջել զաղորմելի աղ-
ջկին, կրծելով զմարմին նը։ Եւստի և սը-
նուցիչք նը վերստին տարան զնա առ նոյն
նը կոյսն Ճծամայր. և առեալ ջերմ-
ռանդութը ազաչէին զնա գթալ՛ի վը-
աղորմելոյն այնորիկ, և ազատել զնա՛ի
տանջանացն. և կացին անդ աւուրս քա-
նի մի, յորս աղջկին կայր ազատ՛ի տան-
ջանաց դիւաց։ Ապա՛ի գիշերի միում
մինչ ամենեքին մեռին՛ի քուն խանձրուե՛ի
նը տեղւոջն յայնմիկ, և աղջկին ը նը, ա-
հա երևեցաւ ամենանը կոյսն աղջկանն այն-
միկ նովին կերպարանաւ, որով կայր նկար-
եալ՛ի պատկերի նը տեղանոյն. և կոչեալ
զնա յանուանէ՝ ասէ. ա՛ղէքսանդրէ, վը
էր տանջէն զքեզ գևք՛ի մանկութէ՛ն ա-
տ քսմիզ մինչև յայժմ։ Ասէ աղջկին,
ո՛չ գիտեմ տիրուհի. բայց հաւատամ լի-
նիլ վը մեզայ իմոյ։ Պատասխանի եառ
մեծաձայն կոյսն և ասէ, ո՛չ այդպէս. ո՛չ վը
մեզայ քոյ, այլ վը երկուց պատահեաց
քեզ այդ. յի յանիծիլ մօր քոյ, և՛ի յոչ
գոլոյ քոյ մկրտեալ. զոր ո՛չ դու, և ո՛չ
այլ ոք գիտէ։ Եւ սկսաւ պատմել նմա
կարգաւ զլինելն հօր նը հրէայ, և մօրն
քրիստոնեայ, և զայլն ամ, զոր վերա-

գոյնդ գրեցաք. և ապա ասէ. Եթէ կա-
միս բժշկիլ՝ի ցաւոցդ, պարտ է՝ զի մկրտ-
եալ՝ լինիս քրիստոնեայ. Երթ ապա առ
քահանայն գիլոս, որ վերակացուն է նո-
տեղւոյս. և ասա նմա՝ի կողմանէ իմմէ,
զի ուսուսցէ քեզ զկնորհուրդս սո՛ր հաւա-
տոյ որդւոյն և այն իմոյ. և մկրտեսցէ
զքեզ. և՝իյիշատակ իմ և՝ի փառս, կո-
չեսցէ զանուն քո՝ Պօպիամ: Եւ զի մի՛ ոք
երկբայեսցի՝ի վէր տեսլեանս, ահա բժշ-
կեմ զքեզ. և եղիջիր ողջ յայմ ցաւոցդ:
Եւ զայս ասացեալ, մերձեցաւ՝ի բազուկս
նորա. և եղև անդրէպոյթ: Եւ գտաւ աղ-
ջիկն նոյնժամայն բոլորովին բժշկեալ յայմ
խեղուածէ մարմնոյն, և՝ի ցաւոցն. այլ
և բացաւ լեզու նր. և սկսաւ՝ի ձայն բարձր
աղաղակել, և գոհանալ զնայ և զամենեսեան
մօրէն նր: Օ սրբեան՝ի ձայնէ աղաղա-
կի նորա ամենեքեան, որք ննջէին անդ.
և դիմեցին՝ի վէր նորա. և տեսեալ զնա
բժշկեալ՝ի խեղուածէն, և խօսիլ համար-
ձակ, հիացան. և հարցանէին զնա, Թէ
որպէս բժշկեցար՝ի ցաւոցդ: Եւ նա ըս-
կսաւ առաջի ամենեցուն պատմել զոր ինչ
ետես, և զոր լուաւն. և ապա ասէ. Թէ
ծանոյց ինձ ամենասէր կոյսն և զայս, Թէ
գէտ չեմ՝ մկրտեալ, և Թէ գուսար եմ
հրէի, և Թէ յանիծից մօրս պատահեալ
են ինձ այս ամ չարիք: Օ՛ր լուեալ նմ,
զարմացան յոյժ, և փառաւորէին զնա:
Ապա առեալ զնա քահանայն գիլոս, և
տե-

տեղեկացեալ ամի, կրթեաց զնա յաստուծմէ եւ հաւատոյ. և մկրտեաց զնա մեծաւ հանդիսութիւն. և կոչեաց զանուն նր մնբիամ, ըստ բանիցն ամենայնիւ կուսին։ Ապակ երանելի աղջիկն ի նշորհակալութիւն բարերարին իւրոյ տիրամօր եւ կուսին՝ ըզգեցեալ հանդերձ մի սպիտակ, եկաց մինչնայ անդ զամաւուրս կենաց իւրոց ի ծառայութիւն եւ եկեղեցւոյն այնորիկ ամսրբութիւն վարուց. և ապա հանգեաւ խաղաղութիւն ի քն։

Պատառ։

Տեսանելով ի պատմութեան յայսմիկ զարհներգործութիւս անիծից, խրատուին ամենքս զնաղ զգուշանալ ի յանիծանելոյ զբաւակս իւրեանց։ Վասնզի ոմն ասէ իմաստունն. օրհնութիւն հօր հաստատէ զորդիս. և անէծք մօր ի հիմանդ պատպղէն. սիր. գ. 11։ Կրկ առաքեալն ասէ. օրհնեցէք, և մի՛ անիծանէք։ Այլ զի անիծանօղք պարտաւորին այ ոչ ժառանգել, ոմն ասէ նոյն առաքեալն. 1. կորն. 6։ Կրկ իբր ի բազումս անէծքն, որով անիծանէ ոք, դառնայ ի գլուխս իւր, ոմն ասէ նոյն իմաստունն. առակ. ին. 2։ Ակնէծք զուր՝ ոչխ ոչ ելանէն, այլ տուեալ անպատճառ, ուժեք ոչ միասեն, բայց եթէ անիծանողին, դառնալով չարամաղթութիւնն ի գլուխս նորա։

Պետրոս ունի մուղրի մէջ հոգեւորական ամենաաջ հռոմէն եղեալ սրբապատեալ։

ՏԻԲ ՀՌՈՄ

Զոր պատմեն եբեսեբիոս նեքիմպերին, և հայոն յովհաննէս ալշղեան, ի գիրս իւրեանց։ Եւ հայոն գառնոս քահանան. հատոր. ՃԻ. օրինակ. Յ։

Յամի փրկչին. 1648. ի մեծն նապօլէոն, ի տան պարոնին օգոստոսիոյ ազգատոհմացւոյ՝ կայր գերի ումն մուղրի յաղանդոյ հագարացւոց, անուն աբէլ։ Յորոշորիկ գիշեր երբեմն երբեմն ի լինիլ խոհակ ցուրտ, հայրն քարոզիչ գերեաց՝ ի քրիստոնեական հաւատս. բայց նա միշտ յամառեալ յաղանդ իւր, պատասխաներ այսպէս. քանզի ծնեալ եմ յայս հաւատս, վասն այն կամիմ կեալ և մեռանիլ ի նմին։ Եւ առ այս յամառուն յորդորեր գիշեր և այլ ումն գերի հագարացի առաւել յամառ յաղանդ իւր, որ կայր ի նմին տան ի նմին գերութեան։ Որ՝ ի տան պարոնին օգոստոսիոյ կայր գերեցիկ, և յոյժ շնորհալի պատկեր ի սիրամոր որբ ոճածնին, որ ի ջերմեռանդուն չարժերը զհայեցօղսիւր։ Չարժեալ սիրով նոր մուղրի գերին այն աբէլ, առնէր նմա զայս պատիւ մեծապանայ. զի ծախսեալ իւրովք լուացաներ յամում երեկոյի զհանթեղ առաջի նր. և զայս

զայս արար ամն քանի մի։ Եւ Թէպետ
միւս ընկերն կշտամբէր զնա վն այսր բա-
նի, սակայն նա ոչ անայր նմա, այլ ա-
սէր. ես մեծարեմ զնա, որ գոլով մայր
մեծի մարգարէին յին, առնէ զայնչափ
բարերարութիս ամենեցուն. և սիրտ իմ
վկայէ, Թէ նաև ինձ առնելոց է զմեծ
ինն բարերարութի վն այսր ծառայուես,
զոր առնեմ նմա։ Հաճոյ եղև յոյժ ամե-
նեցուն կուսին մեծարանքն այն, զոր առնէր
նմա գերին այն. և ընկալեալ զայն երբև բա-
ժակ մի ջուր ցուրտ, Հաճեցաւ տալ նմա
զվարձան, որ եղև այս։ Ո՛ի գիշերի միում
մինչ ննջէր նա ի սենեկի իւրում ի վայրա-
գաւթի տան ուր իւրոյ, լուաւ զձայն մեծ,
որ ասէր, զարթի՛ր, զարթի՛ր աբեղ, և
կայ ի վեր։ Ո՛արթեաւ գերին, և յոտն
եկաց. և եռաց, զի կայր առաջի իւր լոյս
մեծ, և ի մէջ լուսոյն կայր գեղեցիկ և
վեհափառ տիրուհի ոմն ի հանդերձս ըս-
պիտակս առաւել քան զձիւն. և էր ընդ
նմա ծեր ոմն յարգելի։ Խոնարհեցաւ յոյժ
գերին ի տեսլենէ անտի. և ասէ ցերե-
ակ տիրուհին, ո՛ ես զաւ տիրուհի, և ո՛
է ծերունիդ, որ կայ ընդ քեզ. և որպէս
մտիք այսր գրօքն վակեալք։ Պատաս-
խանի ետ տիրուհին և ասէ. ես եմ կոյսն
Մարիամ, զոր զաւ մեծարեիր լուացանե-
լով զկանթեղ յիմում աւուր առաջի պատ-
կերին իմոյ. և ծերունիս՝ որ ընդ իս է
յանձնէի վերայն իմ։ Եւ զի հաճոյ եղև
ինձ

ինձ յոյժ պաշտօն մեծարանաց քոց, վը այ-
նորիկ եկի հրաւիրել զքեզ ի նը հաւատն
որդւոյ իմոյ յոր քնի. և արդ պատուի-
րեմ քեզ, զի ընկալեալ զայն հաւատ, մի-
կրտեսցիս, և կոչեսցի ի միրտաւեդ անուն
քո՝ յովսեփ: Իսկ գերին դժուարանայր
թողուլ զհաւատ իւր. և պատճառէր, թէ
գալով իմ բնթամիտ, ոչ կարեմ ուսանիլ
զհաւատն քրիստոնէական. ուստի ասէ,
ընդհակառակ եմ ղքէն տիրուհի, որ երևե-
ցար ինձ, և լցաւ հոգի իմ ուրախութիւ.
բայց խնդրեմ, զի ոչ զայդ բան, այլ զայլ
ինչ հրամայեսցես առնել ինձ: Յայնժամ
ամենանը կոյսն եղ զձեռն իւր ի վերայ
ուսոց նը, և ասէ. մի այդպէս յամա-
ռիր, մի, այլ արա զոր քեզն հրամայեմ:
Յայնժամ կակղացեալ իբրև զմոմ սիրտ
նը, և լցեալ ընդոծքն ցլ, աղաղակեաց և
ասէ. պատրաստ եմ հնազանդիլ սիրու-
հի ձեմ զոր հրամայես. և ընդգրկեմ սի-
րով զհաւատն որդւոյ քոյ յոր. բայց
խնդրեմ ի քէն և զայս ընդոծ, զի ծրքա-
նիցս գտանիցիմ ի մեծի տրտմութե և ի
ձախորդութե, հաձիցիս երևիլ ինձ, և
մխիթարել զիս: Ասէ նը կոյսն, բարի
է, կատարեցից և զայդ քո հայցուած.
և ապա կալեալ զձեռանէ նորա, մերձե-
ցոյց ի ձակատն, և ուսոյց ինքել զինքն
նշանաւ սքի խաչին ասելով. Յանուն հօր և
որդւոյ և հոգւոյն սքի. ամէն: Իր յետոյ
պատուիրեաց նմա երթալ առ հայրն քա-

բողնէ գերեաց . և ուսանիլ ՚ի նմանէ զայլ. ամ մնայեալ ուսմունս քրիստոնէական հա- ւատոյն . և ապա օրհնեաց զնա , և եղև աներևոյթ : Իսկ երջանիկ գերին լցեալ ուրախութիւն , ոչ սպասեաց թէ լինիցի ա- ռաւօտ . այլ գիշերային զնաց վաղվաղա- կի առ տէր իւր , և զարթոյց զնա . և պատ- մեաց նմա զոր ինչ ետես , և զոր լուա- ւն . և խնդրեր ՚ի նմանէ կոչել փութով զՀայրն գերեաց քարոզիչ , և առնել զնա քրիստոնեայ : Ուրախացաւ յոյժ պարոնն . և կոչեաց վաղվաղակի զՀայրն , և յանձն արար նմա զգերին ուսուցանել նմա զխոր- հուրդս քրիստոնէական հաւատոյն : Իսկ և Հայրն յորժամ լուաւ ՚ի գերւոյն զայն հրաշալի տեսիլ ՝ծածանօր՚ն կուսին , հիա- ցաւ և ուրախացաւ յոյժ . և առեալ տարաւ զնա ՚ի տուն իւր . և ուսոյց նմա ՚ի մէջ սա- կաւ աւուրց զնմանէ խորհուրդս ՝ն հաւատոյն , և զաղօթս պիտանիս : Ո՞րդ՝ միանչ ՚ի պատ- րաստուն էին մկրտել զնա , ահա ազդմամբ դիւին կալաւ զնա տրտմութի՞ն մեծ , որ գրեթէ խեղդամահ առնէր զնա : Յայն- ժամ դիմեաց երջանիկ գերին առ ամե- նանօր կոյսն Հասանիլ նմա յօգնուն . և ահա երևեցաւ նմա ամենանօր կոյսն նովին կեր- պարանաւ՝ որով երևեցաւ նմա յառաջն . և սկսեալ արեալ զնա , ասէ ցնա , Համբեր որդեակ , համբե՛ր . և զայս ասացեալ՝ եղև անե- րևոյթ : Յորմէ բանէ լցեալ ուրախութի՞ն գերին , զերծաւ ՚ի տառապեցուցչէ և ՚ի դիւա-

դիւական տրտմութիւն անտի։ Ձետ այսո-
րիկ մկրտեցին զնա մեծաւ հանդիսութե-
և կոչեցին զանուն նոր՝ յովսէփ, ըստ բանից
ամենանոր կուսին։ Այսմանէ մեծ չնոր-
հայ եղեալ առ երջանիկ գերին՝ յորդո-
եալ միւս ընկերք նորա՝ առաւել յամառն
յաղանդ իւր. և այլ տասն գերիք աղան-
դակիցք նոր, որք կային ի քաղաքին յայն-
միկ, թողին զաղանդ իւրեանց. և եղեն
քրիստոնեայք։ Ասէ երջանիկ գերին յով-
սէփ օրըստ օրէ վառեալ սիրովն աստ, եկայ
մնայ ի մնացորդս կենաց իւրոց ամ սըր-
բութիւք վարուց. և ասպա հանդեաւ խա-
ղաղութիւք ի քն։

Պատուհաս։

Ընկալցուք և մեք ի խրատ մեզ զբանն
զայն, զոր ասաց ամենանուն առ երջա-
նիկ գերիս այս. այո. համբէր արդեակ, համ-
բէր։ Այ ընդ համբերութիւք միայն կարեմք
ստանալ զհոգիս մեր. ոմն և առաքեալն
ասէ. եբր. ժ. 36. պիտոյ է ձեզ համբերու-
նէ, զի զկնա ոչ արարեալ՝ կասչէ առեղծուած։
Այսպա ամ սը թիւ մեծատուն և թիւ աղ-
քատ՝ պարտի համառօտութիւք կամայն ոչ
տանիլ ամ վշտաց և նեղութեց՝ յորոց և
իսկ պատահելոց։ Այ ընդ լսատ նոյն առա-
քելոյն։ Ելեղուիչ զհամբերուիչ փոքիեն. համ-
բերուելիչն զհանգիստ, այո զիտուիչ. հանգիստ կոչ-
յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. այո այն յոյս, որ
ծնանի ի մեզ վն համբերելոյ մեր վշտաց
և

և նեղուեցեց, անտարակոյս տայ մեզ ժա-
ռանգել զփառս արքայութեն երկնից։

Հաղինաբ կոչեն ՚ի հեռու հրաշեկեան պատիճերէ եռոյ
դարձոյց զրնկէն ոմն հափշտացեր ՚ի հետատուն
դրնապանէ։

ՅՈՒՐԻ ՕՐԻՆ։

*Ջոր պատմէ հայրն յովհաննէս ալոզեան ՚ի գիրս իւր.
և այլ մեծամեծ հեղինակք։ Ջորմէ գրի և ՚ի գիրքն
կոչեցեալ դաշտիկ ծաղկալի։*

Շուրջ զամաւ փրկչին. 1200. ՚ի ժամանակին՝ յորում կայր պատերազմ մեծ քրիստոնէից ընդդէմ հագարացւոց ՚ի պաղեստին վն ապատերոյ գներ երկիրն ՚ի ձեռաց նոցին, գերի վարեցան ՚ի նոցանէ երիք եղբարք ազնուականք՝ իշխանք գաւառին պիկարդիոյ, որ ՚ի գաղղիայ. և տարան յեգիպտոս. և ընծայեցան սուլտանին նմին։ Շատ ջանայ սուլտանն նախ սպառնալեօք տանջանաց, և ապա խոստմամբ գանազան պարգեւաց՝ որպէս գնն յաղանդ իւրեանց. բայց ոչ կարաց։ Ուստի եդ գնա ՚ի բանտի յաշտարակի միում, որ կիսի եր արքունի պալատին. և հրամայեաց տալ նոյ միայն փոքր մի հաց և ջուր. ոմանք բռնադատեալք ՚ի սուէ, Թողցեն զհաւատան քրիստոնէական։ Ոչ ապա աւուրս բազումս ա-
ռաքեր առ նա զմոգս իւրեանց, դի հա-
կա-

կաձառելիք ըստ նմա, որպայթեն զնոսին յաղանդ
իւրեանց։ Այլ և ոչ այսու ձանապարհաւ
կարաց դրդռմել զնա ի հաստատումն մտաց
իւրեանց։ Եդ՝ ուսեր սուլտանն զդուստր
ի անուն՝ Եամբր, օրիորդ յոյժ գեղեցիկ
իմաստուն, քաղցրալեզու, և հմուտ ազան-
դոյն իւրեանց. զսա առաքեաց առ զօրա-
կանն քն, զի որպայծի զնա յաղանդ իւր-
եանց հանձարելուքբ իւրով, և խոստ-
մամբ մեծամեծ պարգևաց։ Եդ՝ գնաց-
եալ տիկինն Եամբր յաշտարակն առ զօ-
րականան քն, սկսաւ քաղցրութբ բանից
խօսիլ ընդ նմա, և ասէ. մի այդպէս յամա-
ռիք ի հաւատս առն միոյ խաչեցելոյ. և
մի ի զուր կորուսանիք զծաղկութիւն հա-
սակն ձեր զառն տանջանօք՝ որք պատ-
րաստեալ կան ձեզ. այլ եկայք դաւանե-
ցիք զհաւատն մեր. որով կարօղ լինիցիք
վայելել ի մեծուբ և ի փառս աստ յաշ-
խարհի, և ապա ի հանդերձեալն յերա-
նաւէտ կեանսն՝ ի խոստացեալն ի մարգա-
րէիցն մերմէ։ Ասէ զօրականքն քի զայն-
պիսի քաջ պատասխանիս եառուն բանից նո՝
վն որ ի քն յն հաւատոյն, մինչև հիաց-
եալ նորա ընդ բանս նց, գնաց ամուս ամ-
Թաւլից։ Այսոյ յերկրորդումն առուր մինչ
վերստին առաքմամբ հօրն եկն առ զօրա-
կանան քն, և սկսան վերստին խօսիլ՝ վն որ
ի քն յն հաւատոյն, յոյնժամ առաք եղ-
բայրն երից զօրականացն յետ պատմելոյն
զներմարդուհին, զչարչարանս, զմահն, և

զյարութիւնն քո , պատմեաց նաև զվարս և զաքանչելի մեծութիւն մօր նո՛ր ամենանք կուսին մարիամու . և յետոյ վերջացոյց զբան իւր ասելով , Թէ մի՛ միայն տեսո՛ Թէ պատկերի տիրամօր նո՛ր կուսին բա՛ ւական է ձգել ՚ի սէր իւր զսիրտս մարդ՛ կան : Այն լսեալ տիկինն էամէր , ա՛ սէ ցնո՛ . արդ ցուցէք ինձ զպատկեր մի տի՛ րամօր կուսին : Նա նոքա ասեն , չունիմք ասա՛ ա՛ մեզ , և ոչ կարեմք գտանել , զի եմք ՚ի բանտի : Յայնժամ ասէ տիկինն էա՛ մէր . գո՛նէ նկարեցէ՛ք զպատկեր մի՛ եթէ կարէք , զի տեսից : Պատասխանի ետ ա՛ ւագ եղբայրն և ասէ . յուսամ յօգնութի՛ ամենանո՛ր կուսին՝ նկարել զայն , եթէ ու՛ նիցեմ զգործիս նկարման , ի՛ գիրիչ , զմատաղաթի , և զերանգս գունոց : Նա նո՛ր ըն՛ դունոյց զգործիսն պատրաստել զգործիսն զայնոսիկ , և ՚ի վաղիւն բերել նո՛ , սկսան երկոքին եղբարքն կրտսերք տրտնջել զա՛ ւագ եղբօրն նոցին , և ասել . ընդէր առնես զիոստուծի ՚ի վեր քան զկար քո , որովհետև ոչ գիտես զարհեստ պատկե՛ րահանութի՛ . և գուցէ ծաղր լիցուք ա՛ ռաջի անհատաւոյ : Ապա նա քաջալերեաց զնո՛ յուսալ յաւ , և խնդրել ՚ի նմանէ ա՛ զօթիւք տալ ինքեանց զպարգևն զայն : Նա՛ րդ՝ մինչ հառաչանօք և արտասուօք կայ՛ ին յաղօթս , անկաւ ՚ի նո՛ն Թմրութի՛ ՚ի վրն նոցա , և ՚ի քուն մտին : Նա ահա մերձ ընդ արշալոյս ծագեաց լոյս մեծ ՚ի

քանտին, և լսելի եղեն երգք հրձիճանաց։ Եւ նոցա զարհուրեալք ի ձայնէ անտի, տեսին՝ զի կայր առ եբեանս փոքրիկ պատկերք մի ամենաշնորհ կուսին Աստուածածնի՝ հրեշտակաց անմահ գեղեցկութիւն. և ինքեանք ևս նոյնժամայն գտան արձակեալք ի կապանացն երկաթից։ Եւ ի ծուխս իջեալ առաջի պատկերին, մատուցին զանբաւ գոհութիւս ամենայնիւ կուսին։ Եւ ի վաղիւ անդր իբրև եկեն տիկինն Էսմեր առնոյա ի յաշտարակն, և եբաց զդուռն մբտանել ի ներքս, էառ զանուշահոտութիւն մին զմայլեցուսիչ. և եառեալ զձառագայթ լուսոյ ի մէնին բանտին. և հիացաւ յոյժ, ասելով՝ այնժամ՝ ասեն ցնա զօրականքն քի. ա՛ հասասիկ ահ տիկին՝ պատկեր սիրամօր որ կուսին նկարեալ ձեռամբ Հրեշտակաց. Եկ, և տես։ Եւ նոյնդ ընդ տեսանելն զայն, հիացեալ յափշտակեցաւ սիրով նորին. և անկեալ ի վէր երեսանցն երկիրեպագ նմին։ Եւ խոկայն ընդհօր հոգւոյն սկսեալ փոխեցաւ սիրատենչ, և հաւատաց ի քն. և խնդրեր հնարս վերծանիլ ըզ զօրականացն ի ձեռաց անհաւատից։ Ապա առեալ տապատկեր ծածկաբար ի սենեակ իւր, և կայր յաղօթս առաջի նորա խնդրելով յամենանաթ կուսէն ապրեցուցանել զնա ի ձեռաց անհաւատից։ Ոչաւ ձայնի աղաչանաց նր որ կայն. և երեկեցեալ նմա ի միւսմ գիշերի, և խոստացաւ նմա հանել զնա անտի անվնաս, և տալ

նիլ

նել ՚ի գաղղիա. ուր ընկալեալ, ասէ, զնոր
մկրտութիւնն, կոչեալ՝ մարիամ։ Օ՚ զարա-
կեալ տիկինն Կամիլ յերևմանէ նոր կու-
սին, ժողովեաց զամ՚ զարգարանս իւր՝
զոսկւոյ և զարծաթոյ, զմարգարտաց, և
զականց պատուականաց, զոր ունէր. Եւ
և զՀրաշալի պատկերիկ ածմանն, և գը-
նաց գիշերային ծածուկ ՚ի բանտն. և ե-
գիտ զայց աքանչելապէս զդրունս նորա.
և եմուտ ուրախութիւն ՚ի ներքս. և ասէ
ցզօրականսն քն. Ծանիք եղբարք իմ սի-
րելիք, զի յանկեալ գիշերին երևեցաւ ինձ
նոր կոյս ածմանդրն, և խոստացաւ պաշտ-
պանել զիս ՚ի փախչելս. ապա արիք եղ-
ցուք ՚ի Հանապարհ. զի և ես կամիմ գալ
ընդ ձեզ, և դաւանիլ զնոր Հաւատն այ
ձերոյ։ Օ՚այս լուեալ զօրականացն՝ ինդա-
ցին յոյժ. և եղեալ ընդ նմա վազվազա-
կի յաշտարակն անտի և ՚ի քաղաքէն ա-
նանց տեսեալ լինելոց յումեքէ՝ գնացին,
և Հասին ՚ի ձիւղ մի ներգոս գետոյն, որ
արգելոյր զՀանապարհ նոցա։ Ասէր մինչ վա-
րանեալ Հոպային՝ Թէ օրպէս անցանելոց
իցեն ընդ այն, ահա տեսին գնաւակ մի,
յորում կայր երիտասարդ ոմն գեղեցիկ.
որ Հրաւիրեաց զնոսա մտանել ՚ի նաւակն,
զի անցուսցէ զնոսա ՚ի միւս կողմն։ Ասէ իբ-
րև անցին, ծանեաւն զնա գոլ Հրեշտակ
նոն. վասն նոյնժամայն եղև ՚ի նոցանէ ա-
ներևոյթ։ Ասպա իբրև տեսին Թէ իբր
եանս է նախախնամութեն աճապարին, գնա-

լավ դնային ուրախութիւն, և փախչէին։ Այլոց տիկինն էամէր վաստակեցաւ յոյժ ի յընթանալն, և խնդրեաց սակաւիկ մի հանգչիլ. և իբրև առ ոտս Թիփի միոյ նստան առնուլ զհանգիստ, յաւշտակեցան քաղցը քնով. և ահա եղեն նոր բանչելիք ի նմանէ։ Օ ի ի միւմ բոպէի ձեռամբ հրեշտակայ փախեալք եղեն յեդիպտոս ի գաղղիա, և եդան ի գաւառին պիկարդիոյ՝ որում էին տեարք զոբահանքն այնոքիկ։ Նոյնդ զարթեան ի քնոյ. և տեսեալ զերկիր մի նոր, հիացան, թէ ուր արդեօք իցեն։ Նէ ահա անցանէր ընդ այն հովիտ մի խաշամբք իւրովք. որում հարցին արաբացի լեզուաւ զանուն երկրին. և նա պատասխանեաց գաղղիացի լեզուաւ։ Կրկնեցին նոքա զհարցումն, և նա, ղի ասայ, թէ այն է երկիրն լայն՝ որ ի պիկարդիայ, և մօտ է քաղաքն Եփիէ, որ էր քաղաքն նոցին։ Այնժամ Յանեան զքանչելի փրկութիւն իւրեանց ի գերութէ. և ի ծունկս իջեալ գոհանային զոյ և զամենեսեան մարէն նորա։ Նա իբրև դիմեցին մտանել ի քաղաքն, և անցանէին ընդ պարտէզ մի, Յանեան պատկերն ածամար նբ կուսին, զոր ոչ տիկինն էամէր՝ և ոչ այլք կարացին շարժել ի տեղւոջէ անտի։ Նէ կայեալ յաղօթս, Յանեան թէ անդ կամի մնալ, և պատուիրէ ի հաւատացելոյ, ոմն և եղև խոկ. զի կառուցան անդ եկեղե-

ցի

ցի մի հոյակապ յանուն նը ՀԱՃԱԾՆԻՆ, և եղաւ ՚ի նմին պատկերն այն. յորում՝ մինչև չև ցայսօր առնէ ամենայն կոյն զբաղում աքանչելիս։ Այսպէս յորժամ մտին զօրականքն ՚ի քաղաքն, ընկալեալ եղեն յազգականաց և ՚ի բարեկամաց իւրեանց անպատմելի ցնծութեամբ. որք ոչ յագենային լսելով զհրաշալի ազատութեն նոցին, և զքաջանչելիսն այն։ Օ արմանային ևս յոյժ ՚ի վէր էսմէր տիկնոջն, որ վասն սիրոյ նը Հաւատոյն թողեալ էր զպատիւ տիկնութենէ իւրոյ։ Որ և յետ այսորիկ կրթեալ քաջ ՚ի բանս քրիստոնէական նը Հաւատոյն՝ գնաց առ եպիսկոպոսն լայոնոյ, և անդ ընկալաւ ՚ի նմանէ մեծաւ հանդիսութե զնը մկրտութեն. և կոչեցաւ մարիամ։ Այլ եղոյց զինքն արժանաւոր այնմ՝ նը անուանն վարելով զնը և զառաքինի կեանս մինչև ցօր մահուն իւրոյ. և ապա հանգեաւ սրբութե և խաղաղութե ՚ի քն։

Պատմագ։

ԶԱկէտ էսմէր տիկինն այս ոմն զսոլոս՝ որ յետոյ կոչեցաւ պօղոս, նախանձախնդիր էր Հաւատոյ և օրինացն իւրեանց, սակայն քանզի զայն յանդիմառնէ գործեր, և ոչ էր աշխարհասէր, և ունէր զսիրտ նը, վ՚ն այն արժանի եղև չնորհացն այ աստ յաշխարհի. և ՚ի հանդերձեալն՝ երկնային փառս։ Այսպա և մեք եթէ յանկամբ ունիլ զչնորհս ձեր, և զկեանս յաւիտենա-

կանա, հեռասցուք ի սիրոյ աշխարհիս. և պահեսցուք մնքուբ զսիրտ մեր ի մարմնական ցանկութեց։ Այլ զղի սեր հեշտութեն արգելուլ զիրկութեն մնրդոյ. քանզի է իբրև զզօրաւոր իմն կապ, որ ոչ թողու շարժիլ ի բարին, ոյ ասի ղուկ. ժէ. 20։ Լին աճէ, և ես այնորիկ ոչ կրեմ գալ։

Այլ աշխարհս ի մերձաւոր վտանգի կործանման ես
մեղայ իւրոց. այլ ինձնորդութեք ամենայն
հոսին արեգաս ի վտանգէն։

ՀԻՒՐ. ԾՕՂ։

Ջոր պատմէ անտանելիս արքեպիսկոպոսիոյ. ի ՃԻ. գիրս պատմութեն իւրոյ։ Եւ հայրն ալէքսանդրոս դիոսպոլեան. հատոր. ք. Հատ. 1։

Յամի փրկչին. 1220. ի սպոլետոն քաղաք իտալիոյ, ի վանս հարց քարոզչաց էր երիտասարդ կրօնաւոր մի նորընծայ ի զարմէ ազնուական՝ այր պարզամիտ և մաքուր. որ և էր յոյժ ջերմեռանդ առ նոր ուծածնին. և յամենայնսաւոր աստ ջժամերգութեն նը։ Այլ յերգելն զայն երգ, որ սկսանի՝ Օրդ երկիր, ծով, և ասրեղ, և այլն, իբրև հասանէր յայն բան, Օ աշխարհս եռամիջ ոնիս, կայր միայր ի տարակուսի, և ի հիացման, թե որպէս կարէ ուծ զայսչափ մեծագոյն գուռնա երկնի

նի և երկրի բռնանդակել ՚ի ձեռին իւ-
րում. և զի ամենեքեան հարցանել այլոց ըզ-
մեկնութիւն նորին, վն այն ապաւէր միայն
զնոր լուսաւորել զիւրս իւր առ ՚ի կարող
լինել հասկանալ զայն։ Իսկ մինչ նոքքեր ՚ի
գիշերի միում այսպիսի խորհրդով, ըն-
կալաւ ՚ի նոսին ղայս յայտնութիւն։ Օ ի թուէր
նոմա գոլ յափշտակեալ յօդս՝ և կալ միասն
՚ի մէջ երկնի և երկրի. և եռաս, զի ա-
հա գայր գունդ մի հրեշտակաց, որք
բարձեալ ունէին զմեծ և զփառաւոր ա-
թոռ մի. և զեռելեցին զայն յայնմիկ ըն-
դարձակ միջոցի օդոյն։ Իսկ իբրև մի մեկ
նեալ գնացին, եկն այլ գունդ մի հրեշտա-
կաց, որք նոյնպէս բարձեալ գայլ աթոռ
մի փառաւոր, սակայն ոչ իբրև զառա-
ջինն, եգին յանդիման նմին։ Նոյնպէս այս-
րիկ երեւեցաւ այլ գունդ մի հրեշտակաց,
որք բարձեալ ՚ի վր բազկաց իւրեանց զնոր
մեր յն քն, նստուցին զնա յաթոռն առա-
ջին։ Ապա երեւեցաւ այլ գունդ մի հրեշտա-
կաց, որք բարձեալ ունէին ՚ի վր բազկաց
զմայրն ոյ զնբ կոյսն մարիամ, և նստուցին
յաթոռն երկրորդ։ Իսկ մինչ նստէին
մայրն և որդին, ահա ամ հրեշտակք և սբք
արքայութեն իջին յերկնից, և կային յաջմէ
և յահեկէ աթոռոցն, կազմել ատեան և-
րեւելի։ Այլ բազումք ըն յաթոռն սարսա-
փելի վհատեալ ՚ի, և զնոսէր յաջոյ ձեռին
զգունտ աշխարհիս՝ անչափութեամբ մեծու-
թեամբ, բաժանեալ ՚ի պետս թագաւորութիս

և գաւառս , որպէս տեսանեմք զայն ՚ի գունտս աշխարհացուցականս . և հայեր ՚ի վէր նորա բարկութիւն մեծաւ , և զայրագին դիմօք : Յորոյ սրտմտութենէն գազանին ամ դասք հրեշտակաց և սքեց : Ապա հրամայեաց քո ընթեռնուլ ՚ի լուր ամենեցուն զամ բարի գործս մարդկան՝ որք յայնժամ կենդանիքն էին յաշխարհի : Եւ ահա եկն եկաց ՚ի միջի մինն ՚ի հրեշտակաց , և արար ոնի հրամայեցեալն : Այլ տեսաւ , զի էին սակաւք և անկատարք , և չի ամ պակասութիւնք . վնզի եղեալ էին կամ գաղջութիւն և աղէտատանօք . և կամ վասն մարմնաւոր շահու , վէ փառասիրութիւն , և վն մարդկային նկատմանց . այնպէս՝ մինչև ամենեքին դատեցին , թէ ՚ի բարի գործսն յայնոսիկ առաւել է դիրան՝ քան զսակին , և յարդն՝ քան զցորեանն : Եւ իբրև վերջացաւ այս ընթերցուած , հրամայեաց քո ընթեռնուլ նաև զգիրքն մեղաց աշխարհի . և ահա մատեաւ այլ հրեշտակ մի , և առեալ ՚ի ձեռն գնատեան իմն մեծ , սկսաւ ընթեռնուլ զմեղս ամ մարդկան յայնժամ կենդանի գտելոց . և մանաւանդ զմեղս քրիստոնէից . և էին սքե այնչափ , մինչև ՚ի դէպ գալ յասել զբանան ոմնէից . Ղ. ՀՀ. ՀՀՆԷՅ , և սպառնէ , և սպիտռնէ , և գողռնէ , և շնռնէ հեղեալ ՚ի վէր երկրէ : Եւ յորժամ լուաւ քո զայնչափ մեծամեծ մեղս աշխարհի , յի զպատշտռնէ յերիտասարդս . զգայլնակ զա-

զական ունայնասիրութիւն՝ ի կանայս. զանհաւատարմութիւն յամուսնացեալս. զպղծութիւն և զկայհոյանաւթիւն՝ ի ժողովուրդս. զբռնաւորութիւն յիշխանս, զկպարտաւորութիւն յազնականս. և զանբաւ սրբապղծութիւնս եկեղեցականս, ոչ կարաց այնուհիկ ածային երկայնմտութեն ժուժել, զի ընդ երջել ի բոլոր մնտեանն. այլ զզնել՝ ի լոյս այնչափ մեղաց, և գրգռեալ՝ ի վրէժխնդրութիւն, ազաղակեաց և ասէ. բաւ է արդ, բաւ է. մի ևս։ Այլ նոյնժամայն համբարձել զամենազօր ձեռն իւր՝ ի վեր՝ որով կալեալ ունէր զգաւնան աշխարհի, կամէր ընկեցեալ զգետնել, և յապականութի դարձուցանել, որոտաձայն գոչմամբ ասելով զայն բան մարգարէին. ի պատառանէ երկիր ելցէ պատառ պարսել։ Այլ յորժամ հետես զայս նորընծայ կրճնաւորն, ահաբեկեալ դարձաւ առ ամենասէր կոյսն. և աղաղակեաց ասելով զայն մեսեդին. Արբուհի մարիամ կամ յօգնութիւն պատսպարեցար, և օժանդակեա ծովրդեացս։ Յայնժամ իսկոյն յարեաւ յաթոռոյ իւրմէ կոյսն ամենագթած, և վազեաց ունիլ զաշխարհս՝ որ մերձ էր անկանիլ և կորնչիլ. և գարձեալ առ դատաւորն քն ասէ. մի այժմ դատեր զաշխարհս որդեակ իմ. այլ համբեր փոքր մի ևս. վասն առաքելոցն ես արս առաքելաշնորհս. որք վարդապետութիւք և օրինակօք վարուց իւրեանց ածցեն յապաշխարութիւն զբազումս մեղաւորս։ Յայնժամ՝ քն վե բարեխօսութիւն մերն ցա-

ծոյց

ծոյց զձեռն իւր բարձրացեալ, և ոչ կա-
մեցաւ կորուսանել զաշխարհս։ Այլ զի
այն տեսիլ և սպառնալիք մի կարծեցի
ցնորք ինչ, և սպառնալիքն յօդս ցնդե-
լի, ի նոյնժամ վայրկենի յորում քո համ-
բարձեալ զձեռն կամէր ի քոյ ընկենուլ
կինքենէ զգուշանան աչխարհս, դադար բո-
լոր երկիրս. և մանաւանդ ի սպո-
լեառն, և ի հանգրուանս նր եղև այն-
պիսի զարհուրելի և մեծ երկրաշարժու-
թիւն, և քայքայումն և կործանումն տանց
և եկեղեցեաց, մինչզի քաղաքաւ յարանց
և ի կանանց սարսեալք՝ գիշերայն փախ-
ան ի քաղաքէն ի դաշտավայրս։ Սակ կրօ-
նաւորք այնր վանացն՝ յորժամ լուան զա-
զդարակ նորընծային յասելն. Աբբահա՛ մա-
բեամ հաս յօգնութիւն. և այլն. կարծեցին թէ
ապաշակէ այնպէս յերկիւղէ գեհենաշար-
ժին. և դիմեցին ի սենեակ նր. և գը-
տին զնա յանկողնի իբրև զմեռեալ՝ որ ինչ
ոչ զգայր։ Յայնժամ սկսան աղաղակել,
և կոչել զնա յանուանէ, և խթել և առ-
ի զարթնուլ և ի յուշն գալ. քանզի նա
կայր ոչ մեռեալ։ Այս յետ ժամանա-
կաց ինչ իբրև ի խոր քնոյ զարթուցեալ՝
դարձաւ ի յուշն. հարցին զնա և ասեն, ի-
մացար օրդեակ զսարսափելի չարժ երկ-
րիս. և նա ասէ, ոչ քնաւ։ Այս վն էր,
ասեն, կոչեիր յօգնութիւն զքեզ ածածինն
այսպիսի բարձր ձայնիւ, զոր ամենեքինս
լսեաք։ Պատասխանի եւս նորընծայն և
ասէ,

ասէ, ոմն յերեսաց կոչեն զնա յօդնութիւն վասն պատճառին, որ մեծագոյն էր քան զայդ. և զայլ ինչ ոչ ասաց. այլ կալաւ զտեսիլն ի ծածուկ մինչև յօր մահուն։ Սակայն ոչ անսյին բազում աւուրք, զի կամ յերկիւղէ տեսլեանն, և կամ զի կամեաւ ինքն կոչել զնա առ ինքն ի ծագկի հասակի նորա, զի զ՚արուեստ ինչ շնորհեսցէ ընդդէմ նշ. որպէս ասէ խնամատունն, հիւանդասցեալ մեռաւ ի նորընծայութեան իւրում։ և մեռաւ իբրև զհրեշտակ, թէ՛ վն անմեղութեանն և միամտութեանն բարուցն, և թէ վն ջերմեռանդութեանն առ աբ ածածինն։ Լաւ յառաջքան զմեռանիլն՝ պատմեաց վերակացուին իւրոյ կարգաւ զտեսիլն, զոր եառեալ. զոր և նա հրատարակեաց բազմաց յօղղութեան վարուց։

Պատառ։

Արդ՝ տհաճեկեալ և մեր ի տեսլենէ յայսմանէ, արասցուք պատառ ասացեալ խորանին, ըստ խրատու կարապետին յովհաննու. տղի կարասցուք զերծանիլ ի բարկութենէն, որ գալոցն է։ Այնմ ըստ առաքելոյն, այս է ժամանակ ընդունելի, և օր փրկութեան։ Աստի այժմ լայցուք և աղաչացուք զմեզս և զձշմարտութիւնս մեր. որպէս զի անդ կարօղ լինիցուք ուրախանալ. ատա պահեսցուք, տղի անդ ձաշակեսցուք յընթրեաց նոն. և ատա խոշտանկեսցուք զմարմին մեր, որպէս զի անդ

անդ հանդիսուք ընդ ամենայն յաւիտեանս. ամէն։

Յոնաթիոսէ երանելւոյն վանիքաչէոսի ընդ ամենաւոր կենաւքն պատուեցաւ ի նմանէ, և յաճախեցաւ նորա։

ՀՐԱՇՔ ԾԱՆ։

Ջորմէ ձառի ի պատմագիրսն կիւտերսեանց կարգին, ի փետրվարի. 19։ Եւ զոր պատմէ հայրն ալէքսանդրոս դիւտալևեան. հատ. ը. ձառ. 3։

Թէպէտ երանելին վանիքաչէոս բըրուքսեղացի ի քեղդիոնէ, որ և Փիանարա, վճռ հնազանդութեամբ եղև եպիսկոպոս, սակայն վճռ խոնարհութեամբ իւրոյ հրաժարեցաւ յեպիսկոպոսութենէն ազգեցութեամբ նոցա. և եմուտ ի կարգն կիւտերսեանց կրօնաւորաց։ Որ մինչ համալըսեր գտեալ զնաղալութեան հոգւոյ՝ ազատ լինելովն ի զբաղմանց եպիսկոպոսութենէն, ահա վաղվաղակի եգիտ անդ զնեղութեան մեծ պէսպէս հիւանդութեամբ մարմնոյն, որովք անկաւ ի մահիճս, և եկաց անդ գրեթէ մինչև ցվախճան կենաց իւրոց։ Իսկ վճռ խոնարհութենէն համարեր, թէ այն հիւանդութիւնք էին առ յայլ պատիժ մեզայ իւրոց. Թէպէտ եւ նմա ոչ զայնպէս առ ի պատիժ, այլ ի զօրութեն հոգւոյն

ասէն և յարդիւնս նորա : Լ՚երդ՝ եր վասն փակիոս յոյժ ջերմեռանդ առ նը կոյս ածածինն. և յորժամ ծանրանայր ի հիւանդութէն, խորհեր զնմանէ. առ նա դիմեր. և ի նմանէ խնդրեր զդնուեթի. և զայս ամ առներ այնպիսի եռանդեամբ, մինչև թագուհ անգամ ընդ ուսին ի նմա նէ զջնորհս սեպհականս. և երբեմն ևս ընդ ուներ զնոսա յառաջ քան զինդրել իւր. Արդեօ երբեմն դէպ եղև ծանրանալ յոյժ ի հիւանդութէ իւրում, և համարեր, թէ չեր հնար նմա թեթևանալ ի նմանէ, եթէ ոչ տեսլեամբ նը ածածնին. սակայն զանձն իւր համարեալ այնմ արժան, ոչ համարձակեր խնդրել զայն. տեսեալ զանձին անարդուէ, և զնը ածածնին վերհուեթի, համարեր զխորհուրդս իւր յանդգնութիս. վն նմ վշտանայր. հառաչեր. և լայր. ոչ այն, որ ուներալ ի սրտի իւրում զկիզիչ տարփանս, ցանկայ կատարել զնա, սակայն ամաչէ յայտնել. այլնպէս տառապեր և նա : Լ՚յլ սուրբ ածածինն իբրև եռես զփափաք սրտին նր, մինչև եր յայտնապես խնդրեալ, յան կարծակի երևեցաւ նմա սիրելի և դեղագոյն տեսլեամբ : Օ որ իբրև եռես ծառայն այ, ի հոգի զմարձայեալ, ասէ. կենդանացո զիս ով տիրուհի իմ՝ նը կոյս մարիամ: Լ՚ւ պատասխանեալ սը կուսին՝ ասէ. սրբեցի, ե դարձեալ սրբեցից զքեզ. և զայս ասացեալ, եղև անհետ ի նմանէ. և մնայ վո-

վնիփակիոս միխիթարեալ յայնժամ, և առյապայն. վնդն քանիցս անգամ տագնապեր ի ցաւոյն, զմոռաւ ածելով զանձաւելի գեղեցկու[թ]ի ամենաքե կուսին, և զգանան նը, մոռանայր զցաւան մարմնոյն, և հանգչեր: Այլ մեծագոյն քան զայս եղև այլ տեսիլ ինն, որով այլ աբար նմա ամենաքե կոյսն. և եղև այսպէս: Ի միում գիշերի ամենաքե ծնդեանն քի ոչ կարելով վնիփակիոս վն սասփիկ ցաւոց հիւանդու[թ]ե իւրոյ գտանիլ ի դասն ընդ այլոց կրօնաւորաց, և տեսանել զնբա պատարագն, կայր յոյժ վշտացեալ. և զի էր խոնարհ, ուսոխ համբերը, [թ]ե վն մեղաց իւրոց զրկեալ կայ յայնպիսի ընծրհաղել հանդիսաւ[թ]ե այնր գիշերոյ: Այլ զի էր նաև ջերմեռանդ, խնամ [թ]ոներ ինքեան, [թ]ե յայնմ գիշերի, յորում ցնծան երկինք և երկիր, և ցօղեն զմիխիթարու[թ]ե ածային զամենեքումբք, նաև զմեզաւորօք, ինքն միայն կայցե յայնմանէ մերժեալ. վնյ և քաղցբաբար տրանջեր զամենաքե կուսէն, [թ]ե մոռացեալ է զտառապեալ ծառայն իւր, մաշեալ և հաշեալ յանկողինս ցաւոց: Որոյ յայս խորհուրդս կայր վնիփակիոս, ահա յանկարծակի լցաւ երկնային լուսով սենեակ նորա. և երևեցաւ նմա ամենաքե կոյսն՝ ոչ ան յայլ անգամ միայնակ, այլ ընդ ածորդացն իւրոյ տղայացելոյ. զոր և պատեալ ի խանձարուրս ուներ ի գըրկին՝

կին՝ ծածկեալ զերեսս մանկանն Թաղ-
կինական. և մերձեալ առ Հիւանդն, եզ
գմանուկն ի վր անկողնոյ նր։ Յայնժամ
լցաւ անապատաւելն ուրախութ վշնփակիաւ՝
տեսանելով ի վր անկողնոյն իւրոյ զշա-
շանն Հովտայ, և զծաղկին նազելեան
դաշտայ. և գրեթէ ասէր ընդ Հաբակն,
անիծեաւ մեր ծաղկեալ։ Այլ սակայն ոչ եր
ուրախութիւն սրտի նր կատարեալ. վասն
Թէպէտ տեսանէր զանհամեմատ գեղեց-
կութիւն մօրն, բայց ոչ տեսանէր զդեղեց-
կութիւն մանկանն, զի ոչ ապտոյտաք, գեմք
նորա կայր ծածկեալ Թաշկինակաւ։ Ուս-
ուի տատապէր և ամբոխիւր. մերթ առ
նր ուծածկէին զառնայր, և խնդրէր տես-
անել զորդին իւր ևս. և մերթ առ նոյն
իսկ մանուկն, իբր խոսելով ընդ նմա ըստ
յոլոյ. Ո՞վ ընտրացանիս զերեսս քո չինին. ես
համարիցիս գիս ոչ։ Այլ գթայեալ
ձորն ի վր նորա, եհան ի խանձարրէին
գամենանոր ձեռն. և ի բաց հան ի դի-
մաց իւրոց զԹաշկինակն. և երևեցոյց վոնի-
փակիսի զերեսան իւր։ Ուր նա տակաւ-
հաս ընդ գերաշխարհ գեղեցկութեն նորա,
կայր զմայլեալ, և Թուէր նմա, Թէ ի
ցի յայնմ ժամու յարքայութենն երկնից։
Ոչ ոք Հաւատայիցէր յերեսաց նր մանկանն այնպիսի անձառելի լոյս, և վեհ-
փառութի ընդ անհամեմատ գեղեցկութե,
զոր ոչ երբէք տեսեալ էին աչք մարդկա-
նացոյց, և ոչ լեզու մարդկային կա-

րօղ է բացայայտել ՚ի տեսութէ ասոի
Հալէին գրեթէ սիրտ և որովայն ծա-
ռային ՚ից . և լայր յորդ արտասուօք ՚ի
ինդութէն . և յաւիտեանական մուրքն ա-
ղաղակեր և ասեր . Վ սիրելիդ իմ յի-
թէ և չգուցէ այլ ինչ տեսանել ՚ի յեր-
կինս , եթէ ոչ այս դէմք գերահրաչ , և
ամենազեղեցիկ , արժան է համբերու-
թանիլ ամ վշտաց և թշուառութեց ՚ի
առ ՚ի կարօղ լինել տեսանել զայսպիսի գե-
ղեցիկ և ՚ից ային դէմս : Այրև այսպէս
մխիթարեալ բերկրեցաւ վայր մի ՚ի յայս-
պիսի գերահրաչ տեսլեանց վճնիփակիոս ,
ասա անյայտ եղև տեսիլն ՚ից . և նա ՚ի
միայորդա կենաց իւրոց զմնաւ ածելով
զայն , կայր ՚ի միխիթարութէ , և յուրա-
խութէ մեծի :

Պատ :

Տեսանեմք յայսմ պատմուէս , թէ ո՛ր-
չափ սիրեցին և սիրեն ՚ից , և մայր նո՛
զնոնարհն : Վ անգղ միայն խոնարհու-
ն է , որ առնէ , զի բնակեսցի ՚ի մեղչնորհք
և զօրութէն քո՛ զա առաքելոյն որ ասէ .
այլ ես պարծեցայց ՚ի տկարութէս ՚ից , զի բնա-
կեսցի ՚ից ս զօրութէն ՚ք : Այս այնչափ գերա-
զանց և պատուական ՚ից այս առաքինու-
թիս , մինչդի ինքն որդին ՚ից կամեցաւ
լինիլ հեզնական և օրինակ այնմ ասելով .
Ուսարուք ՚ինէն , զի հեզ եմ և խոնարհ սրտիւ :
Ա՛պա և մեք՝ որք պարտական եմք զհետ
ի եր-

երթալ քի , հարկ է , զի ընդրկեսցուք
զայս առաքինութի՝ ձանձրանալով զմեզ գոլ
ոչինչ . և ուրախանալով ընդ արհամար-
հեալ լինիլն մեր յայլոց . ոգւոյն և զմեզ
սիրեացեն քո , և ամենայնքն մայր նորին :

Լրնեցաւ ամենասքի կոյան կրօնաւորի Գոմ ջեր-
մեռանդին խորոյ , որ յանիկայր տեսա-
նել գնա :

ՀՐԱՏ ՅՈՐ

Ջոր պատմ կեսարիոս ՚ի Ե . գիրս տրամաբանուե
իւրոյ . գլ . 7 : Եւ հայրն աղեքսանդրոս գիտաս .
զևեան . հատոր . ք . ձառ . 16 :

Ի մենաստանի միում կիսատերսեանց կար
գին կայր կրօնաւոր ոմն անուն Թով-
մաս՝ այր առաքինի և յոյժ ջերմեռանդ
առ նոքս ածածկին : Սա զկնի ծառայելոյ
նմա ամս բազումս , յանկայր հանապազ ,
թէ հնար ինչ իցէ տեսանել զնա . ապա
յուսացեալ ընդունել ՚ի նմանէ զայս շը-
նորհս , պնտեցաւ զհետ ջերմեռանդն պա-
տառնայ . խնդրելով ՚ի նմանէ հանապազ
ըղձդ , զիջանել ՚ի մաղթանս իւր , և առ-
նել զանձն արժանի ՚ի տեսանել զինքն :
Ի՛րդ՝ մինչ այսու ցանկութիւն գնաց ՚ի գի-
շերի միում ՚ննջել ՚ի սենեկին , անկարե-
լի եղև նմա մտանել ՚ի քուն յայնմ գիշե-

րի , վ՚ե եւ անդրեան վերոյգրեալ խորհրդոյն : Ա՚պա ձանձրացեալ և տաղտկացեալ, գնաց ՚ի պարտէզն և նստեալ առ ծառով միով՝ հայեր ՚ի գեղեցկութի՚ն աստեղացն, և հառաչէր հոգւովն տեսանել ՚ի մէջ նոցա զամենասուրբ կոյսն . և լալով գրեթէ ասէր զսոյն քան երգոյ . Ե՚ս գեղեցի՚կ եմ, ցո՚յց ինձ զքեզմա ⁂ . Ե՚ս լսելի արա ինձ զբաւեսո ⁂ . զի ձայն ⁂ քաղցր է . Ե՚ս քեզմ ⁂ գեղեցի՚կ : Ա՚ՀԱ աղաչանաց նո՚ր ամենաւոր կոյսն . և կամեցաւ յուցանել նմա զինքն այսու ձևս նապարհաւ : Ո՚ր նախ քան զերևիլն իւր նմա , մինչ նա Հայեր ը՚ երկինս , եաես, զի լիքաներ յերկնից կոյս ամն գեղեցիկ և պայծառ . որ և եկեալ առ նա , և ողջո՚ւնեալ զնա՝ ասէ ցնա , կամի՚ս լսել ըզձայն երգոյ իմոյ . և նա ասէ . այո՛ յոժար կամաք : Ձայնաժամ բացեալ կուսին զբերան իւր , նո՚ւագեալ զայնպիսի քաղցրալուր երգս , զոր ոչ ոք ՚ի հողեղինաց լսե՚ալ է երբեք . և վճարեալ զայն , ել դարձեալ յերկինս : Ո՚յլք ասեն՝ զի Հիացաւ յոյժ ը՚ն այն միանձնակեացն . և մինչ խնդրեր իմանալ , թէ ո՞ արդեօք իցէ կոյսն այն , ե՚տես՝ զի լիքաներ յերկնից և այլ ամն կոյս նմանն առաքնոյն , որ և եկեալ նոյնպ՚ս առ նա , և ողջո՚ւնեալ զնա , ասէ ցնա կամի՚ս լսել և զիմ երգ . և նա ասէ , այո՛ : Ձայնաժամ երգեաց և նա զերգ իւր քաղցրալուր . և իբրև վճարեաց զերգն , ասէ ցնա միայնակեացն . ասա՛ աղաչեմ՝ ո՞ ես դու , և

ո՞ եր

ւ էր նա , որ յառաջ քան զքեզ երևեցաւ
ինձ : Եւ նա ասէ . առաջին կոյն՝ որ ե-
րևեցաւ քեզ , էր կոյն կատարինէ . և ես
եմ կոյն ապնէս , որք երկոքին նահատա-
կեցաք վն հաւատոյ քո ով մերոյ . և այժմ
ամենանք մայր նր թագուհին մեր առա-
քեաց զմեզ միսիթարել զքեզ փոքր ի ՚ճա-
շակաւ երկնից արքայութեն : Ապա գո-
հայիր զնմանէ , և պատրաստեա զքեզ՝ ի
ընդունելոյ ես զմեծագոյն չնորհ քան
զայս . և զայս ասացեալ , եղև անհետանալ :
Իսկ երանելի միայնակեացն ոչ հանգուր-
ժեր խնդութեն վն այսց երկուց երկնային
այցելութեց , և մանաւանդ յուսով խոս-
տացեալ չնորհացն , զորմէ և սիրտ իւր
վկայէր , թէ լինելոց է այն այցելութեն
ամենանք կուսին այնչափ բաղձացեալն ի
նմանէ . և ոչ խակ խաբեցաւ : Եղև վկնի
քանի մի ժամուց՝ ետես , զի ծագեաց անդ
լոյս մեծ պայծառ քան զարև , որ հա-
լածեաց զխաւար գիշերին . և ելից ձայն
դաւթ զսիրտ աբեղային : Եւ ապա ետես ,
զի կայր ի մէջ լուսոյն տիրամայրն ած-
ծին՝ պատառեալ ի զօրացն հրեշտակաց .
և էր այնչափ գեղեցիկ , չնորհալի և փա-
ռաւէղ , մինչև միտք մարդկային ոչ կա-
րեն ձևացուցանել շքեղութի ինչ աւելի
քան զայն : Եւ յարուցեալ վազվազակի ա-
բեղային , ի ծունկս էջ յանգիման նորա :
Իսկ ամենանք կոյն մերձեցեալ առ նա ,
հայեցաւ ի նա աչօք գթոտ . և ասէ ցնա .

որպեսզի իմ սիրելի, և ծառայդ իմ հաւատարիմ. հաճոյ եղիր ինձ յոյժ ծառայութեի քո երկարաժամանակեայ. լուսոյ աղաչանացդ և արտասուացդ. և ահա եկի յայցելութեի քոյ: Պայդ հանապազորեայ մեռուցումն զգայուեցդ, քոյդ հրաժարութիւն յերկրայնոց, և քոյդ սէր որ առ իս, արժանի արարին զքեզ տեսանել զիս: Ահա յայսմ գիշերի մխիթարեցի զքեզ այցելութեի և երգոյ կատարմնեայ և ազնիւ կուսից. քայց զի այս փոքր ի առ սէրն իմ, ահա ես անձամբս եկի յայցելութեի քեզ. և կամիմ զի նաև զերգն իմ լսիր. ցես: Այս իբրև ասաց, սկսան հրեշտակք հարկանել զքնարս իւրեանց, և ազնուաձայն կոյսն սկսաւ երգել: Ձէ այնչափ հիանալի էր քաղցրութեի ձայնին երգոյն այնոյիկ, մինչդի անկաւ աբեղայն յերկիր ի վէր երեսացն իւրև զմեռեալ ի զմայլմանէ և ի հնդութեէ հոգւոյն. զոր օրինակ պատահեաց առաքելոյն ի Թաբօր լերինն. և ամենաճաք կոյսն վերացաւ անդրէն յերկինս. և աբեղայն կայր անդէն անկեալ յերկիր իբրև զմեռեալ: Յայտեան աբեղայք վանացն ընդ առաւօտն ասել զժամերգութին. և տեսին զի այն աբեղայ, որ կանխեր յամենայն աւուր քան զայլս յեկեղեցին, ոչ էր ի դասին. և մտին ի վանսն, թէ գուցէ հիւանդացեալ իցէ: Եւ ասի զկնի ժամերգուէն գնացին ի սենեակն տեսանել զնա. և ոչ գտին զնա անդ.

որո-

որոնեցին աստ և անդ . և վերջապես գը-
տին ՚ի պարտիզին , ուր անկեալ կայր իբ-
րև զմեռեալ : Նարճին զնա անտի շալա-
կաւ , և տարան ՚ի սենեակ նորա . և շատ
ջանացին զանազան դեղովք յուշն բերել ,
և ոչ կարացին : Յայնժամ աբբայն , որ
առաւել գիտակ էր վարուց նր , ծանեաւ
թէ ոչ էր այն կիրք բնական , այլ գեր-
բնական ի նմա . ուստի հրամայեաց նմա զօրու-
թիւնք հնազանդութենն յառնել և ասել ,
թէ զինչ պատահեաց նմա յայնմ գիշե-
րի . և թէ ուստի է այն ուշագնացու-
թիւն նորա : Ի՛վ աբանչելի զօրութիւն սքոյ
հնազանդութիւն , որ և մեռեալոց տայ խօ-
սիլ : Օ՛ի ընդ լսել ձայնի մեծաւորին ,
յարեաւ աբեղայն իբր ՚ի մեռելոց . և վե-
հնազանդութիւն պատմեաց զամ՛ ինորհս է-
ղեալս նմա յամենայնիք կուսէն յայնմ՛ գի-
շերի ՚ի զարմացումն ամ՛ կրօնաւորաց :

Պատմ :

Արդեօք ըս բանիդ սմենայնիք կուսին , մե-
ռուցումն զգայուէդ և հրաժարումն յերկ-
րաւորացս՝ արարին արժանի զայս երա-
նելի աբեղայս տեսանել զնա , այսպէս և
մեք եթէ ցանկամք տեսանել զամենա-
հրաշ գեմն արարչին մերոյ յիսի , պարտիմք
հրաժարիլ յերկրաւորացս , և մեռուցա-
նել զիդձ զգայուեցէդ մերոց . ոմ և նոյն
ինքն արարիչն մեր ասէ . Թէ Ոք ոչ հրա-
ժարեսցի ամ ընկէց իւրոց . չի յերկրաւոր ցան-

կուլթեց իւրոյ, ոչ կարէ իմ աշակերտ լինել. այլ ոչ կարէ լինիլ սպասաւոր իմ. և ծառայ ընտանի, որով և միշտ համարձակ տեսանել կարասցէ զերեսս իմ։

Հաղնուածական օրինօրդ ոմն աշակէրտ զամենայնէ ետուն ցուցանել նմա զշնծորդին իւր զյն. և ընդհակառակն օրինադիր ոմն, ի ծոխեցւոց յառաջեաց։

ՀՐԵՇՏԱԿՆ ՅՈՒԴԱՅ։

Ձոր պատմէ Եզրիկա զբանն ՚ի հայելին օրինակաց. օրինակ. 24։ Եւ հայրն գառլոս բավլեան. հատոր. ա. օրինակ. 39։

Օրինօրդ ոմն աղնուական մինչդեռ տակաւին եօթն ամաց էր, ՚ի բաց թողեալ զաղայական զբօսանս, բորբոքեցաւ ջերմեռանդութեամբ առ ամենայնէ կոյս ածծծինն. և կայր միշտ յաղօթս առ նա։ Եւ զի լսէր՝ թէ որդին նէր յն գեղեցիկ էր և շքեղապայծառ տեսլեամբ քան զշամ մարդիկ, վառեցաւ սիրովն, և ցանկայր տեսանել զնա։ Ուստի ակաւ աղաչել թախանձանօք մեծաւ զամենայնէ կոյսն, զի յուցցէ նմա գնալ միանգամ զշնծորդին իւր զյն։ Եւ յարատեւեալ անդադար յայս խնդիրն ամն եօթն. յորս և եկաց առաքինի վարուք և սրբութիւք իւրև

րև զՀրեշտակ սմն երկնային։ Այդ՝ զկնի եօթն ամայ՝ իբրև եղև լինքն չորեքտասան ամայ՝ լուաւ աղաչանացն ամենեցուք կոյսն, և կատարեաց զՀայրսն՝ ած նորա այսպէս։ Օ՛ի՛ գիշերի ամենեցուք ծննդեան իւրոյ՝ յորում ծնաւ զածարդին իւր զյն, մինչ կայր յաղօթս երանելի օրիորդն՝ ի սենեկին իւրում, երևեցաւ նմ ամենեցուք կոյսն գեղեցիկ և պայծառ քան զարև, ունելով՝ ի գրկին զածարդին իւր զյն. յորոյ լեռնացն Հառաջեկին Հառապայթք լուսոյ. և էր այնչափ գեղեցիկ, զոր ոչ կարէը տեսանել առանց յափշտակեալ լինելոյ մտօք։ Այս մատուցեալ առ օրիորդն, ասէ. Ահա այն՝ զոր ամն եօթն խնդրեիր տեսանել, առ ընկալ զնա՝ ի գիրկդ, և զմայլեաց նովաւ։ Այս զայս ասացեալ, եդ զնա՝ ի գիրկս նր. և նմայ օրիորդն ապշեալ և յափշտակեալ՝ ի գեղոյ նր։ Այս ասէ մանուկն յն յօրիորդն. սիրես զիս կոյս դու։ Պատասխանի ետ օրիորդն. այո՛ սիրեմ զքեզ յոյժ տէր իմ և ած իմ։ Պատճեալ եհարց զնա յն. և սիրն քո ի՞նչ այնչափ, որչափ է այն, որով սիրես զիս ետանս քս։ Պատասխանի ետ օրիորդն, մեծագոյն է քան զամբ կենսագիմոց։ Յաւել նմա հարցանել. որչափ է մեծագոյն։ Այս ասա երկիր հարցուսիս, եկայ օրիորդն վայր մի առանց պատասխանելոյ ինչ. վն զի ոչ կարէը բանիւ բացայայտել՝ զոր ինչ ունէը՝ ի սրտին. և ասա ասէ. ոչ կա-

րեմ տէր իմ տալ պատասխանի այսմ
հարցմանդ լեզուաւս, այլ սրտիւս պա-
տասխանեմ՝ զոր դու քաջ ձանաչես զայն։
Եւ զայս իբրև ասաց, լցաւ ցնծալիս սիրա
նորա ոճծային սիրովն. և ոչ կարէր մի-
ւանդակիւ ի նմին, հերձաւ սիրա նր յեր-
կուս իբր սրով բաժանեալ, և անկաւ անդ
մեռեալ, և տարածեցի ի գետնի։ Իսկ զհոգի
նորա ընկալաւ ամենաթագաւորն ի ձեռս իւր.
և քարձրացան երգոցքն հրեշտակաց
վերացոյց, և հանդոյց յարքայութիւն որդ-
ւոյ իւրոյ։ Եւ իբրև ընտանիք տանն
լուան զայն ձայն երգոց քաղցրութիւն ե-
զանակիւ ի սենեկի նր, դիմեցին ամե-
նեքին անդր ի ներքս տեսանել, թէ զի՞նչ
իցէ. և տեսին զերանելի օրիորդն փոխ-
եալ յաստեացս. և բուրեր ի կուսական
մարմնոյ նր այնպիսի հոտ անուշութիւն,
մինչև զմայլիլ նմ. վասն ոչ իմն բուրումն
անուշահոտ իրաց աշխարհիս զուգակցիլ
կարէր նմին։ Եւ այս եկին ժողովեցան քա-
ղումբ ի վէր մեռելոյն. եկին և բժիշկք և
վիրաբուժք. և ամենեքեան զմայլեալք յա-
նուշահոտութիւն մարմնոյ նր, հիանային
ընդ յանկարծական մահ նր։ Եւ խորհուրդ
արարեալ բոլոյն զփոր նր, տեսանել թէ
զի՞նչ իցէ պատճառ մահուանն։ Եւ իբ-
րև բացին, տեսին, զի յերկուս բաժան-
եալ կայր սիրտ նորա. և ի յերկուս մա-
սունն և պրեալ կայր ոսկեղէն և գեղե-
ցիկ տատիկ այս բան. Ահեմ զեզ որ եմ

յո յոյժ առաւել չան էին . էի պոա սպեղներ էին , երէկեայր էին , և ըարդարեայր էին ընդհօդ : Եւ զամենայն յոյժ . և փառաւորեցին զԾ. և բարձեալ զմարմինն նր , Թաղեցին Հանդիսաւթ մեծաւ :

Պատմ :

Ասյուք և մեք յերանելի կուսիս յայսմանէ սիրել յամ սրտէ զԾ . որպ այս է նըշանակ . զի զնա ունիցիմք միշտ ի մտի . վնզի ըստ նմն բանի . ուր է գանձն ուրուք , անդ է և սիրտ նր : Եւ առ այս միտ առել նաև երանելին օգոստինոս . անդր էերէմ , ուր սիրտ իմ էերէ : Այսպս և մեք եթէ յանկամք նմանն այսմ երանելի կուսիս ունիլ գրեալ ի սրտի մերում զսէրն յն , հարկ է , զի ի բայ ընկեցցուք ի սրտից մերոց զսէր երկրաւորայ և ունայնաւթեց աշխարհիս : Վնզի ըստ բանի նոյնոյ նն . ոչ կարեմ էերէոջ պերանց ծառայել :

ՀԱՀինաւէ հոյան երևելեցաւ լէ բարիուէ ուսիմն ՂԷր-
մեռաւանդէ խարուամ՝ ՛ի մահուընէ հիւանդուելէ
նէ. բայց վա բարեխոսուէ աէ ծօրն իվ-
նապիոսի, հաշտեցաւ, և եպ
նմա կառողջուելէ։

ԽՐԻՏՈՍ ԿՈՒ

Ջոր պատմեն հայոն դանիել բարդուզեան. և նոզար-
կոս, ՛ի գիրս իւրեանց։ Եւ հայոն աղէքսանդրոս
դիոտալևեան. հատ. ի. ճառ. 12։ Եւ հայոն գառ-
նա բովիեան. հատոր. ի. օրինակ. 16։

Լոդովիկոս բեռլոն՝ աթոռակալէն եպիս-
կոպոսի քաղաքին աւէնիւանի՝ որ յաշ-
խարհին գաղղիոյ, էր յոյժ ջերմե-
ռանդ առ ամենասք կոյս ածածինն ՛ի
մանկուելնէ. և կեայր սրբուելնէ և առա-
քինի վարուք։ Բայց յետոյ՝ և մանաւանդ
յորժամ բարձրացաւ ՛ի պատիւ աթոռա-
կալութէն, թողեալ ՛ի զոյգ զնէ վարս իւր,
կայր յոյժ անառակաբար։ Ընդ՝ յամի
փրկչին. 1600. հիւանդացաւ առ մահաբեր
իմն հիւանդուելնէ. և տեսեալ զինքն ՛ի վտան-
գի մահուընէ, և զաժիշկսն յաւտահատեալս
յառողջուելնէ իւրմէ, դարձաւ ՛ի յուշն. և սկսաւ
դիմել առ ամենասք կոյսն առ աստուածն
մեղաւորաց. ուստի լալով ասէ. յիշեա ով
ամենասք կոյս ածածինն՝ զանարժան ծա-
ռայութիս իմ, զոր միշտ յոյժ արարի
քեզ.

քեզ. և օգնեա ողորմելի մեղաւորիս. և
ահա խոստանամ փոխել զվարս իմ բոլո-
րովին ի քարին, եթէ տայցես ինձ կեանս:
Ինչպէս նա լայր այսպէս գառն ար-
ատաւոք, և յանձն առնէր զինքն ընծայ-
մօրն, ահա երևեցաւ նմա ամենանոր կոյսն
վկհափառ դիմաք, թայց լի անհնարին բար-
կութ. և սկսաւ յանդիմանել զնա վն խոտա-
սրտութեն, որով ընդդիմանայր աղերսուեցն
այ. և ապա ասէ, ոչ հաւատամ արտա-
սուացդ և խոստմանցդ՝ զոր այժմ առնես,
զի զայդ առնես յերկիւղէդ: Այլ վն ծա-
ռայութեցդ՝ զոր յիշես արարեալ ինձ,
զայս ծանիր, զի ոչ են և ոչ եղեն այ-
նոքիկ ինձ հաճոյ յաղագս առնելոյ քոյ
զայնս գոլովք ի մեզս և ի մոլութիս. և
զայս ասացեալ եղև աներևոյթ: Այլ ո-
ղորմելի անձառակալն խոտութեալ յոյժ ի
յանդիմանութենէ նոր կուսին, և յաւա-
հատեալ ի մարմնաւոր առողջութէն, կո-
չեաց զՀայր ոմն ի յեռան կարգէն, և ըս-
կսաւ խոստովանիլ նմա զվերջ իւր զա-
րարեալսն ի մանկութենէ հետէ մինչև
ցժամն ցայն: Այլ չևևս էր վճարեալ
զխոստովանութէն, զի ահա նոճազեցաւ
սիրտն, և կայր ի տագնապի մահուան:
Իսկ ահա երևեցաւ նմա վերստին ամե-
նանոր կոյսն ընդ ածորգւոյն իւրոյ, և ել
սէզ հօրն իբրև առաւօտուն լոյսդ ացոյ. և է-
լեալ գիմօքն բարկացեալ, թայց ոչ ոտ
յառաջն, այլ փոքր մի մեղմացեալ. և

ծած-

ծածկեր ձեռաքն զվէրս ամենայնք կսկի
որդւոյն իւրոյ · որ նշանակեր , թէ փակե
նմա զաղբիւրն ողորմուե : Եւ ապա եաես ,
զի ոչ հայրն իգնաւոիս էջ ի ծունկս առա-
ջի քո , և տիրամօրն · և աղաչեր զնա զը-
թալ ի վէր հիւանդին , և առ նմա զա-
ռողջութի · և խոստանայր , և հաստա-
տեր , թէ նա առ յապայն առանց կար-
ծեաց փոխելոց է զվարս իւր , և լինելոց
ի օրինակ բարւոյ ամենեցուն · և տայր զանձն
յերաշխաւորութի վն նր : Յայնժամ ա-
մենայնք կոյսն վն աղաչանաց ոչ հօրն՝ փո-
խեաց զդէմս իւր ի քաղցրութի · և ե-
հարց ցհիւանդն , և ասէ · եթէ տայ ըեզ
զառողջութի և զկեանս , որպէս ուղիս
կեալ յետ այնորիկ : Եւ հիւանդն դողա-
լով և լալով ասէ , հաւատարմապէս կա-
տարեցից ամ ամենայնք տիրուհի զոյն ամ ,
զոր խոստացաւ ոչ հայրս իգնաւոիս ի
դիմաց իմոյ : Յայնժամ ամենայնք կոյսն
երգաց զկողք որդւոյն իւրոյ · և էարկ անդր
զձեռն իւր · և առեալ յարեներն , էօծ ըզ-
հիւանդն · և զայս արարեալ՝ եղև անե-
ըևոյթ տեսիլն ամ : Եւ նոյնժամայն գը-
տաւ աթոռակալն ողջ և առողջ՝ աղատ
յամ հիւանդութեց · և անկեալ ի վէր ե-
ըեսայն , մատոյց զանբաւ գոհութիս ամ
և ամենայնք մեր Տոքա · և ապա վճար-
եաց զխոստովանութի մեղացն իւրոց՝ զոր
սկսեալն էր առնել : Ձետ այսորիկ կիրճ-
լով զխոստումն իւր՝ զոր արար ամ , սկսաւ

վաղ-

վաղվաղակի փոխել զառաջինն մնչեկան վարս
իւր , և կեալ սրբութեաբ և առաքինի վա-
րուք յօրինակ քարի առնեցուն : Այս առ-
'ի ընծայակալութեն բարեխոսին իւրոյ սիր-
հօրն լիգնատիոսի , գնաց 'ի վանս Հարյին
յհեան . և պատմեաց նմ զքանչելի բժշ-
կութեն իւր . և էառ զպատակեր մի նոյն
նր հօրն լիգնատիոսի . որ յաւուրսն յայ-
նոսիկ դեռ չէր գասեալ 'ի կարգս երա-
նելեաց . և եդ զայն յեկեղեցւոջ եպիս-
կոպոսարանին 'ի հրապարակական յար-
գանս ժողովրդեան :

Պոռաղ :

Ասացուք և մեք 'ի պատուհասէ սթափուա-
կալիս այսոքիկ ոչ խոտորիլ 'ի նախկին խո-
նարհութեէ և 'ի ջերմեռանդութեէ մեր-
մէ , յորժամ ելանեմք 'ի բարձր աստիճան
իմն պատուոյ . ոպ և իմաստունն ասէ .
Մրչափ մեծ եղիս , խոնարհ կալջիր զանձն քո . սի-
րաք . ի . 20 : Ա՛յնպէս որ 'ի բարձրանալն 'ի
պատիւ լինել , հայեցուցանայ , պատահի նմա
այն՝ որ պատահեաց Թագաւորին ասուա-
ղայ . զի յորժամ էր ինդր յաչս իւր , այր խո-
նարհ և ածապաշտ , եղև գլուխ ցեղիցն իսկ .
ոպ ասի . 1 . Թագ . ժե . 17 : Իսկ յորժամ
մեծ Թուեցաւ յաչս իւր , և զատարեաց
'ի նախկին ածապաշտութէն և 'ի խոնար-
հութէն , անարգեցաւ :

* * *

Այն ոմն բարեպաշտ անուն իվեռք, ի վանգելն կո-
րուսանել չհամեմատի իւր, ապաւեցաւ
օգնութեանն ամենաբ հառոյն։

ՀՐԵՇՏԱԿԱՆ։

Ջոր պատմեն անգեղոս մարիկեան. և ուգոն փլո-
րեսեան. և քրիստափոր ենրիկվեզ. և այլ հեղինակք
ի գիրս իւրեանց։ Եւ հայոն գառզոս բովիեան.
հատոր. ք. օրինակ. 7։

Ի վիճակին լեոդիոնի, որ ի փլանդրիայ, ի գղեկին կոչեցեալոյ Հոյիան՝ էր կոյս աղջիկ մի անուն իվեռք՝ դուստր ուրուսի մեծատան. որ և ոչ միայն ըստ մարմնոյն էր գեղեցիկ, այլև ըստ հոգւոյն. քանզի էր աշաքինի. և յոյժ ջերմեռանդ առ ամենայնաբ կոյս ածամայրն։ Այս իբրև եկև հերեքտասան ամաց, բռնադատեալ ի ծնողացն, եմուտ ի կարգ աշխարհի. բայց զգուշեալով յայնմանէ՝ ցանկայր մնալոյ ան-ն իբոյ. և եհաս որում ցանկայրն. զի զկնի հինգ ամաց՝ մեռաւ այր նորա, թողուլով զերիս արու զաւակս ի նմանէ ծնեալս. և միայ այրի իվեռք՝ գեռ գոյութիւն ուխտատեան ամաց։ Ընդ՝ իբրև զերծաւ ի լծոյ ամուսնութեն, եւս զանձն բոլորովին հոգևոր կրթուքեց. և կայր առանձնացեալ միշտ ի սենեկին իւրում. և առներ անդադար աղօթս առ ած, և առ

առ ամենայնիք մայր նոր. առնէր և ողոր-
մութիւնս բազումս ալքատաց և անանկաց.
և կայր իբրև վհրեշտակ ի մարմնի. Օ՜ կնի
մնհոլման առն՝ զարձեալ բռնադատեցաւ
ի հօրէն մնանել ի կարգ աշխարհի. մինչև
նաև եպիսկոպոս տեղւոյն վն ազաչանաց
հօրն յորդորեաց զնա առ այն, բայց ոչ
էառ յանձն իւիեակ. Ոսկ բանաարկուն սա-
տանայ նախանձեալ բնդ առաքինութի՛ն
նորա՝ փորձեաց զնա բազում անգամ ե-
րևելով նմա տեսլեամբ ահարկու գազա-
նաց. բայց ոչ կարաց առնել ինչ նմա.
Ապա գրգռեաց ի յանկութի՛ն նր՛ զերի-
տասարդ ոմն մերձաւոր ազգական առն
նորա. որ էառ նմա պատերազմ զանազան
շղագործական բանիւք. Այլ իբրև ոչ
յաջողեցաւ պագշոտ երիտասարդին՝ ձգել
զնա՛ի կամ իւր բանիւք, խորհեցաւ բըռ-
նութի՛ն ձգել զնա առ այն. Ասաի մինչ
՛ի գիշերի միում գտաւ իւիեակ արտաքոյ
տան իւրոյ ՛ի տան բարեկամի միոյ, ուր
էր և սիրահարել երիտասարդն, և սպա-
սէր՝ զի ամենեքեան ՛ի քուն մտցեն, ահա ՛ի
քուն լինելն ամենեցուն, եմուտ երիտա-
սարդն լռելեայն սուր՛ի ձեռին ՛ի սենեակն
իւիեակայ. և խարխափելով զտրմուկն սենե-
կին, մերձեցաւ յանկողինն. Յայնժամ
իւիեակ, որ ՛ի կասկածանս գտեալ վն ե-
րիտասարդին, կայր արթուն, և ՛ի սրտի
աղաչեր զմայրն ՅՍ օգնական լինիլ ինք-
եան, զգացեալ զշնջիւն ոտնաձայնի, և
խար-

խաբեսիանաց, գիտաց, Թէ գայ երի-
տասարդն վարեալ ի կոյր պաշտօտուԹէ
իւրմէ, զահի Հարաւ յոյժ. և նոյնհետայն
սկսաւ դիմել առ պաշտպանն իւր առ ա-
մենաթը կոյսն, և ասէ. ծիլ մայր մաքրու-
Թէ՝ ես կոյս մարիամ, Հաս ինձ յօգնու-
Թի ի ժամուս յայսմիկ և ի մեծի վտան-
գիս. զի մի մեղայց առաջի քոյ և առա-
ջի նոն իմոյ որդւոյ քոյ։ | ոՀաս աղաչա-
նաց նորա ամենաթը կոյսն, և երևեցաւ
նմա անդ վաղվաղակի որոտմամբ մեծաս
շուրջ պատեալ փայլակնացայտ և անձա-
ռելի լուսով, և անպատմելի վեՀափա-
ռութ. և քաջալերեալ մխիԹարեաց զնա։
|Նա ոզորմելի երիտասարդն իբրև լուաս
զբոտոտումն սոսկալի, և եռաց զլոյնն, զար-
Հուրեցաւ, և փախեաւ՝ եղ արտաքս ի սե-
նեկէն իւրեւոյ. և եմուտ յանկողինն իւր.
և դադարեաց այնուՀետև փորձուԹենէ
նոնանէ։ Օ կնի քանի մի աւուրց այսր այ-
ցելուԹէ, զոր արար ամենաթը կոյսն ի-
վեռեալ, ընկալաւ նա՝ և զայլ իմն բա-
րեթարուԹի ի նոյնոյ ետ կուսէն. որ է-
զև այս։ |Ի գիշերի միում՝ զկնի աղօԹիցն՝
մինչ կամէր ննջել, յարիշտակեցաւ մտօքն.
և եռաս զմեր յն քն ընդ ամենաթը
մարն նատեալ յաԹոռ դատաստանի՝ դա-
տել զամպ մարդկան. և տեսանէր, զի
լինէր նրբազնին քննուԹի. և գրեԹէ
ամենեքեան գատնէին պարտաւորք. և վի-
նէին դատապարտեալք։ |Կին քննուԹենն
իմ նաև

նաև ՚ի վեր իվեռեայ և նա և ա գտաւ պար-
տաւոր ծանր մեղայ լինէ . որով ուներ զա-
տապրանքն ՚ի գժոխս : Օ արհուրեցաւ յոյժ
իվեռե . և ամբարձեալ զաչն առ ամե-
նաքս կոյս , հայցեր արտասուօք զօգնու-
թիւն ՚ի նմանէ՝ փրկել զնա ՚ի դատապար-
տութենն : Եւ գթացեալ նոքս կոյս ՚ի վե-
նորա . ասէ դպատաւոր ցորդին իւր . ներ-
եմ ասացեմ որդեակ իմ , մեղայ սէր . զի
զայն յանդիմտութենէ և ՚ի մանկութենէ իւ-
րում գործեաց . և ոչ ծանեաւ զայն մեղք
լինիլ . ասա թէ ոչ՝ ունի զայլոց մեղաց իւ-
րոց արար զապաշխարութիւն , այսպէս և
զայնմանէ առներ : Եւ դատաւորն ասէ .
ահա վն աղաչանաց քոց մայրդ իմ սիրե-
լի , ոչ դատապարտեմ զնա , այլ չնորհեմ
քեզ . և դու արա , զի ապաշխարեսցէ նաև
յայնմ մեղաց . և զայս ասացեալ՝ անյայտ
եղև տեսլիւն : Վարձեալ ՚ի յուշն իվեռեայ՝
ուրախութիւն մեծաւ գոհանայր զտէրն՝ և
զամենանօր մօրէն նէր . և զղջացեալ ՚ի մե-
ղացն յայնմանէ , խաստովանեցաւ և արար
զարժանաւոր ապաշխարութիւն : Իսկ թէ
զինչ մեղք էր այն՝ զոր գործեալն էր և
ոչ ճանաչէր , ամենեքեան՝ որք գրեցին զվ-
վարս նորա . ասեն թէ էր ցանկալն մա-
հմանն առն իւրում : Օ հնի այսոցիկ այ-
ցելութեց , զորս արարն նմա ամենայնք կոյսն ,
յաւել իվեռե ՚ի ջերմեռանդութիւն և ՚ի
գործս բարիս . մանաւանդ այցառնելոյն
քորոցաց ՚ի հիւանդանոցս . և առնելոյն

քաղցումն ողորմութիւնս աղքատաց և տնանկաց՝ այնչափ, մինչև տալ ընդնաև զհանդերձս իւր՝ զոր զգեցեալն էր. և զպատառն՝ ի բերանոյն։ Այլ եկաց այսպէս զամն քաղցումն՝ ի մեծի սրբութեն. և մարգարէացաւ ևս քաղցումն ամօք յառաջ, զոր մահուն իւրոյ. որ եղև յամի փրկչին. 1227։ Այլ վախճանեալ լի արդեամբք, փոխեցաւ յայրքայութենէն երկնից։

Պատուհաս։

Որպէս ահարկու ձայնիք որոտմանցն և փայլակնացայտ լոյսն զարհուրեցուցեալ զպագշուտ երիտասարդն զայն, շինօղն՝ ի նմա զհուր յանկութենէն, այսպէս քաղցումն անգամ նեղութիւնք և վիշտք պատահեալք մեզ, դադարեցուցանեն զմեզ՝ ի մեղաց. և առնեն խոնարհս. զոր օրինակ, որդնալից հիւանդութենէն անտիրոջս Թագաւորին արար զնա խոնարհ, որ յառաջն պարծեր ամբարտաւանութեամբ ելբև զսադայէլ. որպէս գրի. 2. մակաբ. Թ. 11։ Այլ պարարի է և մեզ, զի ելցեմք երբեմն՝ ի նեղութենէ և՝ ի ձախորդութենէ. և յորժամ գառանիմք այսպէս՝ ի նեղուն, առաջագոյնք զայն բան մարգարէին. Նայրն է, զի ես-նարգի արարեալ ինձ, որպէս զի առաջի զպատուհասիցես։

ՀՀՆԱՈՒԹԻՒՆ ԿՈՅՆ ԵՐԵՒԵՑԱԾ ԿՈՎԵԼՈՅ ԱՂՋԻԿԱՆ ՄԻՈՅ ԻՍԿՈՅ ՔԵՐՄԵՌԱՆԴԷ Ի ՄԱՀՈՒՆՆ ԱՐ . ԽՆԴՈՒԵՑ ՆՄ ՊԱՏՐԱՍՏ ՔՆԴ ԻՍԿ Ի ՅԵՐԷՔՆԱ :

ՅՈՒԴԱ ԿԱՌՈՒ

Ջոր պատմէ ԵՒրիկոս գրանն Ի գիրս իւր , կոչեցեալ՝ հայելի օրինակաց . յօդ . 96 : Եւ հայրն գառլոս բո՞ վինեան . հատոր . Բ . օրինակ . 12 :

Ընդ և աղքատ աղջիկ ոմն Հուլիէ , և յոյժ ջերմեռանդ առ աւետնաբեր կոյս Ածածինն , սովոր էր արածել զխաչինս իւր Ի դաշտավայրն միւսմ . ուր կայր մանուկ մի տիրամօր Ն Բ կուսին՝ լքեալ յամենից , զի էր տեղին անշէն : Այս նոյն ներ յաւուրն բազում անգամ աղջիկն Ի մատուռն յայն . և կայր ջերմեռանդապէս յաղօթս առաքի արձանեայ պատկերն աւետնաբեր կուսին , ասելով զվարդարան նորա : Այլ ապա հայեցեալ Ի պատկերն , ասէր պարզութիւն սրտին , ոմ թէ օրշափ գեղեցիկ և հնարհալի ես կոյս Ածածին մարիամ . բայց զարմանամ , թէ ո՞րպէս լքեալ և Ի քաց Թողեալ կաս յամենից . և ո՞րպէս հնոտի և պատառատուն հանդերձք՝ զոր ունիս Ի վր . ոմ թէ կարօղ լինիցի առնել քեզ հանդերձս պայծառս և գեղեցիկս . քայց ցաւ է ինձ . զի աղքատ եմ և ոչ կարեմ . սակայն ջանայից ասել մտա-

մոադրութիւն զվարդարան քո. և առնել
ջերմեռանդապէս զաղօթս իմ առ քեզ.
և հաւատամ, թէ սոքօք առաւել պայ-
ծառ զգեստս առնեմ քեզ, քանթէ ըզ-
մարմնաւոր հանդերձ ինչ կարօղ լինիմ
առնել: Օ այս ասեր, և ապա առնէր ա-
ղօթս առ Աստուած կոյսն բորբոքեալ սիրով,
|ոսկ թէ օրչափ հաճոյ և ընդունելի է
զին ամենեցուն կուսին աղօթիք և բաղձանք
նորա, յայտնապէս երևի ի յայցելութենն,
որով այց արար նմա ի ժամու մահուան
նորա. և ընկալաւ զհոգի նր. որպէս ա-
ռաջ ունիմք գրեալ: |ետ զկնի ժամանա-
կաց ինչ հիւանդացաւ երանելի աղջիկն.
և զօրացեալ փոքր փոքր հիւանդութենն,
էհաս աւանդել զհոգին: |ւ ահա յա-
ւուրն յայնմիկ երկու կրօնաւորք առաքե-
նիք գնային զմանապարհ իւրեանց ընդ
տուն մի մօտ գեղջն այնորիկ: |րոց միոյն
բռնադատեալ յոյժ ի քնոյն, և ոչ կարե-
լով մերժել զայն յանձնէ, տարածեցաւ
ի վր հողոյն, և նիջէր: |ոսկ միւսն կայր
յաղօթս մինչև փոքր մի հանգուցեալ ըն-
կերն քնով, զարթեալ եւ ասպա երթի-
կեն զմանապարհ իւրեանց: |ւ մինչ կրօ-
նաւորն սրթուն կայր յաղօթս, եռես,
զի գայլին դեպ առ ինքն երեք դասք գե-
լեցիկ կուսանաց մի զկնի միոյ հիանալի
ինն կարգաւ: |ռաջին դասն կուսանաց
զգեցեալքր հանդերձս յերանգ քաղմա-
պատն փոխոխեալ. երկրորդն զգեցեալ

էր հանդերձս սպիտակ քան զձիւն. և երբորդն ի գոյն կարմիր իբրև զծիրանի. որք և եկեալք ետուն նմ՝ ողջոյն լուծք, և անցեալ գնացին. Այսպ երևեցաւ, Թէ գայ գշխոյ ոմն վկհափառ և յոյժ գեղեցկիկ քան զնա. յորմէ հատանէին ձառագայթք լուսոյ. և զգեցեալ էր հանդերձս նկարեհնա՝ լի հիանալի պայծառափայլ, գեղեցիկ ծաղկամբք. և ունէր պսակ ի գլուխն ի սպիտակ և ի կարմիր վարդից. Որ իբրև մերձեցաւ առ կրօնաւորն, յոտն եկաց նա. և խոնարհեալ երկիրեպագ նմա, և ասէ. Ներեա ազաչեմ տէրուհի՝ համարձակուիմ. և ասաւ ինձ. Թէ ա՛ես դու, և ա՛ էին կուսանքն, որք ընթանային առաջի քոյ, և այժմ անցեալ գնացին. Այ՛ս ինա քաղցրուհի տէրուհին. ես եմ մարիամ մայրն Այ. և երեք դասքն այնոքիկ, որք անցին, են ամենեքին կուսանք յարբայուքեն երկնից. Այ՛ս աջինքն՝ որք զգեցեալ էին հանդերձս ի գոյն բազմերանգ փոփոխեալ, են նոքա, որք մինչ յաշխարհի էին, կային ի վարանս՝ եթէ ամուսնասցին, Թէ ոչ. Երկրորդքն, որք զգեցեալ էին հանդերձս սպիտակս՝ նոքա են, որք ուխտեալ զկուսութիւն՝ պահէին զայն անարատ մինչև ցմահ. Իսկ երրորդքն, որք զգեցեալ էին հանդերձս ի գոյն ծիրանւոյ՝ նոք են, որք վն պահելոյ զկուսութեն և զհատատ իւրեանց՝ նահատակեցան վասն սիրոյ որդւոյ իմոյ. Այ՛ս մք զաւելի

փառս ունին յարքայութենն երկնից՝ քո զերկ-
րորդսն, և երկդքեան զառաքինսն։ Այժմ
այժմ գնամք ամենեքինս այլ առնել աղ-
քատ հովիւ աղջկան միոյ՝ իմոյ ջերմեռան-
դիս, որ կայ ի տագնապի մահու՛ան, զի
ընկալեալ զհոգի նր, տարցուք ընդ մեզ ի
փառս արքայութենն երկնից։ Եւ այս ես նմա՛ի
վարձ այսմ մեծագին ծաղկեայ պատմու-
ձանիս՝ զոր զգեցույց նա ինձ ջերմեռանդ
սրտիւթիւքն իւրովք։ Այս զայս ասացեալ՝ ա-
ներևոյթ եղև տեսիլն ինմ։ Ոնոյն տեսիլ
ամենևին նմանն նմին եռես նաև կրօնա-
ւորն՝ որ ննջեր։ Եւ զարթեաւ վաղվաղակի ի
քնոյն։ Եւ սկսան երկոքինն ևս ուրախանալ
և հիացմամբ մեծաւ պատմել միմեանց՝
զոր տեսինն, մինն յարթնուԹե՛, և միւսն
ի յանուրջս։ Եւ ապա ասեն ցմիմեանս,
զարձյուք երԹիցուք և գտցուք զայն հի-
անդ, և տեսցուք զաքանչելին նա։ Այս
զարձան մինն ի գիւղն՝ ուր կայր հի-
անդն։ Եւ հարցեալ ամենց գտին զաղ-
քատիկ տուն նր, ուր ոչ ոք կայր բայ ի
հօրէ աղջկանն։ Եւ ողջունեալ զնա գնա-
յին առ հիւանդն, և օգնեին նմա ի հո-
գեվարումն նր։ Այլ ասեն ցմիմեանս.
ուր են ապա դասք կուսանացն և ամե-
նաւք կոյսն, զորս տեսաք ի Ճանապար-
հին գալ այսր, և այժմ ոչ երևին. մի
գուցէ կայ այլ ոք հիւանդ աղջիկն ի գեղջս,
և անդր գնացին նք։ Այս մինչ զայս խոր-
հէին, ահա աղջիկն զօրացեալ, ասէ. բա-

ցեք զգլուխս ձեր, և ծունր դիք, հայրք իմ. և ինդրեսջիք 'ի ձեզ, զի և ձեզ ցուցցէ զայս գուշդ երկնային և վեհսփուռ, որք եկեալ են այց առնել ինձ: Ա.ռարին կրօնաւորքն այնպէս. և իակոբն տեսին անդ զնոսա կոյս ածածկին ընդ այնց երից դասուց կուսանացն՝ զորս տեսին 'ի Հանապարհին. և քայ 'ի նոցանէ տեսին գոլ անդ և զգասս անթիւ հրեշտակաց և սրբոց, որք եղանակէին զերգս անուշիկ: Օ.որս տեսեալ և լուեալ կրօնաւորացն՝ կային 'ի հիացման և 'ի զմայլման: Ա.ւ ապա տեսին, զի աւանդեաց երանելի հիւանդն զհոգին իւր. զոր և իակոբ Թագուհին երկնից պսակեաց ծաղկամբք վարդից. և առեալ ընդ իւր, համբարձաւ յերկինս հանդերձ ամենայն դասուք սրբոց՝ որք անդ էին. և եմոյծ 'ի փառս արքայութեն երկնից:

Պատառ:

Ա.սացուք յերանելի խաչնարած յաղջկանէս յայսմանէ զջերմեռանդութի 'ի յաղօթս մեր, և զաղքատասիրութի Թէ 'ի զգենուլս մեր, և Թէ 'ի կերուլս. քանզի ընտրեաց Աստուած զանարատ կուսութի, վայ է մեծատանց. և երանի է աղքատաց: Ա.յլ ասէ Տէր աղքատասիրին է, որ հալածէ 'ի սրտէ մերմէ զսէր աշխարհիս հուս, և 'ի ներքս մուծանէ զսէրն այ. որպես ասէ օգոստինոս: Ա.յլև խրէ 'ի քայ

զնմ արմատս մեղուիցեայ , զի մի՛ բողբո-
ջեսցին . և արտաքս քարշէ զնիւթն , զի
մի՛ ուռիցին , ուստի սնուցանիցեն զայր
իւրեանց . վերս այն ասէ սենեկաս . Հաշեա ինէ
ինձուսէ ցարձանն էմ . բաբէքախա էս՝ երէ կո-
ղուսեր ընդ նմին և պահպահուիւէ . և ինէ պահա-
ւին հայ ՚ի ձեզ , այնպէս բաբէքախապահոյն էս ,
որչափ բարձաս ՚ի ձէն նիւթ չարին :

Յաղագս հրաշալի մոմեղինին , զոր եպ ամենասէր կոյսն
՚ի Բժշկուիւէ հիւանդացն :

ՀՐՇԿՈՑ ԿԻՒ :

Ջոր պատմէ դուկինէմոս գաղեանն ՚ի դիւրս իւր : Եւ
հայրն գառլոս բովիեան . հատոր . Բ . օրինակ . 7 :

Յամի փրկչին . 1105 . յաշխարհին բել-
գիոնի ՚ի քաղաքին ատրեբատու ,
որ է արբաս՝ անկաւ ՚ի տոնէ հիւանդու-
թիւն խիճ մեծ իբրև ժանտախտի ՚ի վերս բո-
նակեաց քաղաքին , ՚ի սպատիժ մեղաց նո-
ցա , որով բազումք ՚ի նոցանէ մեռանէին .
ոչ կարելով գտանել զդեղ և զդարման
ինչ ՚ի բժշկաց : Այսմ յուսահատեալք
յօգնութենէ մարդկան , դիմեցին սրտի
մտօք յօգնութիւն ամենաձեռն կուսին . և նա
գթացեալ ՚ի նոսա , երևեցաւ նոցա
այսու օրինակաւ . Այնր երկու քնարա-
հարք բարեպաշտք բնակեալք ՚ի զանազան
տե-

տեղիս, ՚ի միում ՚ի բրաբանութիայ՝ անուն
իսերոս. և միւսն ՚ի գլեակն սքղն պողո-
սի, որ ՚ի տերոպիսիս, կոչեցեալ պետրոս:
Որոց ՚ի տեսլեան երևեցաւ ամենանոր կոյս
վիճափառ կերպարանօք. և հրամայեաց
նոցա երթալ ՚ի յատրեբատա քաղաք. և ասել
եպիսկոպոսի քաղաքին, զի ՚ի յետագայ կի-
րակամուտ գիշերին հակիճ կացցէ յեկեղե-
ցի մինչև ցհասանօսն. վասն ունի երևիլ
նմա անդ տիրուհի ոմն. և տալոց է նմա
զմոմեղէնն ի, զոր թէ կաթեցուցէ ՚ի ջուր,
տացէ բմպել լուծանալ զվէրս՝ հիւանդաց
ըմբռնելոց յախտէ անտի, գոցեն նոքա այ-
նու զբաժակն: Եւ այս տեսիլ եղև առ նո
երկիցս: Այսպէս յարուցեալ քնարահարքն այ-
նոքիկ գնացին ՚ի յատրեբատա, և մինն առ
եպիսկոպոսն՝ որոյ անունն էր յամբերտոս.
և պատմեցին նմա զերկիցս երևիլն նոցա ամե-
նաքաղցր կուսին, և զբանն՝ զոր հրամայեաց նոցա
ասել նմա: Եւ հաւատաց նոցա եպիսկոպոսն՝
տեսանելով թէ ՚ի զանազան և ՚ի հեռաւոր
տեղեաց եկեալք՝ վնասն բան ասեն. և ա-
ւուրս երիս ծոմապահեալ ըստ նմա, գնաց
՚ի կիրակամուտ գիշերին ընդ նմա և ընդ
քաղմուէթէ ժողովրդոց քաղաքին յեկեղե-
ցին, և կային յաղօթս սպասելով կա-
տարման բանի սքղ կուսին: Եւ ահա յա-
ւաջնում հաւատոսին երևեցաւ նոցա ա-
մենասուրբ կոյս իջեալ ՚ի դասէն՝ օգոս-
տափառ վայելուչք, պայծառ քան զար-
փին. և ունէր ՚ի ձեռին զմոմեղէնն ի վառ-
եալ.

եալ . և ետ զայն երկուց քնարահարացն
այնոցիկ . և ինքն ետուն զայն եպիսկոպո-
սին : Իսկ առա ասէ ՚ի լուր ամենեցուն .
Լայիելս ինչ կամիցուցեալ ՚է ամենէ ՚ի ջուր , զաքի-
ըմպել հիւանդացս հերոց . և լսեսցի՛ս այնու վճիռս
նոցա . և գտցի՛ս այնու պէտիչաւ . և ապա պահեցի՛ս
զայն ՚ի չէզոտակ ՏՇնջենաւորս . և ես արարից հեղ այ-
նու առ յապայն պէտմ ընդկս . և զայս առացեալ՝
եղև աներևոյթ : Իսկ երբև տեսին բազմութիւք
ժողովրդոցն զամենեսեան կոյսն , և լսէին
զձայն նր , անկան յերկիր երբև զարբե-
ալս ՚ի հիացմանէն և ՚ի խնդութենէն , և
ապա յարուցեալք գոհանային զնոնէ , և
զամենեսեան մօրէ նորա : Եետ այսորիկ ըս
բանի ամենեսեան կուսին բերին ՚ի մէջ զբնմ
անօթս լցեալս ջրով . և եալիկն օրհնեալ
զայնս՝ կոթեցոյց ՚ի նն կաթիլս ինչ ՚ի մո-
մեղինէ անտի . և ետ տանիլ զայն հիւան-
դաց . զի արբցեն զայն հաւատով . և լսե-
ցեն և զիտեալ և զխոհեմութիւն վերս իւրեանց .
Որ երբև արբին հիւանդքն հաւատով և
ջերմեռանդութ , բժշկեցան միայն ՚ի միջո-
ցի երից և չորից աւուրց՝ արք հարիւր և
վաթսուն յանտանելի կիզմանէ կեղտին , և
՚ի չարչար վերոց իւրեանց : Իսկ մի ոմն ՚ի
հիւանդացն յայնցանէ գոլով Թերահաւատ ,
ոչ կամեցաւ ըմպել զայն ջուր . այլ ծաղր
արարեալ ասէ , լաւ է ինձ ըմպել բաժակ մի
գինի՝ քան զայդ ջուր . բայց նակտին պատ-
ժեցաւ , զի մինչ դեռ բանքն ՚ի բերանն
էին , աձեաց այնչափ ախտ կեղտին , մին-
չև

չև բոցակիզիւր ՚ի ներքուստ, մինչդի նոյն-
ժամայն անդգայացեալ՝ փչեաց զՔշուա-
ռական հոգին։ Ապա յետ աւուրց ինչ
առեալ զնբ մոմեղէնն զայն եդին յար-
ծաթի փառաւոր յանօթ ինչ եղեգնաձև
կազմեալ՝ արուեստաւոր դրօճագօր. և
պահեցին զայն ՚ի զգուշութեն. և կար-
գեցաւ ՚ի պատիւ նորա նոր եղբայրութի
իմն կոչեցեալ՝ փաղաքեղց. յորում գրեցան
նաև բազումք յաշնուականաց։ Ա յետ
այսորիկ ամենաքբ կոյսն ոմն և խոստաց-
եալ էր, նոյնպէս և կատարեաց. զի յօ-
րէ անտի մինչև ցայսօր արար և առնէ
զբազում շնորհս և բժշկութիս և սքան-
չելիս մոմեղինսն այնոսիկ՝ ուխտաւորաց,
և ջերմեռանդից իւրոց։ Սակ որ հիանալին
է քան զամ, այս է. զի յօրէ յայնմանէ մին-
չև ցայսօր ամն՝ 666. թէպէտ յամում
ամի ՚ի ձայնաւոր պատարագին՝ և ՚ի մե-
ծի Թաւիօրին՝ (զոր առնեն ընդհերկարա-
ձիգ Հանապարհ) յաւուրն հանդիսուն նր,
լուսանեն զայն մոմեղէն. նաև բիւրեցս
կաթեցուցեալ յայնմանէ կաթիլս ինչ ՚ի
ջուր, տան ՚ի բժշկութի հիւանդաց, և
յայլ պետս հաւատացելոց, սակայն ոչ
սպառի, և ոչ է սպառեալ մոմեղէնն այն,
այլ կայ մնայ ՚ի նոյնում մեծութի իբր երից
թզաց, ոմն երն՝ յորժամ պարգևեցաւ յա-
մենաքբ կուսէն։ Ա զի բազումք զհետ
երթեալ Թերահաւատից, երկբայեցան ՚ի
վերն անսպառ մնալոյն նր. և կարծեցին և
կար-

կարծեն, Թէ խարդախե՞լ ինչ գործի յայսմիկ, վը՛ն այն հաստատեցաւ այս պատմութի՛ն, և այս անսպառ մնալս մտերնինն այնորիկ յերկուց ծայրագոյն քահանայապետացն հռոմայ· այր՝ ի սխատակ չորրորդէ, և՝ ի կղեմայ ութերորդէ։ Ի վախճանի պատմուեա գրեցաւ՛ք զմինն՝ ի քաղուա՛ք սքանչելեացն՝ զոր արար Աստ՛ուած ընդ մտերնինն այնորիկ, և է այս։ Նկատ երբեմն հարմարք կայծակին հրդեհ մեծ յեկեղեցւոջն յայնմիկ, յորում պահէին զայն մտերնէն. և՝ ի խնդիր ժողովրդեանն, Թէ ելիցէ զրկորս գատարկեցին առ՝ ի շինուցանել զայն հրդեհ, սակայն ոչ եղև կարելի։ Նպա իբրև սրսկեցին՝ ի վե՛ր հրոյն կաթիլս ինչ յայնմանէ ջրոյ, յորում կաթեցուցեալ էին փոքր մի՝ ի մտերնէն անտի, իսկոյն շիջաւ հուրն բոլորովին. և ամենեքեան անկեալ յերկիր, մատուցին գոհութի՛ւն այ, և ամենանք մեր նո՛ր։

Պոռաղ։

Օ այս առնուք մեզ խրատ՝ ի պատմութե՛ն, Թէ մտերնէնն լուցեալ նշանակ է կենդանի հաւատոյ. իսկ շիջեալն՝ մեռեալ հաւատոյ։ Նրդ՝ կենդանի հաւատն այն է, որ գործովք պայծառացեալ փայլէ։ Նբրեմն որք ոչ կանան առնել զգործին, ոչ ունին այնպիսիքն զկենդանի հաւատ, որպէս և առաքեալն յայտնապա՛ս ասէ. հաւատ առանց գործոց մեռեալ

էն : Բայց մի ամբարիշտ ուղղափառաց՝ որք համարձակ գործեն զբարն , ասելի է . Թէ այնպիսիքն ունին զվատաւոն լուսեբոսի , որ ամբարշտօրէն քարոզէր ասելով . Հաճապատ հաղորդապէս , և փորձեսջ զքոն աներկիւղօրէն . որ է վարդապետութիւն դիւականի , և քաղցրութիւն ընդէմ բանիցն քոնի , որ և ցմեղսասէրս քրիստոնեայսն , Թէպէտ և հրաշագործս , ասելոց է յաւուր դատաստանին . Ի բաց կացէք ինձէն ամենեքեան , որ փորձէք զանօրէնութիւնն . մատ . է . 23 .

Լըշպատեաց ամենաբ կոյան պիտանակեաց ոմն Ի փոքր յոռնէ պիճին . և եւ նմա խրատս պիտանիս :

ՅՐ Ր. Շ Ա. Կ Ո.

Ջոր պատմէ ենրիկոս գրանն Ի գիրս իւր կոչեցեալ՝ հայելի օրինակաց : Եշ հայոն գառւոս բովիկան . հաստատ . ե . օրինակ . 33 :

Յամի փրկչին . 1082 . երիտասարդ ոմն բարեսէր և յոյժ ջերմեռանդ առնաբ կուսին , հրաժարեալ յաշխարհէ , և մուտ Ի կրօն կարգուսեանց միաբանեցեալ ընակացիս յեղբայրական կարգի : Եւ Թէպէտ էր Ի ուսումն տոհմէ , և ոչ գիտէր կդպրութիւն , սակայն զիւրն յոյժ աղօթասէր , հնազանդ , և խոնարհ , պատրաստեալ անարգ ծառայութեան , պահեցօղ , և

և խոշտանկիչ մարմնոյն , ուստի և փու-
թով ստացաւ անդ ՚ի կրօնի յայսոսիկ
վարժս զգիտութիւնն երկնային ըստ պօղոսի
որ ասէր . ոչ եմ ՚ի նոր եղէ գիտել ինչ ՚ի չեզ-
քայց զայն պա՛ տ . և զնոյն ՚ի խաչ ելեալ . ։
կորն . ը . 3 ։ Ապրդ՝ տեսեալ դիւքին զայս-
պիսի սքանչելի սրբուն վարուց նր , կըր-
ձուէր զատամունան ՚ի վր նորա և սկսաւ
փորձել զնա ահարկու տեսլեամբք զգայգ
և զերեկ ։ Այլ գլխաւոր փորձութի նր
այս եղև , զի յաւուր միում՝ մինչ երա-
նելի միաբնակեացն վաստակեալ յաշխա-
տանաց պարտիզին , եկն ՚ի սենեակ իւր , և
անդ ՚ի ծունկս իջեալ առաջի պատկերի
ամենանոր կուսին՝ կայր յաղօթս , ահա
բազմութիւնք դիւաց մտեալ ՚ի կերպարանս
սոսկալի առիւծուց , վարազուց , և շանց
կատաղելոց՝ երևեցան յանկարծակի ՚ի սե-
նեկին նր . և շուրջ պատեալ զնովաւ , և
բացեալ զձիրանս և զժանիս իւրեանց՝ դի-
մեցին ՚ի վր նորա գիշատել զնա չարաչար ։
Ապակ միաբնակեացն Թէպէտ երկեաւ յոյժ
՚ի տեսանելն զնոսին , սակայն զօրացեալ
հաւատով , սկսաւ կոչել յօգնութի իւր
զնր կոյսն , և ասէ , Հա՛ս ինձ յօգնութի
ո՛վ նր կոյս ածածին , և ցրուէսցին թըշ-
նամիք քո ։ Ապակ դժոխային գազանքն այ-
նոքիկ՝ Թէպէտ գրոհս տային ՚ի վր նր ,
սակայն ոչ կարէին մերձենալ ՚ի նա ։ Այլ
ապա երևեցաւ անդ և այլ դև մի ՚ի կեր-
պարանս սոսկալի , սեաւ , և զազրադէմ

առն

առն հակայի . և ուներ ՚ի ձեռին զբա-
տուր և զերկայն ձանկ երկաթի . այ-
երկնէ խանձայ . և ասէ ցայլ դեւս . վայ
ձեզ անարդ գազանացդ . որք ոչինչ կա-
րէք առնել ընդդէմ ուրուն երկչոտ նա-
պաստակի . այժմ տեսջիք , թէ որպէս ես
չարաչար սպանից զնա : Այլ զայս ասաց-
եալ՝ երկարէ զձանկն ՚ի միայնակեացն , և
կալեալ զհանդերձէ նորա , քարշեր զնա
ընդ երկիր : Իսկ ողորմելի միայնակեացն
կոչեր անդադար յօդնութիւն իւր զտիրա-
մայր ՚ի կոյս : Այլ լուեալ ձայնի աղա-
չանաւի նորա ամենաներ կոյս . և երևեցաւ
անդ իսկոյն օգոստափառ վայելչութիւն ,
և ուներ ՚ի ձեռին գաւազան , որով հար-
եալ զձանկն , ասէ ցնա . ոՀր համարձա-
կուի ես ձեր ՚ի վերայ թշնամառականք՝ մնոանել
յայս սենեակ , և չարչարել զծառայն իմ:
արդ հալածեալ կորիջիք աստի . և այլ
մի և յաւելուած դառնալ այսր : Որ իբ-
րև լուան դևքն , իսկոյն իբրև զփայ-
լակն անհետ լեալ՝ հալածեան անտի :
Այլ ապա դարձեալ առնաներ կոյսն առ
միայնակեացն , ասէ ցնա . Այս պ հաճոյ ե-
ղեր ինձ և որդւոյ իմոմ Յիսուսիէ արդէք , և
ջանիցէ ինեալ առաւինուիէ , վ այն առ ՚ի յաւե-
լուլ ինէ ՚ի վարս բարիս , զոմ ինէ խրատ պերիս
զայս , այսինքն է , պինեցէր միշտ խոցրս և ա-
նարգս . ինէր աղաւորիէն . և աշխատեցայ անդա-
դար . և ասա ասէ . եինէ պահեցոյս զայսոսիկ
խրատս իմ , արասցես զպատուղ մեծ յընծայս առաջ
տիրոջ

ինաւրէն : Օ այս առացեալ , և թողեալ զգ-
ծառային Քրիստոսի ի վիճակարութեան , եղև ա-
ներևոյթ : Իսկ միայնակեացն ի միտ ա-
ռեալ զխրատուն ամենաւրէն կոչնին , կա-
տարեաց զայնս լիով մինչև ցվախճան կե-
նացն յօրինակ բարւոյ , և ի հիացումն ա-
մենեցուն . և այսպս հանգեաւ խաղաղու-
թեամբ ի քրիստոս :

Պատմ :

Օ այսոսիկ երիս խրատս ամենաւրէն կոչս
ածանձնին , զոր ետս այսմ կրօնաւորի ,
ընկալցուք և մեք յօժարութեամբ սրտի իբ-
րև խրատս ամենաւրէն մօրս մերոյ . և զա-
նացուք գործով կատարել :

(Աստեղիոս լինի ամենաճշմ էոյան վասն իշխանին Փոյ, որ ոչ ընդունէր զաղաւոս ի գոան։

ՏԻՐԱՑ ԿԵՑ

Ջոր պատմէն Եւսեբիոս ի ժամանակագիրս իւր. և հայոյն վաղերնոս վէնետկեցին ի գաշտն Ծաղկալի։ Եւ հայրն գառնոս բովիեան. հատոր. Ե. օրինակ. 22։

Ասէ և փարթամ իշխան ոմն նոսխադրար՝ ջերմեռանդ առ աստուածն կոյս ածածինն՝ խորհեցաւ շինել ի պարծանս անուանն իւրոյ զփառաւոր և զմեծակառոյց պալատ իմն առ ի ստանալ այնու ըզմնոտի փառս ի մարդկանէ։ Եւ զոր խորհեցաւն՝ կատարեաց. ուստի իբրև եղեւ ցայգ վհիանալի և զարուեստաւոր շինուածս պալատին, փակեաց զայն շուրջանակի նսեմ գեղեցկաշէն պարսպօք իբր զդղեակ իմն. և ապա գրեաց ի վէր գրան պարսպին զայս բան. Ով ձիս կոպաս, մի ասէ ի ձաղանէսդ և ի նիզակս ոտիկ ոտ, այլ զայն ասէ ազատ, պղատոն, և արքեպս. որով բանիւ զայս կամէր ասել. Թէ ի սմին պալատի ոչ երբեք հիւրընկալեալ լինին աղքատք և ոտիկք. այլ միայն ապահաք և զօրապետք, ոմն էր աքիւլլէս. գիտունք և իմաստունք, ոմն էր պղատոն. տիկ-

նայք և իշխանութիւք , ոմն էր արտեմիս։ Եւ զոր գրեայն , նոյնպէս և արար , մի՛ զի ոչ երբեք ընդունէր ՚ի պալատին յայնմիկ զաղքատս և զաստիկս , այլև իբրու անարժանս նաև լսել տեսութենն, վարէր արտաքս զնոսին ։ Եւայց զմեծատունս և զիշխանս և զիշխանուհիս ընդունէր մեծաւ սիրով ։ և միշտ ընդ նմա ձաշակէր ։ Եւ այսպէս՝ որում ցանկայրն , ՚ի մուտի փառաց աշխարհիս , ժամանեալ այնմ ։ զի գային մեծատունք , ուտէին և լմնկէին ։ և գովաբանեալ մեծացուցանէին զնա և զպալատ նորա ։ Եւսկ ազքատաք և ոտնկք՝ յորժամ սովեալք և ծարաւիք գային ՚ի պալատն , խափտն հալածեալ լինէին անտի ։ Եւրդ՝ զինչ քանի մի ամաց մինչ յաւուր միում այս պատրիկ կայր ՚ի քաղն , եղև տեսիլ առ նա ՚ի ոնէ այսպիսի ։ Ցի է, զի եթէ զինքն կալ յատեան աՀատոր գտուսրին քրիստոս ։ ուր կայր քաղաքացի՝ նաև մայր նր ամենանք կայս Հաճախինն ։ Եւ հայեցեալ ՚ի նա գատաւորին քն սչօք քարկուեն , ասէ ցնա ։ Եա ղի դու հալածեցեր ՚ի պալատէն յոմանց պաղատս՝ ղերեսս իմ դսեցեալս , զի այն ես էս հալածեցեր զնեզ յարտօյտնէ իմմէ երկնաւորէ ։ Օ այս բան ասսկալն իբրև լուաւ պատրիկն , զամօթի հարաւ յոյժ ։ և հեզոյր զքրտունս մանր յերկիւղէն ։ և հաւատարքն զինքն զգալ զինքն արդէն ՚ի հնարն դժոխոց ։ Եւսաի ամբարձեալ զաչան

առ ամենանոր կոյսն, ասէ ցնա զառն ար-
տասուօք. ||Վ՚ճոպատպատիրաւնի աբ ածածին, դուս
որ ապաւէն և պաշտպան ես ինձ տարագրեալ, ես-
րեխասէ աղաչեմ նաև զքեզ ընդ ինձ զաղջկանդ, և հայ-
ցեա յածողդոյդ, զի ինձ կալածեսցէ զիս յարչաւան-
քէ էրմէ. վասն նէ կալածելոյդ անտի, ոչ ոա-
նիմ գնալ, նիւթ ոչ՚ի պիտոյս ընդ այնոսիկ՝ որ ոչ
ողորմելոյն աղաչապայ. որպէս և ես ընդհատակեանս
արարէ. բայց ասէին ինձ ուխտեմ ոչ ևս առնել
այնպէս, այլ շնորհն կախառնին: ||ոչաւ աղա-
չանայ և արտասուէսայ նորա նոքա կոյսն. և
խնդրեալ յածողդոյն իւրմէ շնորհել նմա
գյանցանս նոր: ||ակ դատաւորն քո լուեալ
աղաչանայ մօրն՝ ասէ ցնախասարարն. ահա
՚ի պատիւ երեսայ մօրս թողում քեզ զյան
ցանդ. բայց պատուիրեմ քեզ զայս. զի
երթեալ ընդ ինձ զնոտի բանան զայ-
նոսիկ գրեալս ՚ի վէր դրանց պատրաստի պա-
տուհին քոյ, որք են յարիմանրհանս իմ.
և փոխանակ այնոց գրեացես ՚ի վէր նոցա
բան. Փոխեա՛ զվճիռդ, ընկա՛լ զդրամս մեր. ըն-
դերձ մարդիանոս. զղաղարոս. և զպանդուխտն յա-
կոբոս. որով կամեր ասել զայս, այր հիւր-
ընկալեա զբարի կրօնաւորս, այս է դասն
սուրբ. զաղքատս, որպիսի էր մերկն՝ զոր
զգեցոյց ինքն մարտիրոս. զհիւանդս և զվի-
րաւորս՝ որպիսի էր աղքատն զաղարոս.
զպանդուխտս և զանյարկ ուխտաւորս, որ-
պէս են նոքին, որք գնան ՚ի հեռաւոր տեղ-
եաց յուխտ առ ինք առաքեալն յակոբոս
՚ի կամպոստելայ՝ որ ՚ի մեծն սպանեալ:

Օ այս պատուիրեալ քի, եղև աներևոյթ. և ընդ նմա տեսիլն ամ։ Եւ նախապարսն զարթուցեալ և զգաստացեալ ի յափշտակումէն մտացն, զոր ինչ ուխտեացն ամ ի տեսլեան իւրում, իսկոյն սկսաւ ի գործ դնել. վճռի ըստ հրամանին քի. ջնջեաց զանունն զայնոսիկ փառասիրութե, զորս գրեալն էր ի վէր դրան պարսպին. և փոխանակ նոցին գրեաց զվերոյասացեալ անունն քի։ Եւ յետ այնորիկ ընդունէր մեծաւ սիրով ի պալատին իւրում զաղքատս և զտնանկս. և առնէր բազում գործս ողորմութե առ կարօտեալս։ Եւ եկաց յայս գործ հիւրասիրութե և գթութե զամ աւուրս կենաց իւրոց. մինչև հանգեաւ խաղաղութե ի քն։

Պոռաղ։

Լսացուք և մեք ի դիպուածոյ իշխանիս այսորիկ առնել ողորմութիս տնանկաց և աղքատաց, որով արդարասցուք ի դատաստանին քի, ըստ բանից առաքելոյն յակոբայ՝ որ ասէ. Բարեբերեալ պարծի ողորմութիւնն առ դատաստանաւ։ Այլեզի հաճոյ է յոյժ ողորմութիւնն այ, ոչ ասէ իմաստունն. առնել ողորմութիս և իրաւունս առաւել հաճոյ է այ քան պղտ. առակ. 22. Ըստ լատին թարգմանութե։ Եւ այս վճռ այսորիկ է, զի ողորմածքն նման են այ, որ բազմապատիկ է ողորմութի. և վի ըստ փիլիսոփային՝ նմանն սիրէ զնման իւր, վճռ այն յոյժ սիրէ ած ողորմածս. ուստի ասէ ելիանեելին օգոստի-

տիեզոս . ուշնել է , որ այնպես անբնել առանե զնել
այ , որպես գիտուներն :

Այսպեսայ ամենաբե կոյան պնաբեբայուներ տարուն
հեղձատուբն . որ ևս ընկալաս զարձանատոբ
պատճեն յանդանաց իւրոց :

ՀԻՐԵՐՈՒ ԿՕ :

Զոր պատմէ Նիկիփորոս 'ի գիրս իւր . և ալեքսիոս
'ի գիրս հրաչից ածածնին : Եւ հայրն աղէքսանդրոս
դիոտալևեան . հատոր . ա . օրինակ . 13 : Եւ հայրն
գաբրս բովիեան . հատոր . ե . օրինակ . 20 :

Յամի փրկչին . 528 . 'ի ժամանակին՝ յորում Թագաւորեր 'ի կոստանդնու-
պօլիս բարեպաշտ կայսրն տիբերիոս , կայր
'ի յանտիոք քաղաքի այր ոմն անուն՝ ա-
նաստոլիս՝ այր կախարդ , կռապաշտ , և ե-
ղեռնագործ . բայց յուսյաներ զինքն ար-
տաքուստ գոլ քրիստոնեայ ոմն բարեպաշտ :
Սա առնելով առևտուրս 'ի կոստանդը-
նուպօլիս , ուներ զմեծ բարեկամուԹի ընդ
հազարապետի տանն արքայի , որ էր այր
առաքինի և ածասեր . և յոյժ ջերմեռանդ
առ նոր կոյս ածածինն : Հազարապետս
այս կարծելով Թէ կեղծաւորն այն իցէ
քրիստոնեայ և այր ընտիր , գովեր զնա յոյժ
առաջի կայսերն . և կայսրն ևս հաւա-
տայր զնմանէ գոլ այր բարի : Ապա ա-

մենաւէր կայան գԹաղով ՚ի վէր Հազարա-
պետի տանն արքայի Իւրոյ Ջերմեռանդին,
ոչ կամեցաւ, Թէ նա Հաւատացեալ խա-
բեբային այնմիկ. ուստի երեւեցաւ նմա
՚ի գիշերի միում, և ասէ ցնա. ԵԹէ կա-
միս ՚ի ինձ և լինիլ բարեկամ, զգո՛յշ լեր
՚ի խաբեբային յայնմանէ, և մի՛ խնամեր-
կեր զնա. զի նա հեԹանոս է գործով, և արտաքուստ յուսացանէ զինքն լինիլ քրիս-
տոնեայ: Հնազանդեցաւ Հազարապետն ամենայնիւ կուսին. և վեհոյն զայս նաև կայսերն: Իսկ կայսրն գուղով նախանձա-
ւոր նը Հաւատոյ, և երկնչելով՝ Եթէ գու-
ցէ խաբեբայն այն պատրեսցէ զայլ քրիս-
տոնեայս, գրեաց առ բդեշխն անտիոքայ, զի փուԹով առաքեսցէ զնաւատօլիս ՚ի կոս-
տանդնուպօլիս: Եւ նա առաքեաց զնա անդր. և կայսրն եդ զնա իսկոյն ՚ի բանտն Հաւատոյ մնՀապարտաց: Եւ՚ դդ՝ կայր ՚ի բանտին յայնմիկ գեղեցիկ և ջերմեռան-
գաշարժ արձանեայ պատկեր մի տիրա-
մօր նը կուսին՝ ածորդւոյն ՚ի գրկին, կանդնեալ առ որմով բանտին ՚ի միսիԹա-
բուԹի բանտարկելոց, որք յառաւօտու և յերեկոյի առնէին աղօԹս առաջի նը: Եւ տեսեալ խաբեբային անատօլեայ զըր-
կեալ զինքն ՚ի խնամարկուԹէ Հազարա-
պետի տանն արքայի, խորհեցաւ գա-
նել զաղատուԹի, առնելով զկեղծաւորու-
Թի ըստ բնածին բարուց Իւրոյ: Եւ ասէ ակաւ ՚ի բանտի անդ առնել աղօԹս բա-

զում

զուն և ջերմեռանդս առաջի պատկերի տիրամօրն, բազկեր զկուրծսն, լայր կեղծաւորաբար, հառաչէր ի խորոց սրտէ. և առնէր զայլ ոմնեսիսի կրթուելիս, ոչպէս երևեսցի լինել բարեպաշտ քրիստոնեայ ոմն։ Ի այնպիսւոյ արար, մինչև բանտարկեալքն ամենեքին համարէին զնա գոլ անմեղ, և մի ի մեծամեծ սրբէ. և անտի սիրեցաւ համբաւս սրբութեան նմին ընդ ամենայն աշխարհս։ և բազումք գնային ի տեսնել. և նա խնդայր ընդ այնու միջոցի գաւազանէ զաղաւաւելն։ Այլ ամենանեքս կոյսն ոչ ևս կարաց հանդուրժել կեղծաւորութեան նորա. ուստի մինչ յաւուր միում կայր առաջի նորա կեղծաւորն այն, և առնէր զկեղծաւորեալ ապերճանս իւր, և բանտարկեալքն ամենեքին հայէին ի նա, ահա պատկեր ամենանեքս կուսին փոխեաց զգեստն երեսաց իւրոց. և զայրագին դիմօք և ահարկու հայեցուածովք և բարկութիւն ասացեալ ի բերան վհատ ցասմանցեալ հայեցաւ ի թշնամառական կայն. և ապա իբրև թէ այլ ոչ ևս կարէր տեսանել զնա առաջի իւր, դարձոյց զերեսան ի թիկունս կոյս. և մնաց առյապաղն միշտ այնպէս երեսն յետ կոյս, և աչքն ի բարկութիւն։ Օ՜ որ իբրև տեսին՝ որք շուրջն կային, երկեան յերկիւղ մեծ. և գոչէին, հրաշք է. հրաշք է. և այնու ծանեան, թէ անատուկ մեծ կեղծաւոր է, և սաստկի ոյժ և ամենանեքս մօր նմին։ Այս լուր աքանչելեացս

յականջս կայսերն, և ամմեծամեծացն, և ամ՛բաղաքացւոցն. և բազումք եկեալ տեսանէին զպատկերն, և սոսկացեալ հիանային։ Իսկ կայսրն տեղեկացաւ զայն դիպուածս պատկերին ըստ արժանւոյն՝ ի բանտապետէն, որ անդ ներկայ էր. և եառ զամ. և դատապարտեաց զքշնամանսկանն անաւօրիս՝ ի մահ, այլ և, հրամայեաց, զի արկցի կերակուր գազանաց. և եղև այնպէս։ Իսկ արկին զնա առաջի գազանաց. որ և չարաչար գիշատեալ կերին. և ոչ Թողին և ոչ մասն ինչ յոսկերաց նորա։

Պատմագրութիւն։

Յայսմանէ պատմութենէս ուսանիմք թորշել յայժ՝ ի կեղծաւորութենէ, ոյր և սիրած. ի. 37. ասէ. Ի՛ չինէր կեղծաւոր յաչս մարդկան։ Ի զղի կեղծաւորն յուցանէ զինքն գոլ՝ ի կալմանէ այլ, և է՝ ի կոյմանէ սատանայի. և է ոյ զերեսման արտաքուստ բռեալ, և՝ ի ներքուստ լի ժահահոտութենէ. և վն այնորիկ ատելի է յայժ այլ. և հեռանայ՝ ի նմանէ Հոգին սրբ, ոյր ասէ խմաստունն. Ի՛ հոգին էմաստութենէ փախչէ՝ ի նենգաւորէ. խմաստ. ա. 5։

Աղաւնիք և հայրենիք աբ աճապնին հաւատացեալ
ընտանութեան ուրուան կոչեն ի տեղ ի տեղ կոչ ծնելոյ։

ՀՐԱՐԿ։ ԿԼ։

Ջոր պատմեն ենթիկոս գրանն, և կարեագենա՝ի գիրս իւրեանց։ Եւ հայրն աղէքսանդրոս գիտուա-
ղեան։ հատոր։ բ։ ճառ։ 2։ Եւ հայրն գաւղոս բա-
ժիեան։ հատոր։ գ։ օրինակ։ 32։

Յամի փրկչին։ 610։ ծնաւ՝ի հռոմ քա-
ղաքի հակառակաբանութեի մեծ՝ի
մէջ քրիստոնէից և հրէից՝ շուրջ գլուխ-
քիչ ամն մեռոյ յի քի։ վնզի հրէայք ա-
սէին, թէ յղացաւ քն՝ի մարիամայ ո՛չ
հոգւովն սրբ, այլ գործակցութեն յովսէ-
փայ առն իւրոյ։ և համարեին լինիլ ան-
կարելի կուսի՝ կոյս մնալոյն՝ յղանալ և ծնա-
նիլ։ և խաւսայինյոյժ ընդմ քրիստոնէից
վն այսր բանի։ և ոչ անաային պէսպ վկայու-
թեց, և յուցմանց՝ զոր քրիստոնեայքն յա-
ռաջ քերէին։ Այսպա զաչացու ոմն քրիստո-
եայ ծնեալ՝ի հռոմ՝ կոյր՝ի մօրէ, այր կո-
րովամիտ, և ջերմեռանդ առ նբ կոյս աճա-
ծինն, յանձն էառ վիճել ընդ հրէից։ և յոյ-
սայր միշնորդուբ նբ կուսին յաղթել նոց։
Աստի բազում անգամ արար վիճաբանու
թիս ընդ ռաբբիս, և ընդ առաւել գիտնա-
կան նոց։ և ափիբերան արար զնա, մինչև
շառագնիլ դիմաց նոց։ բայց այսու ամենի
խաստացեալ նոյ՝ի կարծիս իւրեանց, ո՛չ
միայն

միայն չանսայինն բանից նրն, այլև նախա-
տեքին գնա կուշելով յիմար՝ հպարտ՝ և չա-
րագործ. որ և ի պատիժ մեղայ քոց ա-
սեն, պատուհասեալ կաս յայլ, և ի քնու-
թէ՝ մշանջենաւոր կուրութէ։ Յաւելին
ասել և զայս, ոչ յիմար, ոչ էր բարի,
զի քեն քոյ՝ եթէ այդպէս կարօղ էր պա-
հել զկուսութի մօրն, տայր և քեզ զաե-
սուի աչաց։ Յայնժամ կոյրն ազդեցուբ ոն
զօրացեալ՝ ասէ ցնա, ասայիք, ոչ էր բա-
րի զի տայր և քեզ զաեսուի աչաց. արդ
թէ տայէ ինձ զաեսութի աչաց, զի՞նչ
ասէք, հաւատայք թէ ած է նա, և է ծը-
նեալ ի կուսէն մարիամայ, թէ ոչ։ Յ՚ասեն
հրէայքն, այո՝ հաւատամք զայն ամ՝ զոր
դու հաւատաս. բայց ասկայն դու յան-
դգնեալ ասես զինն անկարելի. վասն եթէ
քեն քոյ ոչ կարաց ազատել զինքն ի խա-
չահանուս հարց մերոց, ապա որպէս կարօղ
է զկծուցանել զքեզ ի կուրութէդ։ Յ՚ասէ
կոյրն, քաւ լեայ. ոչ եթէ ոչ կարէր զեր-
ծուցանել զինքն ի մահօրանէ, և վն այն
մեռաւ, այլ զի կամեցաւ վճիռ կուէ մերոյ
մեռանիլ, և մեռաւ. այլ ես հաւատամ՝
զի թէ նա այժմ կամեսցի, կարօղ է տալ
ինձ զլուսաւորութի աչաց, զոր և դուք
տեսեալ՝ զարմացաջիք։ Յ՚ասեն հրէայքն, ե-
թէ տեսցուք զայդ լուսաւորութի աչաց
քոց, խոստանամք հաւատալ ի նա, և լը-
նել քրիստոնեայ։ Յ՚ած կոյրն. ծանիք,
զինչ ասէք, և մի դրաւէք յոյժ զձեզ, զի

յե-

յետոյ ոչ առնէք, զոր խոստանայքն։ Ասեն հրեայքն, եթէ զոր խոստանամքն՝ ոչ առնեմք, յայնժամ զինչս մեր զամ առնեմ՝ արտաքսեսցեն զմեզ ի հռոմայ։ Յորս եռեսս կայցեն, թէ գրաւեցին այսպէս հրեայքն զանձինս իւրեանց, ասէ ցնոսա, բաւ է այսչափս. արդ, և զկնի երից աւուրց տեսջիք զայս սքանչելիս լուսաւորութեանն աւացս յեկեղեցւոջն ամենայնի։ Մեկնեաւ կուրին ի ճաշակութեան, և յոտնցուալ յանձ և ի նոր ծածկինն, գնաց ուղիղ առ նոր պատն վճռիփակիս, որ յայնժամ կառավարէր զեկեղեցին այ, և պատմեաց նմա զամ, որ ինչ ընդ հրեայսն էանց, և թէ արդեօք դաշնագիր եղև ընդ նոսա։ Յորժամ լուաւ զայս պատն, ծանեաւ, թէ աղքեցութեամբ ոմն արարեալ էր զայն դաշն, և զուարճացաւ ընդ. և յորդորեաց ունել նմա զաներկեայ յայս առ ինձ, և առ ամենեսեան մայր ձեր։ Յաւարեաց հրամանն ի բազնախուճիսն հրէից, զի ամենեքեան յաւուրն երրորդի, որ ասեն էր ինքնագառաջին, գայցեն յեկեղեցւոջն կոչեցեալ պանթէոնն. և այժմ հաւատացաք զոր նոր քահանայապետս ամուսնացաւ նոճիրեալ էր ի պատիւ նոր ինձանին. և ամ սեաց մարտիրոսաց. քանզի յառաջ էր առնուր ամ կուսց։ Յայսմիջոցի առանձնացեալ կուրին ի տուն իւր. կայր յաղօթս և ի ծոմապահսն. և աղաչէր յամ որոյ զամենեսեան կոյսն Տասանել նմա յօգնու-

հուրն ի փառս անուան իւրոյ : Եւ ասաց
ի պատիւ նոյն ամենաօրհ կուսին արար
մտօքն զմեսեդի ինչ, որ ասէր . Աւրհնեալ ես
Տէրեամ Էոյա, որ զմեզ հերեւիդոսեանէս խաւա-
ղեցեր . և բանիդ հրեշտակապետին գաբրիէլի կա-
տարեցեր . հուսամք ես զձեզ մարդ ձնար . և չեմ
ձնանիլ Էոյա անկախ ինացեր : Եւ զսոյն քանզ
ի միտ առեալ երգեր անդադար . և մնայր
աւուրն դաշնադրութեանն : Արև եկն օրն
դաշնադրեալ, եկին ժողովեցան ընդ ա-
ռաւօտն ի տաճար անդր պանթէոնին ամ
ուխտ եկեղեցւոյն հռոմայ . և գրեթէ
քաղաքն ամ արք և կանայք, ոմանք ի
ջերմեռանդութենէ, և այլք ի հետաքր-
քրութենէ : Եկին և ամ հրէայք ի գաշ-
նադրութեն և ի հրամանի պապին : Ծաւ
անդր և կոյրն, կալեալ ուրուն զձեռանէ
նր, որ և ձեղքեալ զամբոխն, գնայց և
եկայ ի մէջ եկեղեցւոյն յանդիման հրէից-
ոնզն ամենեքեան տեսին, թէ ստուգիւ
կոյր էր : Եւ մինչ ուխտն եկեղեցւոյ եր-
գեր զժամն առաւօտեան, եկայ անդ յա
ղօթս լի հաւատով յԱծ, և լի յուսով առ
նր կոյս ածածինն : Եւ յորժամ եգերե-
ցաւ առաւօտեան ժամերգութենն, ասաց
ոտանիլ զինքն առաջի խորանի ամենաօրհ
կուսին, ուր կանգնեալ յոտս, և յեղեալ
ի գաւազան իւր, սկսաւ ի ձայն բարձր
երգել քաղցրաբար զմեսեդին . ուրախ լեր
Տէրեամ Էոյա . և այլն, զարարեալն յինքենէ :
Եւ ամ ժողովուրդքն կացեալք ի լռին .

հայ-

հայելին ի նա ուշադրաբար։ Եւ իբրև եղերեայ զմեսեղին, նոյնժամայն բացան աչք նր երկոքին առաջի ամենեցուն. և նր ի բաց ընկեցեալ զգաւազանն ի ձեռանէն, դարձաւ շուրջանակի հայիլ յայն ամբոխ անհամար մարդկան, ոչ այնչափ առ ի զնոսա տեսանել, որչափ առ ի նոցանէ տեսանիլ։ Օ՜ր տեսեալ քրիստոնէից, և հիացեալք ընդ սքանչելիսն այլ, լցան խնդութիւն և ուրախութիւն. և ի ձայն բարձր սկսան գոլել զնոճ, և ասել. փառք ի բարձունս այ. և այլն։ Այլ ոմանք տեսին, թէ այն սքանչելիք եղև ի վկայուն աճուրդն քի, և մայրութիւն և կուսութիւն նա աճածնին։ Այլև հրեայք հիացեալք յոյժ եւ այսպիսի մեծ և յայտնի սքանչելիս, ոմանք աչք իւրեանց վկայէին, յաղթեալք ի քրիստոնէական ճշմարտութէն, հինգ հարիւր ոգիք ի նոցանէ կացեալք ի վէր դաշին իւրեանց՝ դարձան ի հաւատն քրի, և մկրտեցան հրաժարեալք ի հրէութէն։ Այլ այլք՝ որք ոչ կամեցան կալ ճեալ ի վէր դաշին, և ոչ անսալ և հաւատալ յայտնի սքանչելեացն այ, անձամբք իւրեանց եղեալ փախեան ի հռոմայ՝ և ոչ իշխեցին դառնալ անդրէն ի նոյն։ Այլ այն մեսեղի արարեալ ի կուրէն եղև այնչափ ի պատուի ի յիշատակ այսպիսի սքանչելեաց այն, մինչդեռ նր եկեղեցին հռոմայ եղ զայն ի ժամագրքին առաւօտեան ժամերգութէ աւետեաց նր ածածնին։

Պատառ։

Ա՛ն եպէտ առ՛ի կակղել զսիրտ հրեշտից այսոցիկ, և ածել զնոսա՛ ի քրիստոնէական հաւատս, հարկ եղև նոյ ցուցանել զմեծ իմն հրաշս, սակայն առ՛ի կակղել զսիրտ մեր յապաշխարութեի, և դարձուցանել՛ի սէր իւր, ոչ է հարկաւոր նոր իմն հրաշք, այլ բաւական է մեզ խոնարհութեի իւր, որով խոնարհեցաւ վե՛ր մեր՝ ի մեծ վայելչութեի փառաց իւրոց, և եղև մարդ, պա՛ հելով անարատ զկուսութեի մօր իւրոյ։ Այ՛ս ըստ սո՛ւրբն բեռնաւորդոսի. Ոչ է մեծ ինն եղեալ խոնարհնոյն անդ որդն, որ խոնարհեցաւ վա՛ր քան զառաջ։ Ուստի եթէ ոչ շահեսցուք խրատուեալք խոնարհութե՛ն որդւոյն նոյ, ոչ շահիմք նաև՛ ի պանծալեացս նո՛ր։

Ի ծղնեաց ամենասք կոյսն պծատեալ ցեռան սքին յովհաննու պամասկացւոյն ։

Ի Ր Ա Ր Կ Ի

Ջոր պատմեն լևպոմանոս · բարոնիոս · նաւկղերոս · և այլ մեծամեծ հեղինակք ՚ի գիրս իւրեանց ։ Ջոր և պատմէ հայոց աղէքսանդրոս դիոտաղեան · հատոր , ե · Հառ · 23 ։

Շուրջ զամաւ փրկչին · 730 · պատկերամարտ ամբարիշտ կայսրն լեւոն , որ Թագաւորէր ՚ի կոստանդնուպոլիս յարոյց զսաստիկ լիմն հալածանաց ընդդէմ յարգուածոց սրբոց պատկերաց ։ Եւ ի առաքէր զօրս սպառազինեալս ընդ ամ աշխարհ կայսերութեանն՝ մնռանել յեկեղեցիս և ՚ի տունս , և խորտակել և հուրբ դատել զպատկերս քրի , և մեր նր , և սրբոց նոցին՝ գոեալս ՚ի նոսին . և զորս էինն նկարեալ յորմունս՝ տապր քերել և ջնջել զայնոսիկ ։ Եւ շատացեալ այսու անօրէնն , հալածէր և սպանանէր զնոսին , որք ՚ի պատուի ունէին զնր պատկերս . և վն այն բռնադատ իշխանութեն նոցին արեւելեան կայսր յորդոս , և ՚ի սատակումն ։ Ետս լուր չարեացս այսոցիկ յականջս սրբոյն յովհաննու դամասկացւոյն՝ առն մեծի գիտնականի , որ յաւուրսն յայնոսիկ աշխարհական գոլով , էր փոխանակ հօր իւրոյ՝ կացու-

ցուցեալ ՚ի հագարացի խալիփայէն դա-
մասկոսի՝ քաղաքապետ նը՛, և իւր առա-
ջին խորհրդական։ Ա՛ր բորբոքեալ երա-
նելին յովհաննէս նախանձու ածպաշտու-
թե՛ն, սկսաւ գրել ՚ի կոստանդնուպօլիս, և
յայլ տեղիս առ սիրելիս իւր, և առ ուղ-
ղափառս՝ զանազան թուղթս վ՛ն յարգու-
թե՛ն որ պատկերաց՝ հաստատեցելոց միշտ
՚ի սբ եկեղեցւոջ յառաքելոյ անտի. և յոր-
դորեր զնոսա ՚ի թուղթն յայնոսիկ կալ
հաստատուն ՚ի ջատագովուի կրօնի կա-
թուղիկէ սբ եկեղեցւոյն։ Ա՛մենայն զայս
կայսրն լեւն՝ բրդեցաւ ՚ի բարկու՛ի մեծ. և
խորհեցաւ առնուլ վրէժ՛ ՚ի նմանէ նենգու-
թե՛ն։ Ա՛սաի գտեալ զթուղթ մի ՚ի թղթոյ
գրելոյ ՚ի յովհաննէ, կոչեալ գիմ արքունի
գրագիրս իւր. և հարց ցնո՛ն, թէ իսկ՛
զբ ՚ի նոցանէ, որ կարասցէ նման ձեռա-
գրի նո՛ր գրել զգիր. և գտեալ զմին, որ
ասաց թէ կարեմ՛, եա գրել ձեռամբ նո՛ր
զգիր մի սուտ ՚ի դիմաց յովհաննու դա-
մասկացւոյն, իբրու գրեալ ՚ի նմանէ առ
ինքն. և բան գրոյն էր այս, զի յորդո-
րեր յովհաննէս զկայսրն գալ զօրօք ՚ի գա-
մասկոս, որպ խանգարեալ են, ասէր,
պարիսպք. և սակաւ զօրք են անդ. և թէ
ես և՛ս, ասէր, ՚ի ներքուստ իբրու վերա-
կացու՝ օգնեցից քեզ առնուլ զքաղաքն։
Ո՛յս առաջնոյն սուտ գիր գրեալ անօրէնն
լեւն, գրեաց և զերկրորդ գիր ձեռամբ
իւրով առ հագարացի խալիփայն դամաս-

կամ այսպէս. Չկանիցէ իմ պահել ընդ ինձ
ոսկի և ընթերիցմունքի, ահա յայս առանձինս ինձ
ընծայիցէ ճանապարհ մեռանելոյ ի գլխատուր պաշտօ-
նէից հոգի՝ կոչեցելոց յովհաննէս, որ արդ հրաւէ-
րեալ ինձ գալ ընդ օրօք ի վեր հաղորդիլ, և խոստանայ
պալ պայն ի ձեռս իմ. և ի վկայուածս ճշմարտու-
ցիչ բանիցս, ահա առաքեմ զձեռագիրս ինչ առ ինձ
երեսիւ ի ներքս։ Արդ՝ ընկալեալ խալիփային
զգիր կայսերին, և տեսեալ ևս զսուտ գիրն
ի յովհաննէ գրեալ առ կայսրն, բարկացաւ
ի բարկութիւն մեծ, և կոչեաց զյովհան-
նէս յարքունիս, և ասէ ցնա. այսպէս վնա-
րես սիրոյ իմոյ որ առ քեզ՝ ոչ ընդունաւար
մնանիս. մի թէ վասն այսր պատուհասիդ
զքեզ կացուցի յառաջին խորհրդատուսն
իմ, և ետուս քեզ զկառավարութիւն քաղա-
քիս, զի դու մատնեսցես և տայցես զայն
ի ձեռս թշնամեաց իմոց. ընթերցիր ա՛ղէ
ընծայագաւ՝ զայս թուղթ, որ ձեռագիրք ի-
ն է. Իսկ երանելին յովհաննէս ընթերց-
եալ զգիրն, իսկոյն ծանեաւ, թէ գա-
ւաձանութիւն կայսերն իսկ այն. և պա-
տասխանի տուեալ խալիփային, ասէ հա-
մարձակ. սուտ է գիրդ արքայ, և չիք իմ
գրեալ, կամ զմտաւ իսկ ածեալ զայդ-
պիսի դաւաճանութիւն. Այլ զայդ բարբարոս
խալիփային կոչելով զնա բազում անգամ
մատնիչ և դաւաճան, արձակեաց երթալ
ի տուն։ Իւ հաղիւ հասեալ էհաս յովհան-
նէս ի տուն իւր. և ահա հասին անդր
ոմանք ի սպասաւորաց խալիփային ա-

առաքեալք ՚ի նմանէ. և ըստ հրամանաց նո՛ր կալան զյովհաննէս. և հասին անդադրմա-
բար զաջոյ ձեռն նո՛ր, որով գրէը համարէին նմին զայն ստուգ գիր: Եւ տարան զՀաւետ
ձեռն առ խալիֆայն, որ և ետ կախել զը-
փայտէ ՚ի մէջ հրապարակի քաղաքին յօրի-
նակ և յերկիւղ այլոց: Իսկ երանելին յով-
հաննէս ընկղմէը ՚ի ծով արեւմտեան՝ որ ՚ի վի-
րացն հեղանիւթ, նաւազեր, և ուշաթափ
լիներ զօրն ապջոյն ՚ի ցաւոյն. ըստ որումն յա-
ւակեալ լայր և քաղաքն համ գիտեալով զան-
ձեղուն նորին: Եւ ապա յանձն արարեալ
զաշէտս իւր ՚ի և մօր նորին, իբրև ը
երեկս եղև, ստաւքեաց արս ստ խալի-
ֆայն, և խնդրեաց ՚ի նմանէ զձեռն իւր
հատեալ և ասէ. Ծանրանան ժամէ ՚ի ժամ
ցաւք իմ. ցորչափ կախեալ կայ ՚ի հրա-
պարակի ձեռն իմ հատեալ. արդ՝ խընդ-
րեմ ՚ի քէն տէր, զի գոնէ ՚ի միխիթա-
րութի անձինս տացես ինձ զայն: Եւ քա-
նիցս յայսցանէ զինջեալ ՚ի բարկութէ խա-
լիֆայն, հրամայեաց քառնալ զձեռն ՚ի
կախապանէն, և տանիլ տալ նմա: Եւ՝ ըդ՝
ընկալեալ յովհաննէս զհատեալ ձեռն իւր,
եմուա այնու յաղթարան պալատին իւ-
րոյ. և ՚ի ծունկս ՚ի քալեալ առաջի պատկե-
րի տիրամօր նո՛ր կուսին, սկսաւ լալ և ա-
նել այսպէս. դիտես դո՛վ նո՛ր կոյս ածա-
ծին, որ ոչ վն այլ ինչ պատճառի հա-
տաւ ձեռն իմ այս, եթէ ոչ վն այսորիկ,
զի գրով Քատագովեցի զյարգուն պատ-
կե-

կերայ քոց , և որ՝ւոյ քոյ փրկչին իմոյ
յի . ուստի խնդրեմ ՚ի քէն տէրամայր ,
զի ՚ի փառս քոյ և ՚ի բարձումն ցաւոց ի-
մոց գարձեալ միաւորեսցես զայն յառաջին
տեղին . ոչպէս կարօղ եղէց վերստին գրել
նովաւ բանս ՚ի ջատագովուԹի պատկե-
րաց քոց , և բանս ՚ի գովեստ քեղ : Օ այս
խնդիր արարեալ՝ անկաւ ԹմրուԹի ինչ
՚ի ՚ոնկ ՚ի վէր նորա , և ՚ի քուն եմուտ . և
ահա երևեցաւ նմա ՚ի տեսլեան ամենանր
կոյսն , և հայեցեալ ՚ի նա այսօր քաղցրու
ԹԵ , ասէ ցնա . մի լար յոմհաննէս . լուար
աղաչանացդ , և ահա բժշկեմ զձեռն քո ,
և դու կատարեա զոր խոստացար ինձ .
և զայս ասացեալ՝ եղև անհետ ՚ի Թ : Օ ար-
ԹուցեալՀ յովհաննէս ՚ի քնոյն , եւեթ ըզ-
ձեռն իւր միաւորեալ ընդ բազկին և բժշկ-
եալ . և ուրախացեալ ընդ այն ոչ յագենայր
հպիլ բնդմ անգամ ՚ի միաւորեալ տեղին , և
շօշափել զայն . և վաղվաղակի կոչեաց զընդ-
ատանիս տանն ՚ի յաղօԹարանն . և զայն բո-
լոր գիշեր պաբասպէին ՚ի գովեաՀ և ՚ի շնոր-
հակալուԹի զնմ և զամենանր մարէն նր : Ա-
՚ի լուսանալ աւուրն հրատարակեցաւ ընդ
քաղաքն ամ սքանչելիս այս մեծ . և է-
հաս մինչև յականջս խալիֆային . որ և
կոչեաց զյովհաննէս առ ինքն ՚ի յարքու-
նիս՝ տեսանել զիւկուԹի եղելոցն : Ա զի
ամենանր կոյսն ՚ի նշան հրաշիցն ԹուՀ-
եալ էր զդիծ լին ծիրանագոյն զբազկաւն՝
յորմէ հատեալ էր ձեռն , յորժամ եւես

զայն խաչիփայն , հիացաւ յոյժ , և ասէ
գյովհաննէս , ասա ազաչեմ , որպիսի Հար-
տար բժիշկ բժշկեաց զքեզ այսպէս : Իսկ
երանելին յովհաննէս պատմեաց նմա կար-
գաւ զսքանչելի բժշկութիւնն , որ եղև յամե-
նեսեան կուսէն : Յայնժամ ծանեաւ խաչի-
փայն զանմեղուն նէր , և սիրեաց զնա . և
խնդրեաց զթողուն ի նմանէ . և ապա վերս
տին կարգեաց զնա ի պաշտօնն առաջինն՝ ո-
ւսուել մեծաւ իշխանութիւն քան զոր ու-
նէրն : Իսկ երանելին յովհաննէս հրաժա-
րեալ յայնմանէ , խնդրեաց ի նմանէ թո-
ղուլ զնա աղատ երթալ ուր և կամիցի :
Ի ընկալեալ ի նմանէ զաղատութիւնն ,
հրաժարեցաւ յաշխարհէ , և զինչս իւր
զամ բաշխեաց աղքատաց , և եկեղեցեաց ,
և ազգականաց իւրոց . արձակեաց և ըզ-
բազում գերիս , զոր ունէր . և գնաց ի
պաղեստին , և եմուտ ի հռչակաւոր մե-
նաստան սիրն սաբբայի աբբայի . և եղև
միաբանակեաց : Ուր վերակացուն նէր ծեր
ոմն այր առաքինի և հմուտ ի հոգևորս ,
առ ի կրթել զնա ի խոնարհութիւն , տայր
նմա լուծանալ զանօթս աղքատացն այլոց
միաբանից ձեռօքն , զորոյ զբժշկութիւնն ըն-
կալեալ էր սքանչելեօք ի նոնէ : Ընդ դր-
եաց երանելին յովհաննէս ըզ խոտման
իւրում զբազում բանս ի ջատագովութիւն
նէր պատկերաց , և զբազում բանս գովես-
տից ի վէր տիրամօր նէր կուսին :

Պոռչ։

Այդ՝ այժմ թէպէտ չունիմք մեք պի-
տոյս ջատագովելոյ զնոր պատկերս, զի ոչ
գան այժմ այնչափ պատկերամարտք ՚ի
մէջ քրիստոնէից, սակայն ունիմք պի-
տոյս յարդելոյ և ՚ի պատուի ունելոյ զայ-
նոսիկ փոքր ի շատէ քան զոր ոչն առ-
նեմք։ Իվ թէ յորժամ կամք յաղօթս ա-
ռաջի պատկերի տիրամօր նոր կուսին, ա-
սէաք զայն քան աստուածանական. Իսէ
պատճէրս այս. զոր թէ բարւոք խորհեալ
մտածէաք, արդարև կայսք առաջի նորա
մեծաւ պատկառանօք, և մատուցանէաք
նմին զաղաւթս յարգուիս. և կոչէաք զնա
մեզ ՚ի յօգնութիւն մեծաւ ջերմեռանդու-
թիւ. ոյլ ասէ մեծն գրիգորիոս. թէ Իբր
՚ի պատճէ ունին պատկերք աչ կուսին Տեր-
առնոյ ՚ի, առանոյ ևարձեալ նա պոյ այնպիսեացն ընծայեալ
պարգևաս. զանազ յարփուռէ պատկերին դառնայ ՚ի
նախատիպ նորա։ Իյ Հակադարձաբար ան-
պատկառիցն տայ զպատիժ. ոյլ պատմի,
թէ մինչ մանկունք ոմանք խաղային և
ծաղրաբանութիւն առնէին առաջի պատ-
կերի միոյ տիրամօր նոր կուսին, տարած-
եաց ՚ի պատկերէ անտի նոր կոյսն զձեռն
իւր, և սպառնացաւ նոյ հեռանալ անտի.
և նոք սարսափեալք փախեան ՚ի տեղւոջէ
անտի։

Աբրահամէն եւ ի պահելոյ պէտս ունելոյ իւր, եհատ զոմանէ եւ պղծեցուցանէ իւր. որ չէ պատշաճ առնել նմա յամենայնէ հեռանալ պատուական ինչիցն զատ։

ՀԱՐԵՐՈՐԴ ԿՈՓ։

Զոր պատմէ վինկենտիոս եպիսկոպոսն բեղուակ եան ի պատմական գիրս իւր ։ Եւ հայրն գառնոս բովենան, հատոր ։ ա ։ օրինակ ։ 16։

Աեծապզի կոյն եւփիմէ՝ որ ոչ միայն ըստ հոգւոյն, այլեւ ըստ մարմնոյն էր յոյժ գեղեցիկ, իբրեւ եղեւ ի չափ հասակի, բոլորաքեաղ սիրուվ ունչի, հրաժարեցաւ ի սիրոյ երկրաւոր փեսայից. և նոքիրեաց նմա ուխտիւք վկուսութիւն իւր. և վն այսորիկ արհամարհեաց նաեւ զուշադրութիւն զարդարանաց օրիորդաց. և զգենայր հանդերձս հասարակս, քայց վայելուչս ազնուականութիւն իւրում։ Ի՛րդ՝ պատուհեցաւ, զի իշխան ումն յոյժ փարթամ՝ ի նմին քաղաքի եառեւ զնա. և հարաւ սիրով աքանչելի գեղեցկութիւն նր. և խնդրեաց զնա ի հօրէն նորա ի կնութիւն իւր։ Ապա ընտրացաւ յոյժ հայրն ի լսելն զայս. և իբրեւ եկն ի տուն, կոչեաց առանձին զեւփիմէ, և ասէ. աւետիս քեզ դուստր իմ՝ սիրելի, զի ահա այս անուն մեծ իշխան՝ այր փառաւոր և շնորհալի,

զոր

զոր և դու քաջ ձանաչես, խնդրեաց զք-
քեզ յինէն իւր՝ ի կնութի՛ն. և ես խոս-
տացայ զքեզ նմա. ապա պատրաստեա՛
զքեզ վասն հարսանեացդ, որ քեզ և ա-
վանդակ տան մերում է՛ ի յօգուտ և՛ ի
փառս։ Լե՛ մինչ զայս ասէր Հայրն, կայր
օրիորդն հաւատով՛ ի լուսե՛ ունելով զայնն
սևեռեալ՛ ի գետին. և ապա ջերմեռան-
գութի՛ւ ամբարձեալ զաչսն ընդ երկինս՝
ասէ. Հա՛յր իմ և տէր, գիտեմ, զի կամիս
ինձ բարիս. և մի՛ այն առաջի առնես ինձ
զայդ փառաւոր փեսայ. բայց ծանի՛ր, զի
ես գտեալ եմ, և ունիմ զայլ ոմն փեսայ
առաւել փառաւոր և չնորհալի քան զդա.
որ և ոչ երբեք կարէ մեռանիլ և թո-
ղուլ զիս այրի. և ահա նմա խոստացայ
զիս, և կամ՛ ի պատրաստի մեռանիլ քան
՛ի նմանէ բաժանիլ։ Ո՛րմանեաւ Հայրն թէ
զինչ կամիր ասել դուստրն, և խռովե-
ցաւ յոյժ. ուստի սկսաւ նախ շողոքորթութի՛ւ
բռնադատել զնա՛ ի հաւանութի՛ն ամուսնութե.
և իբրև ոչինչ կարաց առնել այնու, ա-
պա սկսաւ սպառնալ նմա, և նախատեր
զնա, և կոչեր յիմար՝ հպարտ՝ և անհնա-
զանդ։ Այլ զայս կռի՛ւ ընդ դստերն ոչ
թէ միանգամ միայն արար, այլ բազում
անգամ և՛ ի բազում աւուրս։ Ետ եր-
փիմէ ձանձրացեալ՛ ի պատերազմէն՝ որ
ընդ հօրն, և ազգեալ առ յոյն, խորհե-
ցաւ բառնալ՛ ի միջոյ զառիւծն կուռ օրէն,
ի՛ զգեղեցկուհի՛ն մարմնոյն իւրոյ։ Ել-

տի յաւուր միում մտեալ յաղօթարանն տան
իւրեանց, ուր կայր գեղեցիկ պատկեր մի
տիրամօր Ննջ կուսին, անկաւ յերկիր ա-
ղաչի նէ ի վէր երեսաց իւրոյ, և ասէ.
Ով մայր կուսութե՛ն, և Թագուհի կուսա-
նաց, հայեա՛յ ի տառապանս իմ, որով
կամին բաժանել զիս ի քէն և յորդւոյ
քումմէ. և ցոյց ինձ ձանապարհ, որով
փրկեցայց ի ձեռաց նոցա. արդ զի անհա-
ճոյ եղեց յաչս մարդկան, բայց հաճոյ
յաչս քոյ և որդւոյդ. և զի անոտի գեղեց-
կութի՛ն մարմնոյս է, որ մարտնչի ընդ իս,
ապա բարձցի՛ սա ի միջոյ. զի ես գտից
զնաղաղութի՛ն։ Այլ զայս ասացեալ՝ հառ
զսուր դանակ, և զօրացեալ ազդմամբ և
օգնութի՛ւ աւետնաբեր կուսին, էհատ զունչս
և զշրթունս իւր. որով թէպէտ կորոյս
զգեղեցկութի՛ն յաչս մարդկան, բայց ե-
զև առաւել գեղեցիկ յաչս փեսային իւ-
րոյ քո, որում նուիրեալ էր ուխտիւք ըզ-
կուսութի՛ն իւր։ Զդ՝ իբրև ետես հայրն
զնմփիմն այնպէս տգեղացեալ, և իմա-
ցաւ զպատճառն՝ վասն որոյ հատեալ էր
զունչսն և զշրթունս իւր, բարկացաւ յոյժ,
և կամէր սպանանել զնա. բայց զի մի՛
որդեսպան երևեսցի, էհան զնա ի տա-
նէն, և առաքեաց ի գիւղ մի իւր կալ ի
ներքոյ հրամանաց միոյն ի գիւղականաց
իւրոյ՝ որ էր այր անուղղամ և չարաբա-
րոյ. և պատուիրեաց նմա, զի կարգես-
ցէ զնա յանարգ և ի խիստ ծառայուիս

տանն

տանն և անգամ տանին, և խոշտանգեա-
ցեն զնա յոյժ՝ թէև մեռանիլ հասանելոյ
նմա։ Արդ՝ ընկալեալ գիւղականին զը-
պատուէրսն ետն իւրոյ, կարգեաց զնա ի
խթան ծառայութիւն անգամատանին և տանն.
և յոյժ չարաչար նեղէր զնա տալով նմա
բրել զերկիրս. բերել փայտ և ջուր ուսովքն
ի տուն. և առնել զայլ ամենայն զաշխա-
տութիւն. բայց սրբուհին եմիմէ տաներ
զայն ամենիւրեան մեծաւ ուրախութիւն սիրոյ
փեսային իւրոյ յոլ և առատաբար մեծ նորա.
և եկայ՝ի տառապանս յայսոսիկ ամս եօթն
Յորժ ապա զկնի եօթն ամայ՝ մինչ՝ի գի-
շերի ձրագալուցի ծննդեան տեն կայր
գիւղականն բազմեալ՝ի սեղան ընդ ըն-
տանեայ իւրոյ, առանձնացաւ եմիմէ
՝ի նոցանէ. և եմուտ՝ի գոմն խաշանց առ
՝ի մտադրութեամբ խորհիլ անդ զծննդեանդ
երկնաւոր փեսային իւրոյ, որ վճ սիրոյ
մերոյ ծնաւ յայրին, և եղաւ՝ի մսուրն
անբանից։ Յորժ ահա լցաւ գոմն երկնային
լուսով պայծառ ըստ զարև. և երևեցաւ նմա
ամենանոր կոյսն պարառեալ՝ի զօրաց հր-
եշտակաց, և՝ի սըգ կուսանաց. և մանկ-
Թաւթեաց զնա և ասէ. քաջալերեայց դուստր
իմ սիրելի. որովհետև զոր ինչ կրես
վճ սիրոյ որդւոյ իմոյ, ոչնի նա տալ քեզ
վճ այնոցիկ վշտաց պատկառ անմահական
փառաց՝ի յերկինս։ Յայնժամ՝ միջոցի
տեսեալ գիւղականն, Թէ ոչ երևի եմ-
փեմէ, և խմացեալ յայնմ՝ Թէ՝ի գոմն
է,

է, բարկացաւ յոյժ, և էառ զգաւազանն, և գնաց անդր առ'ի գանիւք քերել զնա 'ի տուն։ Այլ իբրև մերձեցաւ 'ի գոմն, և ետես զծագումն մեծի լուսոյն, և զնք ոճածածինն և զզօրս հրեշտակայ խօսիլ ընդ Եմփիմեայ, հիացաւ յոյժ, և սկսաւ 'ի ձայն բարձր աղաղակել։ Այլ լուեալ ընտանեացն և այլոց դրացեայց զձայն աղաղակի նր, դիմեցին անդր՝ տեսանել թէ զինչ իցէ այն. և ամենեքին տեսին զլոյսն մեծ, և զամենանոր կոյսն և զորս ընդ նմա, զի խօսէր ընդ Եմփիմեայ։ Այլ ապա տեսին, զի սարկաւեայսն Եմփիմեայ 'ի նորոյ ունչք և շրթունք՝ անձառելի գեղեցկութիւք դիմացն. և ծագեր լոյս մեծ իբրև զարեւոս 'ի Ճակատէն Եմփիմեայ։ Օ այս ամ տեսեալ՝ զարհուրեցան և անկան ամենեքին յերկիր իբրև զարբեալս 'ի գինւոյ. և ապա իբրև զգաստացան և յոտն կացին, գային անեղեւոյթ եղեալ զտեսիլն ամ, և զԵմփիմէ անարատ 'ի հատուածոյն, և պայծառ գեղեցկափայլ դիմօքն։ Այլ ապա փութով ծանուցին զայս հօր նորա, որ և ուրախացեալ եկն անդ վազվազակի ընկերակցութիւք բազմիւ. և հիայեալ ապաշխնայ 'ի տեսանելն ողջ և անարատ և գեղեցիկ քան զառաջինն զդուստրն իւր։ Այլ յաղթեալ 'ի զօրուէ հիանալի հրաշնայն, ոչ միայն հաւանեցաւ, զի կացցէ դուստրն յուխտին իւրում պահելոյ զկուսութիւնն քն, այլև ծախուք իւրովք շինեայ

հեաց զփառաւոր մեհենատան մի. յորում եմփիմ ընդ այլ ջերմեռանդ օրիորդաց առանձնացեալ, եկայ ի ծառայուե երկնաւոր փեսային իւրոյ՝ զամ աւուրս կենաց իւրոց անպատմելի սրբութիւբ կրօնաւորական վարուց. և ապա փոխեցաւ յերկնից արքայութիւնն։

Պոռշ։

Արդ՝ եթէ առ՝ի չգայթակղեցուցանել զմերձաւորս, կամ զանձինս իւրեանց, հաւատն ոմանք զանգամս ինչ իւրեանց, ոչ արար սրբուհի կոյս այս, ապա օրէսի պատժոյ արժանի են նոքա, որք առ՝ի գայթակղուիս իւրեանց կամ այլոց, յաւելուն՝ի վէր բնական վայելչութեց իւրեանց նաև զայլ անոտի և լկտի զարդարանս զգեստուց, և զեղազարդեն զերեսս իւրեանց պէսպէս գեղօրէիւք և օծանելեաք. որովք և զբաղումն գայթակղեցուցանեն։ Այլ ահա զայսպիսիս դատապարտելոց է սրբուհին եմփիմ, որ ոչ միայն ոչ՝ի կիր եաւ զայսպիսի լկտի զարդարանս, այլև ապեղացոյց զբնական գեղեցկութիւն իւր. զօր օրինակ դատապարտելոց է դշխոյն Հարաւոյ զՀրէայս, որք ոչ լսէին խնամատուէն քի, որ առաւել էր քան զսողոմոնիկն. որպէս ասի Ղուկ. ԺԱ. 32։

* * *

Պո-

Պահեցաք ամենայն հոյակ ուխտն և պատուիրանս տա-
ղաւորութեան որոնցմէ ի մահիճն ընկաք, որ
չանչին արար զնա նմա։

ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՅՈՒՆԱՑ

Զոր պատմէ արքայն ասփրոնիտա ի գերս իւր կուէց-
եալ գաշտին հոգևոր։ Իշ հայրն աղէքսանդրոս դիս-
տաղեան • հատոր • ջ • հատ • 15 ։ Իշ հայրն գաւ-
լոս բովիեան • հատոր • ե • օրինակ • 34։

Յամի փրկչին • 875 • կայր յաղէքսանդ-
րիայ քալաքին եգիպտացւոց այր ոմն
ճգնաւոր և բարեպաշտ, այր անխարդախ՝
ողորմած՝ և հիւրընկալ ամ կարօտելոց և
կրօնաւորաց • որ և միշտ յաձախէր յեկե-
ղեցիս և ի հոգևոր կրթուելիս • և առ-
նէր անկեղծօրէն առևտուրս առ ի պա-
հել զընտանիս իւր ։ Ընդ սմանս լինք-
եան զկին ոմն ճգնաւոր և յոյժ բարեպաշտ,
որ և կայր միշտ ի պահս և ի ծոմս, և ի
նմանէ՝ զգուստր մի ։ Ընդ՝ զկնի ժամանակաց
լինէ դէպ եղև, զի այս այր վա՛ռ և տրոյ
իւրոյ կամեցաւ երթալ յաղէքսանդրիոյ ի
կոստանդնուպօլիս • ուստի մինչ թողեալ
զկինն և զդուստրն իւր ի տան ընդ ծա-
ռայի միում, նաւեալոյ էր ի կոստանդը-
նուպօլիս, ասէ ցկնա կինն • դու այժմ
տէր իմ, կամիս գնալ ի կոստանդնուպօ-
լիս, բարի է, որ ճգ տայէ զբարեյաջող
ձա-

Ջանն ընդ[ր]կ. բայց ասա ազաչեմ, ո՞վ յանձն առնես զնա և զդուստրն քո, և գնաս։ Նա ասե ցնա այրն, մի երկնչիր տիկին կա- զակից իմ, զի ահա յանձն առնեմ զձեզ [ի]նամակալին մերոյ տիրամօր՝ որ կոյս ածա- ծնին. և հաւատամ, որ նա քան զնա ա- ռաւել պաշտպանելոց է զձեզ։ Նա զայս առացեալ, և յանձն արարեալ զնա ամե- նաներ կուսին, գնաց եմուտ ի ներ, և նաւեաց ի կոստանդնուպոլիս։ Իսկ [Թե] որչափ հաճոյ եղև այս ամենասուրբ կու- սին, և որպես հոգայ զընտանիսն նր, ա- հա երևի ի գրելոցս։ Նա՝ երբ եր նոյ ծա- ւալ մի, որ և էր խոհակեր տանն. սա գիտեր զհարստութի[ւ]ն կնոջ և դստերն. վնզի ունկնդրեր զրան բակումն, և զմեծա- գին զարդարանս ոսկեղենս և արծաթե- ղէնս. զորս և պահեր կինն մեծաւ զգու- շութ[ի]ւ յարկեղ իւրում. եմուտ սատանայ ի նա, և խորհեցաւ տպանանել զկինն և զդուստրն, և առնուլ զինչս նր, և գնալ ի տար աշխարհ։ Ա[ն] այն յաւուր միում մինչ բարեպաշտ կինն լնդ դստեր իւրում նստէին ի սենեկին իւրեանց՝ գրքին փա- կելովք, պարապեալ ի ձեռագործս իւր- եանց, էառ ծառայն չար զմեծ դանակ, և գնաց ի դուռն սենեկին առ ի յանկար- ծակի մնանել ի ներքս, և սպանանել զնոսա։ Նայց մինչ մերձեցաւ ի դուռն սե- նեկին, ահա յանկարծակի հասին զեզան յամենայնի կուսէն պատիժք ի վր նորա. վնզի

դևն ըս խոստման իւրում առաւել զնա՛ ի
Հայրենի երկիրն նը, և ազատեցաւ՛ ի գե-
րուԹէն։ Իսկ նա իբրև գնաց ՛ի տունն
իւր, ոչ ոք ծանեաւ զնա, ոչ կինն, ոչ
մայրն, և ոչ ծառայքն. վասն փոխեալ
էին կերպարանք նորա. վն այն վարեցին
զնա արտաքս, և ոչ ընկալան ՛ի տուն.
և ԹԷպէտ նա տայր ծանօԹուԹի՛ զնմա
իրաց նը անսկզբոյ. և յուցանէր նշանաւք
և բանիւք, ԹԷ նա ինքն է որդին նը,
բայց ոչ հաւատային նմա։ Ուստի զբկեալ
յոյսէ, շրջէր մուրալով ՛ի քաղաքին առ՛ի
գտանել զպարուստ։ Իսկայ այսպէս մու-
րայիկ ժամանակս ինչ. և ապա դարձ-
եալ՛ ի յուշն, յիշեաց զնորատ հօրն, որով
խրատեաց զնա դիմել առ աւետնանը կոյսն
՛ի վիշտս իւր. և կամեցաւ՛ ի գործ դնել
զայն. բայց ամաչէր երևիլ առաջի ամե-
նեցուն կուսին յաղագս ուրանալոյն զնա։
Սակայն յաւուր միում համարձակեալ է-
մուտ յեկեղեցի մի. և անդ առաջի խո-
րանի նը կուսին անկեալ յերկիր՝ սկսաւ

դառն

դառն արտասուօք և հեծեծանօք ասել. ո՛վ՝ որ կոյս ածածին մարիամ մայր ողորմութեա՛ն. ներեա՛ աղաչեմ մեղաց իմոց, որով ուրացայ զքեզ և զածորդին քո. և խնդրեա՛ ՚ի նմանէ տալ ինձ թողութի՛ւն. վճռի դու ես ապաստան մեղաւորաց. և ոչ ոք է՝ որ դիմեաց առ քեզ ուղիղ սրտիւ, և յամօթ եղև. Այլ ահա ետես, զի ես ամենաւքո կոյսն ՚ի պատկերե՛ անտի իւրմէ. և հանեալ ՚ի գրկացն զածորդին իւր, եդ ՚ի վէ՛ս սեղանոյն. և ՚ի ծունկս իջեալ առաջի նո՛ր, աղաչեր զնա թողուլ զմեզս ուրացողին այնորիկ: Այլ զիջեալ որդին աղաչանաց մօրն, եթող զյանցանս նորա. և մերձեցեալ առ նա՝ գիրկս էարկ նմա, և համբուրեաց զնա ՚ի համբոյր հաշտութե՛ան. և ահա նոյնժամայն փոխեցան զաղխը դէմք նո՛ր ՚ի գեղեցիկ դէմս երիտասարդի. և հերք նո՛ր սպիտակացեալ ՚ի գոյն թօխախ՝ ոչ վայելէր ըստ ամաց հասակին նո՛ր: Այլ ահա եկն երեւեցաւ անդ դևն, և ասէ ցերիտասարդն ՚ի հեռատանէ լի բարկութի՛ւն. այսպէ՛ս վէճարես ինձ ոմ ապերախտ խաբեբայ. երդնում ՚ի զօրութի՛ւն իմ, զի թէ սոքա մայր և որդի թողին քեզ զյանցանսդ՝ զոր դուն ծեծեր առ նո՛ն, ես ոչ թողից՝ զոր առ իս գործեցեր. և առից ՚ի քէն վրէժ իմ: Իսկ ամենաւքո կոյսն սաստեալ դիմին հալածեաց անտի. և ապա էլ ածորդւոյն ՚ի պատկերն ՚ի տեղին իւր առաջին: Այլ դևն

դևն ՚ի հալածիլ իւրում անտի, արար զայնպիսի աղաղակ ահեղ որոտման, մինչ զի ամենեքեան դիմեցին յեկեղեցին տեսանել թէ զինչ էցէ այն. և գտին զեբիտասարդն, զի կայր ՚ի ծունկս իջեալ առաջի խորանի ներ տիրամօրն, և հեղգոյր զաղբիւրս արտասուաց. և հարցին ցնա՝ թէ զինչ էր ձայն որոտմանն այնորիկ. և նա ասէ. կոչեցէք եղբարըզքահանայն, և ապա ծանիջիք զամ. և նոքեկին զքահանայն. և առանձնացեալ էբիտասարդն ընդնմա, խոստովանեցաւ զամմեղս իւր. և ետ նմա հրաման, զի ՚ի փառս ամենայնոր կուսին պատմեսցէ հրապարակաւ ամ ժողովրդեանն զամ դիպուածն՝ որ դիպաւ նմա. և քահանայն արար այնպէս. Յետ այսորիկ գարձաւեկն երիտասարդն ՚ի տուն իւր. և ծանեան զնա յայնժամ ընտանիքն նր. և ընկալան զնա մեծաւ սիրով. Ա՚այլ նա ոչյետ բազում աւուրց միաբանեցաւ ընդիւրզկինն. և հրաժարեալ երկոցունցն ևս յաշխարհէ, մտին ՚ի մենաստան կրօնաւորաց. մինն ՚ի մենաստան Ձգնաւորաց, և միւսն ՚ի մենաստան կուսանաց. և անդ մեռան սրբազան։

Պոռաղ։

Ա՛յս երիտասարդ վանն այսորիկ անկաւ յայսչափ վտանգս հոգւոյ և մարմնոյ, զի ոչ պահեաց զերկրորդ խրատ քարի հօր իւրոյ, այլ զայն՝ զոր ասացեալ էր նմա, թէ յիշեա միշտ զօր մահուանդ քոյ։ Ա՛ըդ և մեք եթէ ցանկամք կալ յանմեղս թէ, և ոչ անկանիլ յայսպիսի վտանգս, ջանասցուք զմնաւ ածել միշտ զօր մահուան մերոյ. այլ և խմաստուն ասէ. Յիշեա զվերջինս քո, և յաւիտեան ոչ մեղցես։ Ա՛յլ մի՛ զհետ երթիցուք ոմանց, որք փախչին ի յիշատակէ մահուան, ասելով, թէ այնպիսի մտածութիւն ծնանի զվհատութիւն և զտրտմութիւն. և այս սուտ է քարոզութիւն. վասն ձշմարիտ ուրախութիւնն և կեանքն կայանեայ յայս, զի խոտորեսցի ոք ի չարէն, և արասցէ զբարին. ոյլ մարգարէն ի հարցանելն թէ ո՞վ է մարդ՝ որ կամի զկեանս, և պեսանել զաւուրս բարութեան. պատասխանէ. Խոտորեա ի չարէն. և արա զբարի։ Ուստի յիշատակն մահուան տայ մեզ խոտորիլ ի չարէն, և առնել զբարին, որպես ասացաք ի վերոյ. ապա յիշատակն մահուան ոչ տրտմութիւն և զմահ, այլ զուրախութիւն և զկեանս ծնանի։

* * *

ԱՂՔԵՆաՔ կոչան առաքալի ին պէսքեամբ ֆոխեաց
պէրիպատարտ ոմն ի կար վարդաց
ի բարին։

ՀՐԱՇՔ ՃԻՒ

Զոր պատմեն աւետարանս միբեանն . և քրիստոսատումս
ենթևիվեցին ի գիրս իւրեանց : Եւ հայրն գառևոս բո-
վիեան . հատոր . Է . օրինակ . 6 : Եւ հայրն սիրվա-
նոս կամալդուլեցին ի ե . գիրս հրաշից սբ կուսին .
հրաշք . 31 :

Յամի փրկչին . 1161 . պատանի ոմն
արքայազարմ՝ անուն եսքիւոս՝ ա-
ռաքեցաւ ի հօրէն իւրմէ յոստանն գրոց
ի մայրաքաղաքն կոնդելեամիա՝ որ է ի սաք-
սոնիայ աշխարհին : Իբր անդ ի պատիւ
երեսաց հօրն մեծի իշխանին՝ տոհմաւ նմա
հարուստ թագաւոր իմն եկեղեցական : Ետայց
նա փոխանակ ի գործ ածելոյ զայն հա-
մեստաբար ի գործս բարիս , ի կիր առ-
նոյր ի փառամոլութիս , ի շռայտութիս ,
և ի պղծալից հեշտախառնութիս , ի գայ-
թակղութիւ բազմադակ քաղաքին , և յոր-
համարհանս արքայական զարմին իւրոյ :
Այն որոյ վաղվաղակի հարաւ յայ սոսկա-
լի և ծանր իմն հիւանդութիւ , որով ե-
հաս ի վախճան կենաց : Իբրդ՝ մինչ կայր
ի տապհնապի աւանդելոյ զհոգին պարտա-

եալ ՚ի քահանայից և ՚ի սիրելեաց իւրոց, յափշտակեցաւ հոգւովն ըստ երկար ժամանակ այնչափ, մինչև ամենեցունն համարիլ զնա մեռեալ։ Այլ անդ ՚ի յափշտակութեն կամ ՚ի տեսլեան իւրում ետես, զի ՚ի բնակարանսն միջոք ելանէր ծուխ ահագին և մեծին. և իբրև մերձեցաւ տեսանել թէ զի՞նչ իցէ այն, ահա արտաքս զեղեալ ահագին բոցոյ հրոյն յափըշտակեաց զնա, և եկուսկ անդր ՚ի ներքս ՚ի բնակարանն։ Այլ մինչ բոցոյակիզեալ լինէին իբր ՚ի դժոխս, և լայր և աղաղակէր, ետես զծակ իմն յանկեան միում. և դիմեալ անդր՝ եղ ըստ այն սողալով արտաքս, և վերծաւ ՚ի հրոյն։ Այլ մինչ փախուցեալ գնայր, ետես ՚ի ձմեռապարհին զմծակաւոյն պալատ իմն հիանալի. և եմուտ ՚ի ներքս տեսանել զգեղեցկութեն նորին. և իբրև եղ ըստ սանդուղսն ՚ի վեր, և եհաս ՚ի սրահ իմն մեծ, ետես, զի ահա նստեալ կայր անդ յաթոռ փառաց ամենայնի կոյսն պարառեալ յանհամար դասուց հրեշտակաց։ Այլ հայեցեալ ՚ի նա աչօք բարկութեն, ասէ ցնա. որպէս համարձակեցար մտանել այսր սուրբ պատկառ եղեռնապործ, և ոչ կարես երբեք առաջի իմ փախուցեալ հնարիւք ՚ի հրոյն. արդ հալածեա՛ ասաի փութով, և դարձիր անդրէն ՚ի հուրն յայն՝ վասն քոյոց պղծապործութեանց։ Յայնժամ պատանին եաքինոս անկեալ յերկիր՝ ասէ ցնա դառն

ար-

արտասուօք . Ներեա աղաչեմ տիրուհի՝
մայր ով քարձրելոյն , և ողորմեա ինձ ,
և մի առաքեր զիս անդրէն ի հուրն յայն
դժոխոց : Յորմէ զայս ասէր , եռեաւ՝ զի
կային անդ առաջի աթոռոյ սքի կուսին
երեք ոմանք , զորս քամ Ճանաչէր . որոց
միոն էր եպիսկոպոսն այնր քաղաքի .
միւսն դատապետն կանոնիկոս քահա-
նայից . և երրորդն մի ոմն ի սպասաւո-
րաց այնր եկեղեցւոյ . և անկեալ պա-
տանին առ ոտս նոցա , աղաչէր զնոսա լինիլ
բարեխօս վասն ինքեան առ մայրն նոցա : Յո-
նոցա լուեալ աղաչանաց նորա , ապաչէին զնոր
կոյսն գթալ ի վերայ նորա , և մի առաքել
զնա անդրէն ի դժոխս . և ասէին . ա-
ղաչեմք՝ տուր սմա տիրուհի զժամանակ
ապաշխարութեան . և մեք յուսամք , թէ
այսուհետև գայ նա ի յուղղուն վարուց ,
և լինի ջերմեռանդ առ քեզ : Յոր դարձ-
եալ առ պատանին , հարցանէն ցնա . ոչ
է այսպէս . և նա ասէ , այո՝ այսպէս է
ամ երանելի քարեխօսք իմ . ահա ուխտեմ
և երդնում առնել այնպէս՝ ամ գործդ
ասացիք : Յայնժամ ասէ ամենանաթ կոյսն
պատանին . ահա լուեալ աղաչանաց քա-
րեխօսացդ՝ ապատեմ զքեզ ի դժոխոց , և
թողում զմեղսդ՝ եթէ ապաշխես և դու ,
զոր քեզն ասեմ : Նմա պատանին . հրա-
մայեա տիրուհի . զի պատրաստ եմ կա-
տարել՝ զոր հրամայեան : Յոր սքի կոյսն
ասէ . այս են կամք իմ . զի հրաժարեալ

'ի չար վարուցդ՝ լինիցիս առ նա ջերմե-
ռանդ. և ես ժամնանակին տացես ինձ հինգ
գրիւն պէսպէս սերմանց. և պատանին ասէ,
այո՛ արարից այդպէս տէրուհի: Նա ասաց
օրհնեաց զնա նոր կոյսն, և ասէ. կեցցես,
և մի մեռչիս այժմ. և եղև անհետացեալ.
և գաղարեաց տեսիլն: Վարձեալ պա-
տանին 'ի յուշն, սկսաւ 'ի ձայն բարձր
աղաղակել, և ասել բազում անգամ.
օրհնեալ ես դուն, և նոր մայր նորա. որ
փրկեացն զիս 'ի հրոյն գժոխոց: Օ՜ որ
լուեալ չըլլակայիցեն, հիացան յոյժ. և
հաւրայանէին զպատճառն այնպէս աղաղա-
կելոյն. և նա պատմեաց կարգաւ զամ.
զոր եռես, և զոր լուաւ: Նա 'ի տարա-
կուսիլն նը, թէ զինչ նշանակեն հինգ
գրիւքն պէսպէս սերմանց՝ զոր նը կոյսն
խնդրեաց 'ի նմանէ, մի ոմն 'ի նոցանէ
լուսաւորեալ առ յոյն, ասէ. դուն մի ես
քիմոս, լինելոց ես եպիսկոպոս. և յայն
ժամ ծանուաւ քոյր պարտիս շինել 'ի պա-
տիւ նոյ և առնուանաբ կուսին՝ զհինգ եկե-
ղեցիս հանդերձ վեհաստանօք զանազան
կարգաց. զայս նշանակեն հինգ գրիւքն
սերմանց: Նա ոչ մեկնեաց երանելի այրն
այն, նոյնպէս և կատարեցաւ: Այլ յետ
ամաց ինչ ձեռնադրեցաւ եպիսկոպոս վե՛ա-
ռաքինի քաղաքավարուԹե՛ խրոյ՝ արքե-
պիսկոպոս եկեղեցւոյն լուսնդենանի. որ
է մայրաքաղաք գանխոյ. եղև և նախարգ
գանխոյ, և սկետիոյ, և առաքելական նուի-

րակ

բակ ամ հիւսիսային վերջին կղզեաց : Այլ
չինեաց ի գաւառն յայնոսիկ ոչ միայն
զհինգ եկեղեցիս՝ հանդերձ մենաստա-
նօք զանազան կարգաց , այլև զայլ բա-
զումն ի պատիւ այ և ամենայնի մօր նո՛ :
Այսաւ զբաշխումն ի յանհաւատս և ի կռա-
պաշտ ազգացն յայնպանէ գարձոյց ի
քրիստոնէական հաւատս : Այս լուեալ
զհամբաւս սրբութե՛ն այնր բեռնաւորեսի
աթբային , գնաց ի գաղղիա լինել անդ
կրօնաւոր առ ոտս սրբ աթբային . բայց
նա ոչ հաւանեցաւ այնմ բանի . այլ ա-
սէ ցնա . լաւ է քեզ ունիլ զհոգևորա-
կան հոգս պիտոյից այնոց Թագաւորու-
թե՛ն նորոգ ի հաւատս եկեղց , քան պա-
տուիլ ի մանաւոր հոգ քումդ հոգւոյ :
Ասաի դարձաւ վերստին ի դանիա . և
անդ կառավարեր մեծաւ չինութե՛ զհօտ
իւր յանձնեալ նմա ի նմէ : Սակայն իբ-
րև ծերացաւ յոյժ , գնաց անդրէն ի
գաղղիա ի մենաստան սրբոյն բեռնաւորդո-
սի ի պայծառաձորն . և եկաց անդ ամս
չորս ամ սրբութե վարուց . և ապա հանգ-
եաւ ի քո՛ :

Պատճառ.

Ի մէտ աճցուք և մեք հանապազ ըղ-
խոստութի տանջանացն դժոխոց . ոմանք
և մեք իբրև զայս երանելի եսքիմոս կա-
ցօղ լիցուք զերծանիլ յայնմանէ : Ասայց
ի մէտ առցուք և զայս , թէ առաւել
խիստ և խորին չար է մահուչափ մեղքն՝
քան զդժոխս : Ալ ընդ ի վէր այնը բանի
սաղմոսին . ջրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներք-
նոց , ասէն նբ վարդապետք , թէ ներքին
կամ խորին դժոխքս այս՝ յորմէ զերծաւ
մարգարէն , էր մեղքն չնուաճե և մար-
դասպանուե , զորոց ընկալաւ յայ զթո-
ղութի : Ալանզի որչափ հեռի և հակա-
ռակ կայ ինն այ բարձրելոյն , այնչափ
խոր և անդնդային ինչ է : Ասկ մեղքն
հեռի և հակառակ է յոյժ այ . ապա ա-
ռաւել խոր և դժնդակ է մեղքն քան
զդժոխս . յորմէ ինքն ամենագութն այ
զերծուացէ զամենեսին , որք ընթեռնուն
զայս գիրք :

Պատուհասել պատճեայ ամենայն հոյակ վնասս, որ պղծելին զաստուածս ձեր փոխիդ։

ՅՐՈՒՔ ԼԱՒ։

Ջոր պատմեն Ֆրանչիսկոս բրանկակեանն, և հայրն անտօնիոս ասինեչլին՝ ի գիւղս Իբրանց։ Եւ հայրն աղէքսանդրոս դիոտալևեան. հատոր. ն. Հատ. ։։ Եւ հայրն գաբրէս բովիևան. հատ. ֆ. օ. բնակ. ։5։

Ի թագաւորութեն նասլօլսոյ ի լեառն մի՝ ի մէջ քաղաքացն նոզալ և բէնեվենատոյ՝ կոչեցեալ լեառն կուսին յաղագս կառուցեալ գոլոյ անդ եկեղեցի մի յանուն ն՛ա ածածնին. և առ նմա ի մենաստան մի կրօնաւորաց կուսեցելոյ՝ ճգնաւորք լերինն կուսին։ Ո՛րդ՝ յամս մամի քանի ինչ անգամ՝ գնային յուխտ ն՛ա ածածնին կեղեցին յայն՝ այնչափ բազմութիւք ժողովրդոց, մինչև Հարկ եղև կառուցանել առ մենաստանաւն զիջևան մի մեծ վն՛ քնակելոց անդ ուխտաւորաց արանց և կանանց, զոր և կառուցին ան՛ի քարանց՝ այլ՝ ի փայտէ։ Ո՛պա յամի փրկչին. ։6։։. ի հակման ոճոյն սքոյ պետրէ կոստաէին գտան անդ ուխտաւորք ուրեն հազար՝ արք և կանայք. որք ոչ եթէ պարապէին անդ ջերմեռանդութեաց, այլ խենեշուեց. քանզի յեկեղեցւոջ անօրինեն յայրատ հայեց-

ուծածովք , և անառակ խօսակցութիքք. շուրջ զեկեղեցեաւն Հարմամբք նուագաց , և ցցովք , և պարուք , և կաքաւամամբք. իսկ 'ի յիջեվանն՝ շնայուքք , և արբեցուքք , և անօրէն խառնակուքք։ Ա՛ւ ահա այսպիսի ներհակաց պատրաստուքն լինէր ժողովրդեանն այնորիկ առ'ի ընդունիլ զնորս յաջորդ աւուրն ։ Ա՛յլ՝ մինչ սոքունքն 'ի գիշերին յայնմիկ խոնջք յարբեցուքէ և 'ի խաղուց կաքաւամանց մտին 'ի քուն , և էր իբր կէս գիշերոյ , բորբոքեցաւ յանկարծակի հուր 'ի մեծ իջեվանն յայն . և այրեաց ջնջեաց զնա բովանդակ 'ի միջոցի միոյ ժամու և կէսոյ . և ոչ գտանելով ժողովրդեանն զբաւական ժամանակ փախատեան , մեռան 'ի նոցանէ ոգիք իբր հազար և հինգ հարիւր . կէսք 'ի հրոյն , և կէսք ընդ փլատակօք ։ Ա՛սկ թէ զայս հուր բորբոքեաց ինքն սատանայ կոյսն՝ մնայրն ողորմուէ , որ յայս նուագ եղև մայր բարկութէն և վրիժուց , յայտ աստի է , զի սրբ հինգ՝ որք անվեհաս մնացին 'ի հրդեհէն յայնմանէ , երդմամբ վկայեցին , թէ տեսաք զջօք մերովք , զի էրկնից ՚ոք կոյս ածաճին , և ունէր յերկոսին ձեռն իւր զերկու կերոնս վառեալս . և մատուցեալ բորբոքեաց նոքօք զայն հուր յիջեվանն յայն ։ Ա՛յլ սակայն կոյսն սատանայութէ յայս գործ արդար վրիժուց իւրոյ ընդդէմ մեզապարտից ոչ պակասեցաւ 'ի ցու-

ցա-

ցանելոյ նաև զգուեթ իւր առ անմեղս . որ
և եղև այսպէս : Ի մէջ ելելոյն յուխտ ի
լեառն ՚ի՛ կուսին էր և պարան սմին անուն
աղէքսանդրոս՝ մականուանեալ կապտոնա-
զեան , այր մեծազդի ՚ի քաղաքին պու-
տէոլայ , որ վեց մղոնաւ հեռի է ՚ի նա-
պօլսոյ : Այս ըն իւր տարեալ էր և զօրդին
իւր անուն Ֆրանչիսկոս մանուկ արդար՝
և յոր իբրև զհրեշտակ , և յոյժ ջերմե-
ռանդ առ ՚ի՛ կոյս Աստուածոյին . որ և ՚ի
պատիւ նորին քայ ՚ի քաղուամ աղօթից և
վարդապետանայ , զորս ասեր , պահէր և
պահս աւուրս երիս յամուամ եօթնեկի .
այլև յայնմ ամի կամեցաւ ՚ի պատիւ ա-
ւետեաց ՚ի՛ կուսին , որ յերեքշաբաթի
աւուրն ունէր պատահիլ, հրաժարիլ զամն
ողջոյն՝ի մեղկենաց յերեքշաբաթի աւուրս .
բայց ոչ թոյլ ետուն նմա ծնօղքն վասն
մանկական տիոց նորին , զի եր դեռ ա-
մաց մետասանից : Զրդ՚ի գիշերին յայնմիկ՝
յորում պատահեցաւ հրդեհն վերոյասաց-
եալ , այս մանուկ և հայր իւր՝ոչ ՚ի յիջևանն՝
այլ ՚ի ներքս ՚ի մենաստանին ննջէին ՚ի
սենեկի խիրճ ձգնաւորաց : Այլ ՚ի զգ-
ղզմանե հրդեհին և յաղաղակե ժո-
ղովրդեանն զարթուցեալ երկոցունցն և ս ,
դիմեցին ՚ի դուռն մենաստանին՝ առ՚ի
փախչիլ , և գտանել զփրկուճի . վնզի բաց
և կայծակունք հրոյն երևէին լիզանել
նաև զմենաստանն ողջոյն : Այլ ոչ
խնդրեին զփրկուճի , գտին անդ զկո-

րուատ ։ Քանզի ՚ի նմին վայրկենի՝ յորում կամէին եւ դուռն արտաքս եդանել, ահա եւ առաջ ելանէր բազմաձի ժողովրդոյ չիսթե-լոյ արանց, և կանանց. որք իբրև զգա-հավէժ հոսանս ջուրց փախչէին մանանել ընդ դուռն ՚ի ներքս ՚ի մենաստանն առ՚ի ապրիլ ՚ի հրդեհէն ։ Յայսմ պատահմանն ամբոխին յափշտակեալս ոգորմելի մա-նուկն ՚ի խուռն ալեաց ժողովրդեան . և բաժանեալ ՚ի հօրէն , անկաւ ՚ի գետին. և լինէր կոխոտեալ ՚ի խուռնէ ժողովրդ-եանն . և ոչ կարէր յոտն կալ. և Թէ-պէտ կոչէր զհայրն յօգնութիւն , բայց և ոչ նա կարէր օգնել ինչ նմա . զի ընդ կրունկն յետս տարեալ լինէր յամբոխէն ։ Որդ իբրև ետես մանուկն , Թէ չիք նմա օգնութիւն առ՚ի մարդկանէ , և ահա ձիւլն իբր զխաղող եւ ոտիւք մարդկանց կենդան-եալ , և եւ ծանրութիւն մեռելոյ , որք մեռա-նէին ՚ի խուռնէ ժողովրդեանն զվիմեամբք եղելոյ , և դեղադէզ կուտեալ լինէին ՚ի վէր իբր , կոչեալ յօգնութիւն իւր զամե-նաճոռ կոյսն . և ուխտեալ ուխտ պահել պահս յերեքշաբաթի առաւօտս այնր տար-ւոյ . սա և յառաջագոյն կամէր , որում ոչ Թոյլ ետուն ծնողքն իւր ։ Իբրև կա-տարեալ զուխտն , և կայր իբր Թաղեալ ընդ գիակամբք մեռելոյ , և միայն զվի քաղուկն ունէր ապատ , ահա եկն եկաց առաջի նր տիկին ոմն վեհափառ՝ զգեցեալ հանդերձս այլատարազ ՚ի կանանց այնր

դա-

գաւառին. և հայեցեալ ի մանուկն գթալ
ևոյց առաջ, ասէ ցնա. զինչ գործես ասա մա-
նուկ գու. արի յոտն կաց, և փախիր աս-
տի. և մանուկն ասէ. ոչ կարեմ յառնել
աւրուհի, զի ահա ձմրեալ կամ, և սպառին
ոտիք իմ: Յայնժամ տիկինն այն կալաւ
զբազկէ նր, և քարշեալ զնա արտաքս ի
ներքոյ դիահանդն, տարաւ էհան զնա ի
տեղի բարձր և ապահով ընդ կամարաւ ի-
փք. և Թողեալ զնա անդ, եղև անե-
ւոյթ յաչաց մանկանն: Իսկ իբրև ա-
ռաւօտ եղև, և ծագեաց արև ի հրա-
շափառ աւուրն սքի պենտեկոստէին, աս-
տուածն իջեալն այն մեծակառոյց հուրբ
պատեալ, և լեալ գերեզման մեռելոց. և
առ դրան մենաստանին դէզ դիահանդ
մեռելոց զմիմեամբք կուտելոց. և երևէին
մարդիքն կէսք կիսայրեացք, կէսք խեղա-
եալք, կէսք կուրացեալք, և կէսք իբ-
րև զեԹովպացիս սևացեալք. և կային
ամենեքեան յողբս արտասուաց. և խոստո-
վան լինէին, Թէ այն էր պատիժ պատու-
հասին այ և ամենանր մարդն վն մեղայն
գործեցելոց ի նր տեղին յայն: Ասաի էր՝
որ լայր վն կնոջն կորուսելոց. էր՝ որ լայր
վասն առն. էր՝ որ լայր վն եղբօրն և
քեռն. և էր՝ որ լայր վն որդւոյն: Այ
ի մէջ սր էր մեծազգի պարանն վերայ-
գրեալ, որ իբրև առաւօտ եղև էին
խնդրել ի մէջ մեռելոց զգի որդւոյն իւ-
րոյ Փրանչիսկոսի առ ի Թաղել զնա: Այլ

մինչ լալով ՚որոներ զմնարմին որդւոյն ՚ի մէջ դիականցն անկելոց, լուաւ ձայն, որ ասէ, աստ եմ ես հայրը իմ։ Ո՞ւ այս ձայն հիացեալ և ուրախացեալ ազնուական, ամբարձ զաչս իւր. և հառեաց զորդին կալ ընդ կամարաւն. և վազվազակի ՚ի ծունկս իջեալ, համբուրեր զերկիր և գոհանայր զՏէրն. և ապա մատուցեալ առ որդին, հարց ցնա և ասէ. ո՞րպէս կենդանի մնացեր որդեակ. և ո՞ էհան զքեզ յայդ բարձր տեղւոյ։ Իսկ որդին պատմեաց անտի իբր յամպխոնէ զերեւիլն նմա տիկնոջ միոյ, և զքարշելն զնա արտաքս ՚ի ներքոյ դիականց, և զտանիլ Հաներէն զնա անդր, և զիսկոյն անհետանալ լինելին նորին։ Յայնժամ ծանեաւ հայրն, թէ տիկնին այն էր նա կոյս ածածինն. և իջուցեալ զորդին ՚ի բարձր տեղւոջէն յայնմանէ, կալաւ զձեռանէ նորա. և գնացեալ մտին երկոքինն ևս յեկեղեցին տիրամօր նա կուսին, և մատուցին նմա զանբաւ գոհութիւս։ Եւ ապա դարձան եկին ուրախութի՛ ՚ի քաղաք և ՚ի տուն իւրեանց. և որդին հաւանութի՛ հօրն յամ երեքշաբաթի աւուրս այնր տաբուդ պահեաց պահս առ՚ի կատարել զսխտ իւր, զոր ուխտեաց ամենայնա կուսին։

Պատ:

Յայսմանէ պատմութիւնէ ուսցուք և մեք պահել ամ՛ սրբութիւնք զաւուրս տօնից և կիւրակէից, եթէ ցանկամք չանկանիլ ընդ բարկութիւնն այ։ Այլ յաւուրս տօնից կանխեսցուք յեկեղեցին այ. ունկն դիցուք քարոզչաց. ընթերցցուք զհոգևոր գրեանս. և խօսակցաւք մեր եղիցի միշտ զհոգևորայ։ Իսկ որք յայսպիսի աւուրս պարապին արբեցութեանց, խրախճանաց, արգելեալ խաղուց, և ցոփ կենցաղավարուեց, կատարի առ նմա բան մարգարէին եսայեայ, որ ասէ՝ ի դիմաց այ. Օ՜ տունն հեր ապեաց անէն իմ։

Վահանայ ոմն պապճառաս որսորդութեն՝ պապ-
ծեցաս ՚ի ինէ. Քայց օգնութեբ ամենասբ
հասին ղերծաս ՚ի պապծոյն։

ՅԱՒԵԼՎԱԾ ԱՒՕ։

Օսր պատմէ մեծն յովհաննէս ՚ի գիրքն իւր կոչեց-
եալ տեառապան օրինակաց • գլ• 73 • ԱյՀ Հայոյն գառ-
լոս բովիեան • հատոր • Բ• օրինակ • 21 •

Յամի փրկչին • 1553 • ՚ի մեծն սպա-
հնայ ՚ի գեղջ միում քաղաքին կոչեայ՝
էր ծերասէր քահանայ ոմն, որ սիրէր յոյժ
զորսորդսւի. և վն այն բազում անգամ ՚ի
լուսանալ աւուրն մերթ կանուխ, և մերթ
անագան պատարագէր, զի կարօղ լինիցի
երթալ յորս։ Եւսկ թէ այս գործ սրչափ
անվայելուչ իցէ քահանայից. (որովհետև
այսպիսիքս բազում անգամ առնեն զայն
արագ պատարագն, որ ասի յառակս՝ պա-
պարագ որսորդի. և բազում անգամ և վաս-
տակեալ և լքեալ գան մատուցանել զա-
հաւոր խորհուրդն՝ առանց պատշաճաւոր
պատրաստութեբ.) յայտ է ՚ի պատժոյն,
որով պատժեաց ոճծ զայս որսորդ քահա-
նայս։ Եւրդ՝ ՚ի հանգիստաւոր ոճնի միում
՚ի լուսանալ աւուրն կամեցաւ այս ծեր
քահանայ երթալ կանուխ յորս, և
ապա դառնալ և մատուցանել ՚ի պատա-
րագ։ Եւսաի ընկերակիցեալ ընդ ոմանց

գիւ-

գիւղականաց իւրոց, և առեալ զգործիս
պնդութեան ելս յորս։ Եւ ահա եհաս
վնասաստակ մի գեղեցիկ. և խնդրեաց
որսալ վնաս. բայց նապաստակն եմուտ ՚ի
բոյն իւր ՚ի փապարիկ լինն ոչ յոյժ լայն և
ոչ յոյժ խոր։ Եւ այս երբ դիւրն մտեալ
յայն կերպարան, ած յայտ է ՚ի յետա-
պայ բանիցս։ Եկեալ քահանային ՚ի բե-
րան փապարին, եհաս գաղեալ վնասպաս-
տակն ՚ի նմին. և ձգեաց զձեռն իւր ՚ի
նեղքս կալնուլ վնաս և քարշել արտաքս.
բայց ինքն կալեալ եղև ՚ի նմանէ. վնդն
կալաւ նապաստակն զձեռանէ և զբաղ-
կէ նր. և քարշեր ՚ի ներքս. և քահանային
ոչ կարեր զդէմ առնել կծլուէ նորա՝ որով
քարշէրն վնաս։ Եւ թեպետ նեղ էր բերան
փապարին լայնութիւն իբր թզոյ միոյ, բայց
երեք ալով երեք այր և լայնանայր, և զքա-
հանային բռնադակ մնալմունէ ՚ի ներքս
կլաներ։ Զգաղակեր ողորմելի քահանայն
առ ընկերս իւր՝ գալ օգնել նմա, և թա-
փել վնաս ՚ի ձեռաց նապաստակին. բայց
նոքա ահաբեկեալ ընդ այն տեսիլ՝ ոչ մեր-
ձենային ՚ի նա։ Ապա ակաւս քահանային
կոչել յօգնութիւն իւր զնոքս կոյս ածածինն,
(առնելով սեւեռեալ զմիտան ՚ի հրաշագործ
պատկեր լինն նր տիրամօրն, որ կայր յայն
կողմանս, և առնէր զբազում սքանչե-
լիս). և ասէ. ով ածածին կոյս մարիամ՝
ողորմեա ինձ և ապատեա զիս ՚ի գազա-
նէս յայսմանէ։ Եւ այնպէս անդադար
աղա-

աղաղակելովն, փոքր փոքր խրեցաւ ի ներքս
ի փապարն, և այլ ոչ երևեցաւ. և ձայն ա-
ղաղակին և փոքր փոքր երթայր, և մեղ-
մանայր, և իբր ի հեռատոնանէ լսել լինէր
մինչև խափան լինիլ անլսելի։ Ա՝տեան ըն-
կերքն ի բերան փապարին, և ոչ գտին
զքահանայն, այլ տեսին միմ մեծ և խորին,
և զահիհարել երկեան և փախեան. և եկ-
եալ ի գիւղն մահն յեկեղեցին, և պատ-
մեցին զայն սարսափելի կորուստ նորա
դիւրևկանացն, որք եկեալ ժողովեալ յե-
կեղեցին, մնային նմա առ ի տեսանել
զպատարագ։ Այլ իբրև լուան զայն,
զարհուրեցան յոյժ. և ծանեան թէ ած
պատժեաց զնա՝ ոչ միայն վասն զանցա-
ռութեանն սքի պատարագին, այլ և վասն
գործելոյն զգործ ծառայական որսոր-
դութեան յաւուր հանդիսաւոր տեառնի։
Եթէ այսորիկ իբրև անցին աւուրք չորք,
ահա քահանայն կորուսեալ եկն երևեցաւ
ժողովրդեան իբրեւմ իբր ի դժոխոց դար-
ձեալ, և իբր ի մեռելոց յարուցեալ. և
երեսք իւր էին սևացեալք ի բոցոյ հրոյն
իբրև սևագեմ եթովպացւոյ. և մնաց այն-
պէս սևագէմ զամ աւուրս կենաց իւրոց։
Ապա իսկայն գնաց առ հրաշագործ պատ-
կեր նը տիրամօրն, և մատոյց զանձաւ
գոհութեին առեներաբ կուսին՝ պատարա-
գին իւրեւմ. և անտի դարձեալ եկն յե-
կեղեցին իւր. և եղեալ յամպիոն՝ պատ-
մեաց կարգաւ առաջի բիւրաւոր ժողովրդ-

դոց եկեղց ՚ի տեսանել զնա և տեղեկա-
նալ անցից նր , զնմ զդիպուածն՝ որ դի-
պաւ նմա , և ասէ . վն անտի ինն հա-
ձուրեն որոց՝ ոմ ոճասեր ժողովուրդք ,
Թաղն զպաշտօնն ոյ , և եկի յօրս , և կա-
լեալ եղէ յարտոյն՝ զոր են կամէի որ-
սալ . և ածայ ՚ի տեղն ինն խաւարային ,
և կրեցի անդ տանջանս դառնագոյնս
գժոխոց ՚ի քաւանդակ աւուրս յայնոսիկ՝
Յորս մնացի անդ կենդանի . և ապա չը-
նորհօք ամենեցուն կուսին Հանեալ եղէ ան-
տի արտաքս , և եկի ՚ի տուն իմ : Ա.ՐԴ՝
եղբարք իմ սիրելիք , ուստարուք վճասուք
պատժոյ պատուհասին իմոյ՝ նր առնել
զաւուրս ծնանից և կիւրակէից . պահեցէք
զպատուիրանս ոյ և զեկեղեցւոյ նր . և
եկայք յեկեղեցի՝ տեսանել զպատարագ , և
կալ յունկնդրութիւն ածային ժամեր-
գութեց յաւուրս կիւրակէից յառաջ քան
զզբօսնուէն գինւոյ և իսկ օրինաւոր զբօսա-
նօք : Ա.Ն ՚ի վեր քան զնմ խրատեմ զձեզ
լինել ջերմեռանդ առ տիրամայրն նր կոյս
ածածինն . որոյ օգնութիւնն միայն կամ
ես այժմ կենդանի առ ՚ի ապաշխարել զը-
մեղս իմ , վն որոյ ապաւանի գտայ պատ-
ժիլ յաւիտենականապատր ՚ի գժոխս : Ա.Ն
զայս քարող տայր բազում՝ անդամ, և առ-
նէր զբազում օգտակար պատուիրս յամե-
նեսեան ՚ի նմ , որք միանգամ լսէին զբա-
նից նր , և տեսանէին զևս ացեալ դեմս
նորին :

Պատ։

Ա. ոգոնք և մեք մեզ ՚ի խրատ զչորեսին վերոյգրեալ քարի խրատս քահանայիս այսորիկ, զոր պատժովք իւրովք ուսեալ՝ ուսցեմք և ժողովրդեան իւրում։

Վ. ՚ղէանգէս Երիսաարդն արդեալարմ՝ ապերախտ գրեալ օգնուէ ամենաբ կոսին, պատ-
ձեալ Լարալար։

ՀՐԱՀԱՆԳԱՒՈՐ ՎԱՃԱՌ։

Ջոր պատմէ յովհաննէս ալաղեան ՚ի ֆ. գիրս էսթ. գլ. 13։ Եւ հայկն դաւառս բովիեան. Տատոր. ֆ. օրինակ. 12։

Վաղիանգաս իշխանն զուսայ քաղաքին ռնգաբիոյ՝ ուներ զորդեակ մի ընտիր և գեղեցիկ հոգւով և մարմնով, որում՝ եդ զիւր անուն՝ վաղիանգաս։ Եւ յորժամ եղև մանուկն եօթն ամաց, կարգեաց նմա դաստիարակ զքահանայն մն գիտուն և առաքինի առ՚ի կրթել զորդին ՚ի վարս բարիս և ՚ի գիտութիւն։ Իսկ յորժամ էհաս մանուկն յարքունս չորեքտասան ամաց, առաքեաց զնա հայրն իւր ծառայիւք, և դաստիարակաւն հանդերձ ՚ի բուսա քաղաք՝ յարքունիս Թա-

գա-

գաւօրին, ուր յայնմ ժամանակի նստեալ
կայր. ոչ զի կալով ի սպասու արքային իբր
պաշտօնեայ յանդիմանակայ, ուսոյն ըստ այլ
աշխոյական մանկանց, զօրէնս և զկան-
գամանս արքունեաց։ Ընկալաւ արքայն
զպատանեակն վոլփանգոս ի պալատն ար-
քունի, և կարգեաց զնա ըստ պալատականս։
Այլ անդ պատանին ամ համեստութեամբ
և առաքինի վարուք. և էր յոյժ ջերմ-
ուանդ առ ամենայնէ կայան. և պարապէր
միշտ աղօթից, և ընթերցմանց գրոց. և
եղև սիրելի արքային, և ամ պալա-
տականացն։ Ետ կայր ի պալատին
յայնմիկ և այլ երիտասարդ ումն իշխա-
նորդի՝ աշխարհասեր և մոլի. որ կե-
նակցեալ ըստ վոլփանգոսի յորդորէր զնա
ի բաց կալ ի բարւոյ կրթութենէ իւրոյ,
ասելով, այդպիսի կրթութիւնք ոչ իշխա-
նաց և իշխանորդւոց, այլ՝ կրօնաւորաց
և խղճահար կանանց վայելեն. և այնպէս
աշխատեցաւ, մինչև Հովհաննէս զնա ի
բարւոյ կրթութենէ իւրոյ։ Իբր թէպէտ
դառնութեամբ նոր ջանայր ածել զնա յա-
ռաջին կրթութի իւր, բայց ոչ կարաց։
Այլ յայսմանէ կայր ի նմին պալատի և
կին ումն անուն լուկրետիա՝ կին վաճառա-
որ ի սկզբանէ՝ ի տեսանելն զպատանին
վոլփանգոս՝ հարաւ դեղեցկութեամբ նորա.
բայց ոչ կարէր մերձենալ ի նա վն մե-
ծի համեստութենէ նորին։ Այս իբրև է-
տես, եթէ փոխեցաւ պատանին ի նախ-

կին ծանրակացուածից իւրոց, և առնէր
պաշտաբհատան ուրախութիւն և կայթ-
մուն, եթայ նմա նախ Թղթովք, և ա-
պա բանիւ բերանոյ՝ զաեր իւր, զոր ու-
նէր առ նա. և բորբոքեայ զայնպիսի վա-
ւաշոտ սէր առ ինքն ի սիրտ նր. մինչդի
յիմարիլ պատանւոյն սիրով նր, ոչ երբեք
բաժանէր ի նմանէ. այլ զուիս և զդիշեր
կայր առ նմա: Եւ ոչ կարային շիջուցանել
ի սրտէ պատանւոյն զսիրկծ սէրն՝ զոր կա-
լաւ ի լուկրետիայ՝ ոչ դատաստարակն՝ ոչ նա-
մակք հօրն՝ զոր գրեր առ նա հեռի կալ
ի նմանէ, և ոչ բանտարկուածն աբքային,
որով բանտարկեաց ի մենաստանի միւս
կուսանայ զվաշշոան լուկրետիա, սակայն
մի գացէ զնա պատանին: Այս ծած-
կաբար խորհրդակցեալ ընդ նմին լուկրե-
տիայ, կՀան զնա ի մենաստանէն, և փա-
խուցեալ գնայ ընդ նմա ի կոնդնիա քա-
ղաք գերմանացւոց. ուր եղոյց զնա գոլ
օրինաւոր ամուսին իւր. և անդ համար
ձակ կատարէր ընդ նմա զաւուանս գան-
կուածն իւրոյ. և կային միասին անդ յայս
դործ պղծութիւն՝ ասն երիս: Այլ տես-
ցուք այժմ, թէ զոր բարիս գիտէր ա-
րար ամենանաթ կոյսն և որդին նր Յրն մեր
առ վոլփանդոս, և զորպիսի ապերախտուիս
հատոյց նա ընդ երախտեաց նոցին: Յրևե-
ցաւ նմ յաւուր միում կոյսն. և ունէր
ի գրկին զնածորդին իւր ղՅն. և հայեց-
եալ ի նա մանկանն յն, ասէ ցնա առա-

տիւք

տիւք և քաղցրութիւն միանգամայն . Ո՛վ
անպիտան և ապերախտ . որպէս ևողիր ինձ ելիցայր
ից , և որպէս լուեր պմայրն իմ և պմայրն ից ի՞նչ
անամօթ վաւաշոտիդ լոուիբեսիայ . արդարև յոյժ
բարկացեալ եմ ի՞եղ , այլ ե՛ի բայ ևողդ ինձ վա-
ղվաղուիդ այդորիկ . և ես ևողիդ ելիցս ից , և հաշ-
տեցայց ընդ ի՞եղ . ե՛կ դարձիր առ հայր ից եր-
բեմն պանասակ ողորմի , և ես եղէց երաշխաւոր հաշ-
տեցուցանել զքեզ ընդ նմա . և զայս ասաց
ցեալ՝ եղև անտերևոյթ : Ոսկ անօրէնն վոլ-
փանդաս ոչ միայն ոչ կակղացաւ յայսպի-
սի սիրալիրական բանից նմա , և ոչ միակ-
նեցաւ ի սիրոյ Համանուէն իւրոյ , այլև իբ-
րև իժ խոցեալ զանգիա իւր , պարապեր
անընդհատ ընդ նմա ի նոյն գործ պղծուե :
Ա՚ն այսորիկ նաև գթաւ ի նմա փոխարկեցաւ
ի վէր նի՛ի վրէժխնդրուե արդարուե . և ե-
ղև այսպէս : Յաւուր միում միոմն ի բարե-
կամաց նր Հրաւիրեալ տարաւ զնա ի Ճաշ
սրտաքոյ քաղաքին ի տուն մի , որ Հեռի
էր ի քաղաքէն մէնաս իբրև երիս . և լուկ-
րետիա միայց ի քաղաքին : Ընդ վոլփան-
գոս և բարեկամ իւր կերին և արբին . և
կային յուրախութիւն մինչև յերեկոյ . և
ապա մնացեալ անդ գայն գիշեր , ելին յան-
կողնին և ի քուն մտին : Եւ ահա ի մէջ
գիշերին սկսաւ տունն շարժիլ ի հիմանց ,
և տարուբերեալ երերայր , և մերձ էր ի
կործանիլ : Զարթուցեալ երկոցունցն
ևս ի քնոյն , զարհուրեցան յոյժ , և սկսան
աղաղակել . աղաղակեր բարեկամին և ա-

սէր, ՚ի՛ ողորմեա՛, ՚ի՛ յի՛ ողորմեա՛։ Եւ
վոլփանգոս ո՛չ զի՛նչ, այլ զհամանկին իւր կո-
չէր ասելով. ով Լուկրետիա, Լուկրետիա,
ո՛ւր եա՛ փրեվլի իմ Լուկրետիա։ Եւ մինչ այս-
պէս աղաղակէին, լո՛ւան զձայն ահեղագո՛ղ
փողոյ և թմբկի. և քանզաւ նոյնժամայն
մինն յորմոց սենեկին, և լցաւ սենեակն
գաթշահուտ ծխով. և ասպա եկին մտին
՚ի ներքս բազմութի՛ւնք զարհուրե՛լի գաղա-
նաց, ո՛ւր առիւծուց, արջուց, և վիշա-
պաց դժոխայնոց, և կրձտէին զատա-
մունս ՚ի վե՛ր վոլփանգոսի։ Չէա այսպիսիկ
տեսին, զի ահա գայր զՀեա նոցա այր
ոմն հսկայաձև և ձառագէմ, և ունէր
գաւազան ՚ի ձեռին, և բանայր ձանա-
պարհ։ Եւ ապա տեսին, զի ամբ չորք
սեադէմք բարձեալ բերէին զդագաղս
հրեղէն, յորում կայր վավաշոտն Լուկրե-
տիա, զոր ՚ի քաղաքէն կենդանւոյն կալեալ
և եդեալ յայն դագաղն բերէին անդր, ար և
բոցակիզեալ լինէր ՚ի հրոյ, և աղաղա-
կէր և հայհոյէր և անիծանէր զօր ծընն-
դեան իւրոյ։ Եւ եդեալ զդագաղն ՚ի
միջին տեղւոջ սենեկին, աղաղակեալ միմն
՚ի սեադէմ արանցն յայնոցանէ և ասէ.
Ահա ե՛ս վձիռս պատուհասին այ, զի այս վավա-
շոտ էակ, և հոմանի՛ւք վոլփանգոս, որ ո՛չ լուան
յայնէ ա՛ն այ, մատնեցաք ՚ի հուրն յաւիտենական։
Եւ ասպա կալեալ զվոլփանգոս եդին ՚ի
նոյն դագաղն հրեղէն, և բարձին տա-
րան Թաղել ՚ի դժոխս։ Եւ այսպէս կոր-

եան

եան երկոքին ընդ հոգւով և մարմնով, և ամ տեսիլ գժոխայնոյն եղև աներևոյթ։ Խոկ ողբմելի բարեկամն վոլփանգոսի, որ ետես զայս ամ, զահի հարեալ անկաւ անդէն իբրև զմեռեալ, և ապա յարուցեալ եկն ի քալաքն, և պատմեր ամենեցուն զսարսափելի կորուստն վոլփանգոսի, և վախշտին լուկրետիայ։

Պոռաղ։

Սոսկալիս յոյժ զարհուրելի է պատմութիւնս, բայց սաստկապէս սարսափելի է խըստութիւնն և կուրութիւնն վոլփանգոսի, որ ոչ կակղացաւ և ոչ լուսաւորեցաւ յայնչափ սքանչելեացն այլ, և կատարեցաւ ի նմա բան սաղմոսին, որ ասէ. Խոտոռեցին ակն նոցա, չի ի տեսցեն։ Նա այս պատահեցաւ նմա յայտնապէս, զի ամ հոգւոյն յաղթեցաւ երթալ զհետ հեշտութեանց մարմնոյ, որպէս պատահեցաւ այս նաև իմաստնոյն սաղմոսին։ Յորմէ ինքն ամենագութն ձեզ փրկեսցէ ողբմութիւնք իւրով զամ ընթերցողս գրոյս. և տացէ նոցա զչնորհ ողջախոհ հոգւոյ։

Զարեհար պատճեցաւ ընթերցող ամէն ի հայկոյենէն
գիւղաղուրէ ամենաւբ կուսէն։

ՅԱՒԵԼՎԱԾ ՃԱԽՐԱՒ։

Զոր պատմէ հայրն ալեզայ ի գիրս իւր։ Եւ հայրն գառլոս բովենան • հատոր • է • օրինակ • 19։

Յամի փրկչէն • 1589 • ի պերոս յայ-
խարհէն հնդկաց՝ այր ոմն հնդիկ՝
այր հնաբարոյ բարքերեցաւ յոյժ ի սէր
ուրուն հնդիկ կնոջ քրիստոնեի, և եր-
կիւղածի ոյ, որ և էր ջերմեռանդ առ
նէ կոյս ածածինն։ Ուղղն աշխատեցաւ
այրն հնաբարոյ՝ պարզևօք և խոստմամբ
պեսպես իրաց, և դիւական խորամանկուբ՝
որպաւ զկինն ի պիղծ կամ իւր, բայց ոչ
կարաց։ Եւ իբրև եռես լեռ շողքորդուբ
և պարգևօք ոչ կարէ օրպաւ զնա, ակսաւ
բռնուբ և սպառնալեօք սպանանելոյ զնա՝
պնդիլ զհետ նորին՝ գարանակալ լինելով
նմա յանցս Հանապազորհաց • և այնպէս ա-
բար, մինչև երկուսեակ կինն ի մահուանէ
նէ՝ հաձեցաւ կատարել զպիղծ կամն նո-
ցին։ Ապա մինչ ի գիշերի միում մտեալ
այրն անօրէն ի տուն կնոջն, և ելեալ
յանկողնէն նր, ննջէր գարշ պղծուբեբ ընդ
նմա, ահա մեծայան երկինք, և սկսան
լինել ահարկու որոտմունք և փայլատակ-
մունք։

մունք . և կինն ահաբեկեալ ի ձայնէ նո-
յին , սկսաւ աղաղակել և ասել . ով ամե-
նաքաղցր կոյս Աստծին , մեղայ , մեղայ , ո-
ղորմեա աղաչեմ , և մի՛ ըստ մեղաց իմոց
պատժեր զիս : Իսկ այրն չնաքարոյ ասե-
ցեալ . զի՞ աղաղակես , և զո՞ր կուչես քեզ
յօգնութի՛ ով անմիտ . կուչես զԱստուածինդ , և
Տառապիս յիմաքաբար , թէ նա կարօղ իցէ
օգնել քեզ . մի՛ կարծեր այդպէս , մի՛ : Այլ
հաղիւ վերադեալ անօրէնն զհայհոյիչ բանս
իւր , և ահա էջ կայծակն ի՛ վերայ անկող-
նոյն , և էհար զնա , և անդէն սատակեալ .
և զպի՛ն ոչ յանկողնոյ անտի՛ ի բաց ընկէց
իբր կանգուն չորս : Իսկ կինն ոչինչ ինա-
սեալ . բայց կինն ի զարհուրանացն եղև
իբրև զմեռեալ . և ապա զգաստացեալ՝
սկսաւ լալ և մեծաձայն աղաղակել : Այլ
լուեալ դրացեացն զձայն աղաղակին նո՛ր , դի-
մեցին անդր . և գտին զայրն չնաքարոյ մե-
ռեալ և յածուխ փոխարկեալ . և սոսկացեալ
սաստանեցան : Այլ զի յայտնի երևեսցի ,
Թէ պատժեցաւ անօրէնն այն մանաւան-
դաւթս վրէ հայհոյութենն , որով հայհոյ-
եալ զկարողութի՛ ամենանաք կուսին , ա-
հա տեսին , զի բացեալ ուներ զբերանն .
և ոչ գոյին ի նմին ատամունքն , լեզուն ,
և շրթունքն , իսկ այլ անդամքն կային
իբրաբանչիւր ի տեղիս իւրեանց : Այլ ի
հիանալն նո՛ր , Թէ ուր են ատամունքն և
լեզու նո՛ր , պատմեաց կինն զբանս հայ-
հոյութե՛ն նո՛ր , յորմէ ծանեան ամենեքեան ,

Թէ

Թէ վն հայհոյութեն ի ծուխ փոխար-
կեալ էին այն անդամք նը : Այս բար-
ձեալ անտի զգարշելի դին նը , տարան թա-
ղեցին : Յոկ կինն ոլորմելի և պատրեալն
ի սպառնալեաց անօրինին այնորիկ՝ գնաց
նոյնժամայն յեկեղեցին , և անկեալ առ-
ոտս քահանային Հարց յաեան կարգին՝
խոստովանեցաւ զմեղս իւր , և արար պը-
տուղ արժանի ապաշխարութե :

Պատուհաս :

Ո՞զ՝ զոյշ լինցուք և մեք՝ չթողուլ անբա-
նաւոր ախտի զօրանալ ի մեզ . ոմն և ա-
ռաքեալն ասէ . Ի՞ նա ի մարդկանէ չեղէ ի
մարմնս չեր հնազանդիլ ցանկութեանց նը : Այլ
որ թողու ախտի խմիք զօրանալ ի վր իւր ,
յայնժամ թե և կամիցի , ոչ կարէ զերծանիլ
յայնմանէ : Այս որ չարագոյնն է , զի փոքր
փոքր ուռնակացեալ ի մեղս , ոչ ևս խղճէ ի
գործելն զչարն զայն . զորմէ և խնամտուն
ասէ . Ընդդէմ հասեալ է նորս չարեաց , արիա-
նէ . առակ . ժը . 3 : վն այն ամ հոգւով
պարտիմք աշխատիլ առ ի ընդդեմանալ
կրից և չար յոժարութեց մերոց . ոմզմի
մի կորուսցեն զմեզ :



Ամէն

Հաւատաւք ոմն ընդկոչ ամենայն հաւատն ընդ մեռանիլն գնաց ողիդ յարքայութիւնն երկնից։

ՅՈՒԼԻՈՍ ԱՓՈՓԻ

Ջոր պատմէ հայրն հռետորիտոս ի գերս իւր։ Եւ հայրն գաւառս բովիեան։ հատոր։ Է։ օրինակ։ 24։

Ի ուրումեք հռոմէական քահանայապետին առ միամիտ գլխաւոր քաղաքաւորն բազում՝ առք անօրինք ժողովեալ ի մի՝ առնէին զաւազակութիւնս անողորմս, և կողոպտէին զողորմելն անցաւորս այնոց վայրս։ Ի՞րդ՝ պատահեցաւ, զի յաւուր միում մինչ անցանէր ընդ այն վայր՝ կոյս աղջիկ ոմն աղքատ, և ջերմեռանդ ամենաքն կուսին, կալան զնա աւազակքն, և տարան առ աւազակապետն իւրեանց։ և նա հարեալ ի գեղեցկութէ կուսին, կամեցաւ բռնադատել զնա ի պղծութիւն։ Իսկ աղջիկն հառաչելով և լալով սկսաւ աղաչել զնա և ասէ։ Վա՛ սիրոյ ամենամաքուր կուսին մարիամա խնդրեմ ի քէն տէր, զի մի բռնաբարեալ տացես ինձ կուսութիւնն իմ, զոր պահեմ ուխտիւք նուիրել նմա իմոյ յիսի և ամենայնիւ մեր նորա։ Այլ մեծի աբանդելեացս հարժեալ աւազակին յարտասուս ախտացոյց աղաչանաց նորա, ասէ ցնա։ Մի երկնչիր

քոյր

քոյը իմ, զի ահա ՚ի պատիւ երեսաց ամե-
նաքն կուսին մարիամու՝ ոչ միայն ոչ կամիմ
մերձենալ ՚ի քեզ, այլ և ոչ թողից իմոցս մեր
ձենալ ՚ի քեզ։ Այլ զայս ի՞նչ խնդրեմ ՚ի
քէն, զի յանձն արասցես և զիս զմեղաւորս
նոյն ամենաքն կուսին՝ սիրելոյն քումդ։
Օ այս ասացեալ՝ եառ զաղջիկն և տարաւ
ՀՀան ՚ի Հանապարհն արքունի, և եթող
ազատ երթալ ՚ուր և կամիցի։ Իսկ ահա ՚ի
յետագայ գիշերին մինչ ննջէր աւազակն,
երևեցաւ նմա յայտնապէս ամենաքն կոյսն
քաղցր և հնօրհալի դիմօք. և ասէ ցնա
հնօրհակալ եմ զքէն, որ ՚ի պատիւ երեսաց
իմոց ոչ մերձեցար ՚ի կոյսն յայն ՚ի զերմե-
ռանդն իմ. բայց ՚ի միտ առ, զի ՚ի ժամա-
նակի իւրում հատուցից քեզ զվարձս այդր
գործոյ։ Օ այս ասաց նմա ամենաքն կոյսն.
և եղև անդրևոյթ։ Իսկ աւազակն զար-
թուցեալ ՚ի քնոյն, հիանայր յոյժ ընդ
երևելին նմա ամենաքն կուսին. և ընդ
հնօրհակալ լինելին զնմանէ. բայց ոչ հաս-
կանայր զմիտ վերջին բանիցն նմա, և ոչ
իսկ դադարեցաւ ՚ի չար գործոց աւազա-
կութեան իւրոց։ Եւ ապա զկնի ժամանա-
կաց մինչ կալեալ եղև ՚ի դատաւորաց տեղ-
ոյն, և դատապարտեցաւ առ ՚ի մահ՝ կա-
խել զփայտե։ Եւ ՚ուր՝ մինչ ել բարի սուղ-
րութեամբ քրիստոնէիցն արար քահանային
զխոստովանութեան մերոյ իւրոց, և կայր
միայր ՚ի բանտին առ ՚ի կախել ընդ ա-
ռաւօտն զփայտե, ահա ՚ի գիշերին յայն-

միկ գարձեալ երևեցաւ նիկամենաւրը կոյսն նոսին քաղցր կերպարանօք. և ասէ ցնա. Ձանաչեա զիս արդեօք։ Եւ աւազակն ասէ, Թուի ինձ, Թէ երբեմն տեսեալ եմ զքեզ։ Եւ նա կոյսն ասէ. արդարասես. այո՛ ես եմ այն կոյսն մարիամ մայրն աւր, որ երբեմն երևեցայ քեզ. և ահա այժմ եկի հատուցանել քեզ վճարման չքառնալ բարերդդ 'ի պատիւ երեսաց իմոց՝ զկոյս աղջիկն զայն զջերմեռանդն իմ, ոմն խոստացայ քեզ յայնժամ. և այս են վարձքն իմ, զի դու 'ի վաղիւն ոչնիս ընդ իրաւանց արդարուն՝ մեռանիլ կախեալ զփայտե. ես ընդառաջանիլ հոգւոյդ 'ի մնարինդդ, ընկալեալ զայն մուծիկ յարքայութիւն երկնից. և զայս ասացեալ՝ եղև անհետ յաչս։ Իսկ աւազակն լուեալ զայսպիսի բարի աւետիս 'ի բերանոյ նոյն ընդ կուսին, սթափեալ 'ի քնոյն, սկսաւ 'ի միոյ կողմանէ լալ զմեղս իւր դառն արտասուօք. և 'ի միւս կողմանէ խնդալ և ցնծալ վասն վրկուն հոգւոյն։ Եւ այնչափ եղև ուրախութիւն սրտին, մինչև զարթուցանելով զպահապանսն, հարցանէր ցնոսա, Թէ երբ լինելոց է առաւօտ. քանզի փութայր մեռանիլ ժամ մի յառաջ առ 'ի մտանել 'ի կեանսն յաւիտենից։ Եւ ապա աղաչեաց զնոսա կոչել անդր զքահանայն, զի ասէ, կամիմ վերստին խոստովանիլ զմեղս իմ, ոմանց գտայց գողորովին մաքուր, և այնպէս փոխեցայց յաստեացս։ Այս բան լուեալ պահապանացն, և տեսեալ զարտաս-

տասուհել նորին և զցնծալ, հիանալին. և
ապա ըստ լուսանալ աւուրն կոչեցին զնոս-
տովանահայրն. և աւազակն զկնի խոստո-
վանելոյն նմա վերստին զմեզս իւր՝ մեծաւ
զղջմամբ և դառն արտասուօք, պատմեաց
նմա կարգաւ զբան աղջկանն վերոյգրելոյ.
յր թէ ոչ զնաթարելոյն զնա, երևեա
յաւ նմա յայնժամ ամենայնք կոյսն, և եղև
չնորհակալ զնմանէ. և թէ ոչպէս վերստին
երևեցաւ նմ յայնմ գիշերի և խոստացաւ
մուծանել զհոգի նր ըստ բաժանելն 'ի մարմ-
նոյն՝ յարքայութիւն երկնից վն այնր գործոյ:
Ա՛չ յոյսդանէր զայնպիսի ուրախութի'ի գեմն
և փութայր 'ի մեռանիլ, մինչդեռ քահանայն
ապուշ մնայեալ ըստ այն ամ, զոր լուաւ,
դնծայր 'ի վր երջանիկ աւազակին: Ա՛չ ա-
պա ասէ ցքահանայն, աղաչեմ զքեզ հայր.
զի զայս ամ դիպուածս, զոր պատմեցի քեզ,
քարոզեացես ժողովրդեան 'ի փառս և 'ի
պատիւ ամենայնք կուսին, որ արար առիս
զայս մեծ բարեբարութի: Ցետ այսո-
րիկ հանեալ զաւազակն 'ի բանտէ, տա-
րան կախելոյն զփայտէ անդ 'ի մէջ հրա-
պարակի քաղաքին. ուր կայր բազմու-
թի յոյժ ժողովրդոց: Այլ զի յայնմ լի-
նելի անտարակոյս փրկութի հոգւոյն նո-
րին, եցոյց ինր և զայս սքանչելիս. զի
երբէք մեռեալ աւազակն կախեալ զփայտէ,
գեմք նր և պարանոցն և մարմինն ոչ այ-
լայլացուներցան, և ոչ օձացան, ոնդ լինի ամ
սոխորինակ կախելոց. այլ երևելին և-

րեսք

բեսք նորա զուարթագինք իբրև զերեսս հրեշտակի. և բովանդակ մարմինն սպիտակ և փայլուն իբրև զձիւն։ Նա ի հիանալն ամ ժողովրդեան վասն այսր բանի, յարեաւ քահանայն, և եկաց ի բարձր տեղւոջ. և պատմեաց ամ ժողովրդեանն զայն ամ, զոր վերագոյնդ գրեցաք, այն զկրկին անգամ երևիլն նմա ամենասքանչ հուսին, և զայլ բանսն։ Զոր լուեալ ժողովրդեանն զարմացան յոյժ. և ասէին ցմիմեանս. ահա այս է լեալ պատճառն, զի տեսանէաք զնա գալ և ելանել ի կախաղանն արտասուախառն ուրախութեամբ. և մատուցանէին զանբաւ գոհութիւնս այն, և ամենայնքն մեր նմա։

Պոռաղ։

Ասացուք և մեք յաւպակէ աստի մահացու ցանել զանկարգ ախորժակս սրտից մերոց ի պատիւ այն, և մեր նմա, ոչզի և մեք գայցուք զաղօրմանէ ի նոցանէ։ Այլ ոչ ասէ ումեր. Խոստով յաջորդէն զարթայուրիւն այ. այն նոքա, որք բուռն առնեն ինքեանց, և ոչ կատարեն զիւզս մարմնոյ, այլ բուռ առաքելոյն, ի խուչ հանեն զանձինս իւրեանց կարեօք և ցանկութեամբ հանդերձ. ոչ ա բարին ամենեքին ենք, որք բարձեալ ըզխաչ իւրեանց՝ գնացին վճետ Յիսուսեան։

Ա՛ղա-

ՀԱպաքեաց ամենասէր կոյսն պէտս ինչ ընդ ընծուածոյ՝
ի տաճկանէն , որոյ այլ նոր պէսպէս երթիւ-
նայր պատահիլ ինձ :

ՆՐՈՒՅՔ ՄԱՐԳԱՐԷ

Զորմէ գրի ի տարեգիրս յիւեան կարգին : Եւ զոր
պատմէ Հայրն գառնոյ բովանդան . հատ . Ե .
օրինակ . 9 :

Յամի վերկէին . 1612 . ի միում դղեկի մեծին սպանիոյ էր կին ոմն արամբի՝ կին բարեպաշտ , հասեստ՝ և յոյժ ջերմեռանդ առ ամենասքը կոյսն . Ւսկ այր նորա էր այր կասկածոտ , բարկայօղ , և յոյժ նախանձոտ : Ւրդ՝ պատահեցաւ , զի յաւուր միում կին ոմն ի դրացեաց նոցա կուռէ-յաւ ընդ բարեպաշտ կնոջն այսմիկ առաջի բազմուժ մարդկան . և կուէաց զնա ի մէջ այլ նախատական բանից իւրոց՝ բազ . և ասէ . ոչ ապաքէն զնամ զաճախ , զոր ունիս , ստացեալ ես յոյլոյ բազումք , և ոչ ի յաւէտ : Ւյն կինն բարեպաշտ մնայ յոյժ զամենի հարեալ վէմ այսր բանից առաջի բազմուժեն , բայց ոչ եթայց ամենեքին զբերան իւր . այլ շառաչունեալ եմուտ ի տուն իւր . և կացեալ յաղթեաց առ ամենասքը կոյսն , ասէ յաւաղին սըրտիւ . գիտես սէր նր կոյս ընծային զանմեղութիւն իմ . քեզ յանձնեմ լինիլ ինձ քա-

լը տա-

տադրոյ ընդդէմ զրպարտութ֊ենն, որ ա֊
րարաւ ինձ ։ Այսպէս ի յերեկոյանալ ա֊
ւուրն եկին այլք նոքա ի տունն. և լսեալ ի
դրացեացն զկռիւս նոցա, և զբոզ կոչիլն կնոջ
իւրոյ, և զբռաւսն նոքա առ չարախօսն պա֊
տասխանի վասն այնր բանի, բարկացաւ
յոյժ. և ասէ ի միտս իւր, սա չտալովն
զպատասխանի, ստուգեաց ի միտս ամ֊
բաստանին, թէ ստուգիւ բոզ իցէ. և կա֊
րելի է, թէ ըստ իրին և այնպէս է.
իսկ ինձ անտանելի է ունիլ զայսպիսի
կին շուն. ապա լաւ է կորուսանել զսա։
Ա՛յս հաստատեաց ի միտս իւր. և ըս֊
այնմ ակառս գՀետ լինիլ առ֊ի կորուսա֊
նել մահուամբ զկին իւր։ Ասաի դըրդ֊
եալ առաւել ի գիւղն, քան ի նախանձ֊
ոմէ պատուհոյն իւրոյ, ի յետագայ գիշե֊
րին մինչ ի քուն եին վաւակքն, կալաւ
զձեռանէ կնոջն, և տարաւ ի պարտէզ
տանն. և զկնի ասելոյն նմա քիւր քանս
անպաքկեշտ նախատանաց, էարկ պարան
ի պարանոց նր. և կախեաց զնա գծա֊
ռոյ միոջէ։ Իսկ նա իբրև զգաւն անմեղ
ոչ եթաց ամենևին զբերանն ընդդէմ առն,
այլ ի կախիլն ալաղակեաց և ասէ. օգ֊
նեա՛ ինձ Աբ կոյս ածածին։ Այս ահա ժա֊
մանեաց նմա Աբ կոյսն յօգնութ֊իւ. վճռէ
ընդ կախ մեալ նր յօդս, կտրեցաւ իսկոյն
պարանն, և կինն վերծեալ ի մահուա֊
նէ՝ էջ եկաց անվնաս ի վէր հողոյ։ Ա՛յս
տեսեալ առն ոչ միայն ոչ զադարեաց ի

չար խորհրդոց իւրոց, այլև ազգմամբ
պիղծն առաւել և չարագործեալ, յետ քա-
նի մի աւուրց էհան զնա խաբանօք ի
տանէն. և տարաւ ի բարձր սոսկալի սա-
հուտ իմն տեղի առ ի գահավէժ առնել
զնա անտի՝ զի մեռցի, Որբև եկաց կինն
յայն տեղի, ծանեաւ զչար միտս առնն.
և սկսաւ վերստին աղաղակել առ նա կոյն
և ասէ. փրկեա զիս ի մահուընէս ով նը
կոյս ածածին, որովհետև գիտես զան-
մեղութի իմ: Նա լռեաւ նմա նը կոյն. և
փրկեաց զնա ի մահուընէ այսու կերպիւ.
Ցի զի Թէպետ այրն չորիցս, և հնգիցս ամ
զօրութբ իւրով Թէ ձեռօքն և Թէ ոտիւքն
մղեր զնա անկանիլ ի վայր, սակայն
աքանչելեօք առենառնբ կուսին կայր կինն
անչարժ ի տեղւոջ իւրում. և այսպէս
վերծաւ նաև յայսմ սոսկալի մահուընէս:
Նայց այրն և ոչ այսու աքանչելեօք մեղ-
մացաւ ի խորհրդոց իւրոց. այլ Քանայր
և խնդրեր որ և իցէ կարելի ձանապարհաւ
կորուսանել զկինն: Ցի այսորիկ իբրև
դարձան եկին ի տուն, և ի լինելգիշե-
րոյ կայր կինն ի քուն յանկողնի իւրում,
Եաւ այրն զատարձանակ իւր. ցի զապան-
չան, և եղիոյ զայն վառօթիւ և փոքրիկ
կապարօք, և ձեռնէարկ դատարկել զայն
ի կուրծս և ի սիրտ կնոջն: Նայց աքան-
չելեօք առենառնբ կուսին, որ պահէր զը-
ջերմեռանդն իւր ի մահուընէ, ոչ յայլե-
ւոց հուր ի կայծակնաքարէն, և ոչ լոր-
քո-

բռնեցաւ վառօթն։ Երիցս և չորիցս ջանայ այրն դատարկել զայն ի վի՛ կնոջն, բայց ամենևին ոչ ելանէր հուր ի կայծակնաքարէն. վն որոյ բարկացեալ ասէ. անիծեալ լիցի, որ չինեսցին զնոսա։ Եւ ապա՛ի բաց ձգեալ զայն, կատ զատրաձան իւր, ՚ի վի՛ֆէնկն, և եդեալ ՚ի նմ՛ վառօթն և զկտաւր մի մեծ, դատարկեաց զայն ՚ի կուրծս կնոջն։ Եւ թէպէտ գնատկն կապարեայ ոստուցեալ դիպաւ ՚ի կուրծս կնոջն, բայց և անդ երևեցաւ սքանչելիք ամենանք կուսին. զի իբրու թէ իցէ քամբակ իմն, և ոչ գնատակ կապարեայ, ոչ արար վնաս ինչ կնոջն, այլ անկաւ ընդ կողամբն յանկողնին նորին։ Օ այս տեսեալ այրն, սկսաւ իսկ ամ՛ յարբեցութենէ նախանձուն իւրոյ, և ծանեաւ զանմեղութենի կնոջն. և ՚ի զղջումն եկեալ վն անօրէնութենն՝ խնդրեաց զթողութի՛ ՚ի կնոջէն յաղագս այնքանիցս ջանալոյն սպանանել զնա։ Եւ ապա գնաց պատմեաց զայս ամ՛ դիպուած քահանայի միոջ հարց կարգին յեեան. և ընդ այլ մեղսոյն խոստովանեցաւ նաև զայս անօրէնութի՛ իւր, և ընկալաւ զարձակումն։ Եւ յետ այնորիկ կայր մեծաւ սիրով և խաղաղութի՛ ընդ ամ՛ոսեր կնոջ իւրում։ Եւ այսպա յետ բազում ժամանակաց Հանգեան երկոքինն ևս խաղաղութի՛ ՚ի քո՛։

Պատ.

Ասացուք և մեք, թայց մանաւանդ ուս-
ցին կանայք յերանելի կնոջէս յայսմանէ
տանիլ համբերութիւն ամ զրպարտական
բանից. ոչղի և մեք գտացուք բարիս յայ-
նս զի կարօղ լիցուք համբերութիւն կրել
զնախատինս յայլոց, յիշեացուք զծածուկ
արարեալ չարիս մեր: Վասղի ասէ սքն
գրիգոր. Տեսանելով զդէպարուեստ մեր, անդէղա-
գիեր լինիմք պահապանելոյ այլոց. և ընդհանագոյն
լինի հրեղէրպարուեստ, յորժամ հայիմք ի գործս
մեր. ընդ արջանի եմք խոտագոյն պատժոց: Այս
առաւել յաղթեսմք նախատիչն համբերե-
լով, քան թէ ըզ նախատանացս նմա տա-
լով նմա նախատինս. ոչ ասէ առաք-
եալն. Ոչ չաղնիր ի չարէն, այլ չաղնեա բար-
եաւն չարին:

ՀԱՐԲ ԱՒԵՆԱՆԱՑ ԿՈՅԱՆ ՂԵՒՈՊԱՄ ՇԱՐՔԻՆ ԱՓԱՆԷԼԵԱՑ
ԵՐԱՆԵԼԻ ՕՐԻՈՐԴԻՆ ԱՓԱՆԱՑ՝ ՀԵՐՄԵՈՒԱՆԴԻՆ ԻՒՐՈՑ ։

ՀՐԱՏ ԺԱՄ

Ջոր պատմէ Հայրն յովհաննէս Լսպէզեան ՚ի Գ . գիրս
Իւր . գլ . 69 ։ Եւ Հայրն գաւլոս բովիեան . Հատոր .
Ե . օրինակ . 30 ։

Ի մադրիդ արքայանիստ քաղաք մեծին սպանիոյ էր կոյս ազջիկ մի անուն ագաթա . որ յաղագս բազում հնդնու-թեց իւրոց կոչեցաւ յեսոյ՝ ագաթա խա-չակրօն ։ Այս աղջիկ սկսեալ ՚ի մանկու-թէ անաւր իւրմէ էր յոյժ ջերմեռանդ առ ամենասնեալ կոյս ծնածինն , և կայր առ նա յաղօթս գտիւ և զգիշեր . ուստի և ձգ կոյսն սիրէր զնա յոյժ . և վասն այնր եղոյց առ նա բազում չնորհս աքանչել-եաց . ոմն յայտ եղիցի ՚ի գրելոցս ։ Այսպէս ուրեմն սիրելի էր նա ամենասնեալ կուսին , այնչափ առեալ էր դիւբին . ոմն երևի ՚ի գրելոցս ։ Այդ՝ մինչդեռ մանուկ էր ա-գաթա , գնաց յաւուր միում ընդ աղջկանց Հասակակցաց իւրոց ՚ի զբօսանս արտա-քոյ քաղաքին ՚ի վայրս դալարիս . ուր ՚ի շրջագայելն այսր և անդր՝ ժամանեցին ՚ի վտանգաւոր գահավիժ տեղի մի . և անդ մինն ՚ի յաղջկանց՝ առ խաղալ փոքր մի ձեռամբն մերկացոյց զագաթա . այլ դևն սատակացուցել զմիրուն զոյն , եւս գահա-

վիժիլ նմ գլխի վայր. և մինչ վայրաբերիւր կախեալ լը օդս, ասէ ցաղախակեաց և ասէ, օգնեա ինձ տիրամայր նը կոյս ածածին: Եւ ահա երևեցաւ ակներև ամենեցունն սը կոյն. և կալաւ զնա ամենամբ ձեռօքն. և առանց իրիք ընասու իջոյց զնա ի վայր, և եդ ի վը հողոյ: Այս եղև առաջին փորձութին դիւին. իսկ և երկրորդն եղև նման սմին. և է այս: Յաւուր միում մինչ ագաթա նստեալ ի կառս ընդ փոքրիկ քեռիւրմ գնայր ի տեղի ինչ, և եկին ժամանեցին ի նեղ և զառի վայր անցք իմն ի Հանապարհին. անդ ազդմամբ դիւին կեցոյ ընկեցեալ ջորիքն դարձան լը կրունկս, և կառայն սահեալ ընդ զառի վայրն, շրջեցաւ, և ջորեօք Հանդերձ բերեալ լիներ ի խորխորատն: Յայնժամ աղաղակեաց ագաթա, և ասէ. օգնեա մեզ տիրամայր նը կոյս ածածին. և ահա առաքեաց նը կոյն զդունդս Հրեշտակաց, որք կալեալ զկառս և զջորիս Հանին յետիլ Հանապարհն. և առաջնորդեալ տարան Հասուցին անվնաս ի տեղին ուր երթալոցն էին: Եւ այսորիկ փորձեաց զնա դիւն և այլ իմն փորձութիւն, որ է այս: Մտեալ նենգաւորն ի կերպարանս մուրացիկ աղքատի, եկն ի դուռն տանն ագաթայ. և խնդրեր ի նմանէ ողորմութիւն զմանն ինչ երեշկի, յն սուՀուխ: Իսկ նա քանզի յոյժ ողորմած էր առ աղքատս, որ և զաժին կերլեաց իւրոց

տայր

տայր նոյ, և ոչ դարձուցանէր զերեսս ի նոցանէ, եառ ի ձեռին զդանակ, և եդ զանդրուկն, և էլ ի վեր նորա՝ հատանել մանն ինչ ի յերեկկէն, զոր ունէին. որ կախեալ կայր ընդ օդս: Յայնժամ գնաց ձևակերպեալն ազքատ, եկն կալաւ ընդ ականգուղն, զի մի անկցի ազջիկն ի վայր. և մինչ հատանէր ազաթա զերեկկէն, եւ հար գնաց ոտաւիւն զանդրուկն և ընդ նմին զադաթա, և ընկեց զնա ի գետին. և ե անկանելն փոխանակ զերեկկէն հատանէր՝ եառ նմա գնաց հատանել և ի բաց ընկենուլ զկեան մոյ ի մատանց ձեռին իւրոյ: Եւ սկսաւ հօսել վաճառականն յայնմ մատանէ, և աղբիւր արտասուաց յաչաց ազօրմելոյն ազաթայ՝ յաղագս ազխոլորմ ցաւոյ մնալոյն: Այլ սակայն նա իսկոյն յառաջ քան զայլ գեղս և զգաւմանս՝ դիմեաց յօդնուածն ամենայն կուսին վն բժշկութե վիրաց մտինն. և ահա երևեցաւ նմա անդ սքանչոյն, և եառ ձեռաքն գհատեալ մանն մատին նր, և մերձեցուցեալ ի հատեալ տեղին՝ միաւորեաց զայն և բժշկեաց քաղցրութիւն. և ապա միխիթարեալ զազաթան՝ ասէ ցնա, մի երկնչիր գնացար իմ ի դիհէնն, զի քանիցս հնարեսցէ նա քեզ չարիս, այնքանիցս փրկեսցէ զքեզ տէր յայնմանէ. և զայս ասացեալ՝ եղև անհետ:

Յետ այսցափիկ ժամանեալ ազաթայ յաքաւնս քան ամաց, սկսաւ խոշտանգել

զանձն պահօք և քրձովք, և ձաղկել ըզ-
մարմին իւր երկաթի ձաղկօվք մինչև
ցհեղուծն արեան : Լսէ տեսեալ կանանց
ոմանց բարեկամաց նէր զնիհարանալ նորին
և զաղաչալ վերայ մարմնոյն, զԹացան'ի
նա, և գողալեալ Թագուցին զգործիան
զայնոսիկ չարչարանաց : Լսէ ասկայն նա
քանզի ցանկայր առաւել և խոշտանկել
զմարմին իւր վն սիրոյն քրի, վն այսորիկ
արարեալ նա զայլ փոխանակ նէր, գնաց
քնակեցաւ առանձին 'ի յարդանոցի տան
իւրեանց . և անդ խոշտանկեր զմարմին
իւր ըստ հաճութեն : Լսակ դէն' որ հանա-
պազ դարանակալ էր նմին, արար յա-
ւուր միում փլանիլ միոյ 'ի յորմոց յար-
դանոցին 'ի վր նորա . և ազաեցաւ մեռց-
եալ 'ի ներքոյ փլատակին քանդակ մարմ-
նովն, և միայն գլուխն ազատ, դիմեաց
յօգնութի ամենանէր կուսին . և երբ կոյս
փրկեաց զնա, արտաքս հանեալ 'ի փլատա-
կէն առանց իրիք վնասու : Լսապա կատար-
եալ դիմին' սկսաւ Թոյլատուքեն նոյ փոր-
ձել զնա չարաչար պոռնկական խորհր-
դով զցայգ և զցերեկ : Լսակ երանելին ա-
գահաց դիմէր միշտ յօգնութի ամենանէր
կուսին, և աղաչէր զնա չվտղալ նմա յա-
Թիլ 'ի փորձութէն : Լսոչաւ աղաչանաց
նէր նոր կոյս . և երևեցաւ նմա . և կաց-
եալ ինքնին ամենանէր ձեռօքն իւրովք
զգօտի գեղեցիկ և պայծառ ըստ մեջ նէր :
Լսև յայնմհետէ ոչ ևս կրեաց զայնպիսի
մարմ-

մարմնական փորձուն , և զշարժումն ինչ անհամեստ ՚ի մարմնի իւրում պատ աւուրս կենաց իւրոց : Օգտ զատումն ընդ քանելեաց արար նա ածածկինն առ այս երանելի նա կոյս , որք վն հանառօտու- թե զանց արարեալ լինին ՚ի գրել ,

Պատճ :

Ոչ անասցուք և մեք ընդ օրինակի երանելի կուսիս այսորիկ առ ոտս կոխել զհեշտասիրութեն մեր . որովհետև ընդ առաքելոյն , հեշտասերքդ զարքայութենն ոչ ժառանգեն : Պատ այսու չարշաքիցուք , և այսու իբրև զվեմ կռանահար լինցուք . ոչ զի անդ կարօղ լինցուք իբրև զվեմ ողորկ և պատուական գնիլ ՚ի շինուած վերինն եկեղի : Ոչ զի ըստ առաքելոյն պղտոսի . Հաշտանայն չամախուրն ընդնեղուրեն գերոյ , ՚ի չատիպենականն առատելուրեն , պնեցուրեն փա- ռացն գործե ՚ի մեզ . 2 . կորն . ը . 17 ,

Տէրն ոճ անուն վիլեմէ՝ պանչելեօ ամենաքո
Իսահին ազատչայա Իսրայնովին հան-
դերձ՝ ի Հեսաց առապնիայ։

ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱՅՈՑ

Ջոր պատմէ հայրն Նիկողայոս ավետիսեցի՝ ի վարս սրբ աբբային գոթիխերեգոսի։ Եւ հայրն աղէքսանդրոս գիտուսլևեան. հատ. ը. ձառ. 24։

Տիկին ոմն աշխուժական և բարեպաշտ, անուն վիլեամ՝ մնաց այրի մինչդեռ մանկամարդ էր. և ունէր զսերա երիս գեղեցիկս և բարեպաշտս։ Վասն սա յետ ժամանակաց՝ հանդերձ դստերօքն յանխտեկեղեցւոյ իրիք ևս ուծացնին նորոգ չինելոյ մատ՝ ի քաղաքն սվեսիոն. ուր գործեր ամենայնք կոյան զմեծամեծ հրաշս։ Եւ անդ խորատուք սրբ աբբային գոթիխերեդոսի հրաժարեալ յաշխարհէ, եմուտ երիւք դստերօքն իւրովք հանդերձ՝ ի վանս կուսանաց. ուր և կային սրբուհիք վարուց իբրև զհրեշտակս երկնայինս։ Որք զինի ամաց ինչ պատահեցաւ, զի վն հարկաւոր հոգալի իրաց ինչ մենաստանին առաքեաց զնա աբբասուհին իւր՝ ի գերմանիա. զի եր կին յոյժ ձարտար՝ խոհեմ, և գիտակ լեզուին գերմանացւոց։ Եւ վերեւ՝ ի Հանապարհ ընկերակցութիք բազմաց հեծելոց. և այլ պատրաստութիքք Հանապարհի, և դրամոց։ Եւ գնաց զա-

ռա-

